

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինք
«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչ
Արամ Վարդևանյանից

Բարձր Դատարան,


Ի լրումն Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումի, հիմք ընդունելով տեխնիկական վրիպակի հանգամանքը, խնդրում եմ որպես սահմանադրական իրավական վեճի առարկա դիտարկել կից ներկայացվող դիմումը և դրան ընթացք տալ:

Հարգանքով՝



Արամ Վարդևանյան

19.06.2026թ.



ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինք
«Ուժեղ Հայաստան»
կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչ
Արամ Վարդևանյանից
(Հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա փ. 2.6, բն 11,
ծանուցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1)

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԴԻՄՈՒՄ

(Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշման հետ կապված վեճը լուծելու մասին)

Բարձր Դատարան,

Սույն դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 5-րդ կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի կարգավորումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 259-Ա որոշման հետ կապված վեճը լուծելու նպատակով:

Դիմումում ներկայացվում են ընտրական գործընթացի ամբողջ ընթացքում, ներառյալ քվեարկության օրվա և դրան հաջորդած ժամանակահատվածում առկա փաստերի վերաբերյալ տեղեկությունները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունիսի 12-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ներկայացրած դիմումի՝ ըստ էության չքննարկման և ոչ պատշաճ գնահատման խնդիրները, վարչական դատարանի առանձին դատական ակտերի և դրանց վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մեկնաբանությունների կամ պատշաճ մեկնաբանության բացակայության իրավական հետևանքները, ինչպես նաև ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու սահմանադրաիրավական հիմքերը:

1. Դիմումի քննության շրջանակներում էական հանգամանքները

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2026 թվականի փետրվարի 6-ի թիվ ՆՀ-21-Ն հրամանագրով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակվել է 2026 թվականի հունիսի 7-ին: Այդ պահից սկսած ընտրական գործընթացը պետք է գնահատվի պետության չեզոքության, ընտրական մրցակցության հավասարության և ընտրողի կամքի ազատ ձևավորման սահմանադրական պահանջների տեսանկյունից:

2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունները կայացել են 2026 թվականի հունիսի 7-ին: Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 14-ին ընդունել է՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշումը:

3. Թիվ 258-Ա որոշմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, կազմել է Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրության քվեարկության արդյունքների արձանագրություն: Նույն որոշմամբ արձանագրվել է, ի թիվս այլնի, ընտրողների ընդհանուր թիվը՝ 2,503,990, քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը՝ 1,476,769, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 16,210, անճշտությունների գումարային չափը՝ 4,331, իսկ «Ուժեղ Հայաստան» դաշինքի օգտին քվեարկված քվեաթերթիկների թիվը՝ 340,006:

4. Մինչ արդյունքների ամփոփումը՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի և 101-րդ հոդվածի հիմքով Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմում: Դիմումով ներկայացված հիմնարար խախտումները չեն սահմանափակվել առանձին ընտրական տեղամասերով, վերաբերել են ընտրական գործընթացի բոլոր փուլերին, կրել են համատարած և համակարգային բնույթ և էականորեն ազդել են քաղաքական մրցակցության պայմանների, ընտրողների կամքի ձևավորման, քվեարկության և արդյունքների ամփոփման վրա:

5. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի թիվ 258-Ա որոշմամբ փաստվել է, որ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով ներկայացվել են երկու դիմումներ՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Միասնության թևեր» կուսակցության կողմից, սակայն դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվել, և դրանք ներառվել են արդյունքների ամփոփման շրջանակում:

6. Թիվ 259-Ա որոշման եզրափակիչ մասով արձանագրվել է, որ Հայաստանի **Հանրապետության Ազգային ժողովն ընտրվել է և մանդատները բաշխվել են և**

արձանագրվել է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայացած հերթական ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա: Սույն դիմումով վիճարկվում է հենց այդ եզրահանգման սահմանադրականությունը և իրավաչափությունը:

7. Ընտրական գործընթացի ընթացքում և արդյունքների ամփոփման փուլում տեղի են ունեցել նաև առանձին տեղամասերում արդյունքների անվավեր ճանաչման դեպքեր: Մասնավորապես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 11-ի թիվ 254-Ա և 255-Ա որոշումներով անվավեր է ճանաչել համապատասխանաբար թիվ 35/65 և 10/51 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները, իսկ թիվ 12 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 12-ի թիվ 14-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել թիվ 12/13 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, սակայն, չի պարզաբանել, թե ինչու նույն բնույթի և առկա այլ բազմաթիվ խախտումները իրենց համակցությամբ չեն հանգեցնում Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմանը:

2. Իրավական դիրքորոշում և փաստերի վերաբերյալ տեղեկությունների շարադրում

2.1. Դիմումի ընդունելիությունը և թիվ 259-Ա որոշման վիճարկվող բնույթը

Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի թիվ 259-Ա որոշման հետ կապված վեճը, քանի որ այն հանդիսանում է Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներով ընդունված որոշում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի իմաստով Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճերով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն ընտրություններին մասնակցող կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները, իսկ որպես պատասխանող կողմ ներգրավվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը հանդիսացել է 2026 թվականի հունիսի 7-ի Ազգային ժողովի հերթական ընտրությունների մասնակից և իր սահմանադրական ու ընտրական իրավունքների, ինչպես նաև իր օգտին քվեարկած

ընտրողների քաղաքական կամարտահայտության պաշտպանության նպատակով իրավասու է դիմելու Սահմանադրական դատարան:

Թիվ 259-Ա որոշումը, որը փոխկապակցված է 258-Ա որոշման հետ՝ վիճարկվում է այնքանով, որքանով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ (ա) չի տվել ամբողջական և պատշաճ իրավական գնահատական «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ներկայացրած համակարգային խախտումների վերաբերյալ դիմումին, (բ) անհիմն մերժել է Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգի կիրառման անհրաժեշտությունը, (գ) վարչական դատարանի առանձին ակտերը և առանձին տեղամասերում արդյունքների անվավեր ճանաչման հանգամանքները գնահատել է ոչ թե ընտրական գործընթացի ամբողջականության, այլ մեկուսացված դրվագների տրամաբանությամբ, և (դ) ակնհայտ անհիմն կերպով եզրահանգել է, որ խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքների վրա, տեղի չեն ունեցել:

Սույն գործի սահմանադրաիրավական գնահատման համար էական նշանակություն ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած այն մոտեցումը, համաձայն որի՝ ազատ ընտրությունների իրավունքը չի սահմանափակվում միայն քվեարկության օրվա ընթացակարգային կողմով կամ քվեների վերջնական թվաքանակական հաշվարկով:¹ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ ընտրական գործընթացը պետք է ապահովի ժողովրդի կամքի ազատ արտահայտումը², ընտրական վարչարարության մարմինների թափանցիկ, անաչառ և քաղաքական մանիպուլյացիայից անկախ գործունեությունը³, ինչպես նաև ընտրական խախտումների վերաբերյալ բողոքների արդյունավետ քննությունը:⁴

3. Ընտրական գործընթացի ամբողջ ընթացքում արձանագրված էական և համակարգային խախտումները

3.1. Սահմանադրական դարարանին հասցեագրված դիմումի համառոտ ամփոփում

2026 թվականի հունիսի 7-ի ՀՀ ԱԺ ընտրությունների ողջ գործընթացում խաթարվել է ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածը, որը, որպես սահմանադրական կարգի հիմունք հանդիսացող նորմ, երաշխավորում է ընտրությունների հավասարության և օրինականության սկզբունքը: Մասնավորապես, ընտրական գործընթացի նախնական

¹ Namat Aliyev v. Azerbaijan, no. 18705/06, 8 April 2010, §§ 73-75, 81-90:

² Yabloko Russian United Democratic Party and Others v. Russia, no. 18860/07, 8 November 2016, § 66:

³ The Georgian Labour Party v. Georgia, no. 9103/04, 8 July 2008, §§ 101, 106; Gahramanli and Others v. Azerbaijan, no. 36503/11, 8 October 2015, §§ 75, 78:

⁴ Namat Aliyev v. Azerbaijan, no. 18705/06, 8 April 2010, §§ 81-90; Gahramanli and Others v. Azerbaijan, no. 36503/11, 8 October 2015, §§ 73-78:

փուլում պետական իշխանական լիազորություններով օժտված ուժի, ինչպես նաև դիմումում ներկայացված այլ առավելապես իրավասու պաշտոնատար և այլ անձանց կողմից իրականացվել են այնպիսի գործողություններ, որոնք խաթարել են ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի համար **հավասար հնարավորությունների սկզբունքը**: Ընտրություններից անմիջապես առաջ նախաձեռնված և իրականացված օրենսդրական և քաղաքական որոշումները, ինչպես նաև պետական ֆինանսական և վարչական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ արձանագրված փաստերը ձևավորել են իշխող քաղաքական ուժի և ընտրություններին մասնակցած Քաղաքացիական պայմանագիր կուսակցության համար ակնհայտ առավելություններ:

Նախընտրական քարոզչության ընթացքում **արձանագրվել են վարչական ռեսուրսի օգտագործման բազմաթիվ դեպքեր**, որոնք ներառել են պետական և համայնքային մարմինների, կրթական հաստատությունների, պետական ծառայողների և այլ հանրային ռեսուրսների ներգրավումը քաղաքական գործընթացներում: Նույն հանգամանքները հետագայում արձանագրվել են նաև միջազգային դիտորդական առաքելությունների կողմից:

Ընտրական գործընթացին միջամտության առանձին դրսևորումներ են արձանագրվել նաև իրավապահ մարմինների գործունեության շրջանակներում: Քրեական վարույթների և նախաքննական նյութերի հրապարակման եղանակը, ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի անվանումների հրապարակային շրջանառությունը, ինչպես նաև անմեղության կանխավարկածի սկզբունքի անտեսումը օբյեկտիվորեն նպաստել են քաղաքական մրցակցության անհավասարության խորացմանը:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը նաև ուղեկցվել է **վիրավորական, զրպարտչական և ատելության խոսք պարունակող քարոզչական նյութերի** լայն տարածմամբ: Միաժամանակ, արձանագրվել են Հանրային հեռուստաընկերության և տեսալսողական մեդիայի ոլորտում վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից հավասար և ոչ խտրական պայմաններ ապահովելու պարտականությունների պատշաճ չկատարման դեպքեր:

Քվեարկության և ձայների հաշվարկման փուլերում արձանագրվել են ընտրողների նույնականացման գործընթացի հետ կապված խնդիրներ, քվեարկության գաղտնիության պահպանման վերաբերյալ մտահոգություններ, զինծառայողների քվեարկության կազմակերպման հետ կապված խախտումներ, ընտրողների կամքի ազատ ձևավորման և արտահայտման վրա հնարավոր ազդեցության դեպքեր, վերահաշվարկների արդյունքում բացահայտված անհամապատասխանություններ և այլ էական խախտումներ: **Ավելին քվեարկության արդյունքների ամփոփման փուլում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից** ակնհայտորեն խախտվել է

Ընտրական օրենսգրքի ուղիղ ամրագրված նորմը վերաքվեարկության վերաբերյալ և հենց այդ գործողությունը ևս էական բացասական ազդեցություն է ունեցել ընտրությունների արդյունքների վրա առաջացնելով նաև հենց Սահմանադրական դատարանի կողմից հաղթահարման ենթակա վեճ:

Նշված հանգամանքների զգալի մասը հաստատվել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միջազգային դիտորդական առաքելության կողմից, որը արձանագրել է վարչական ռեսուրսի օգտագործման, պետական և կուսակցական գործունեության չտարանջատման, ընտրողների նկատմամբ ճնշումների, քվեարկության և ձայների հաշվարկի ընթացքում ընթացակարգային խախտումների, ինչպես նաև ընտրական գործընթացի նկատմամբ հավասար հնարավորությունների սկզբունքի խաթարման վերաբերյալ մի շարք փաստեր:

Հետևաբար, սույն դիմումով ներկայացված փաստական տվյալները վկայում են ոչ թե առանձին և պատահական խախտումների, այլ ընտրական գործընթացի ամբողջ ընթացքում դրսևորված համակարգային խնդիրների առկայության մասին, որոնք էական ազդեցություն են ունեցել ընտրությունների ազատության, հավասարության և արդարության վրա: Այսինքն ներկայացված ընտրախախտումներն ունեցել են այնպիսի բնույթ, և դրանց համադրումը թույլ է տալիս պնդել դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները:

3.2. Ընտրական գործընթացի նախնական փուլում հավասարության սկզբունքի խախտումները

Ազատ և արդար ընտրությունների կարևորագույն նախապայմաններից մեկը քաղաքական ուժերի համար **հավասար մրցակցային պայմանների ապահովումն է:** Այդ սկզբունքը բխում է ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից և «Ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքից, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից:

Ընտրական գործընթացի գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն քվեարկության օրը տեղի ունեցած իրադարձությունները, այլև ամբողջ նախընտրական միջավայրը, որի շրջանակներում ձևավորվել է ընտրողների քաղաքական կամքը:

Yabloko Russian United Democratic Party and Others v. Russia գործով ՄԻԵԴ-ը «Ժողովրդի կամքի ազատ արտահայտություն» հասկացությունը մեկնաբանել է լայն իմաստով՝ ընդգծելով, որ ընտրությունները չեն կարող անցկացվել **ճնշման որևէ ձևի** պայմաններում, և ընտրողը չպետք է անթույլատրելիորեն դրդվի քվեարկել այս կամ այն քաղաքական ուժի օգտին: Այս չափանիշի լույսի ներքո ընտրողի կամքի ազատ

արտահայտման վրա ազդեցություն կարող են ունենալ ոչ միայն քվեարկության օրը տեղամասում արձանագրված խախտումները, այլև ամբողջ նախընտրական միջավայրը՝ վարչական ռեսուրսի օգտագործումը, պետական մարմինների քաղաքականապես կողմնակալ վարքագիծը, իրավապահ մարմինների հրապարակումները, հանրային ռեսուրսների օգտագործմամբ ձևավորված առավելությունները, ընտրողների նկատմամբ ճնշումները և անթույլատրելի ուղղորդումները:⁵

Սույն ընտրական գործընթացի ընթացքում արձանագրված բազմաթիվ հանգամանքներ վկայում են, որ քաղաքական ուժերի միջև մրցակցությունը չի իրականացվել հավասար պայմաններում: Ընտրություններից անմիջապես առաջ իրականացված պետական միջամտությունները, պետական ռեսուրսների կիրառման ձևերը և պետական կառավարման համակարգի առանձին գործողությունները **փաստացի նպաստել են իշխող քաղաքական ուժի դիրքերի ամրապնդմանը:**

Հատկանշական է, որ նույնպիսի մտահոգություններ են արտահայտվել նաև միջազգային դիտորդական առաքելությունների կողմից, որոնք արձանագրել են ինչպես պետական ծառայողների նկատմամբ քաղաքական ճնշումների վերաբերյալ հաղորդումներ, այնպես էլ սոցիալական և տնտեսական միջոցառումների կիրառմամբ քաղաքական մրցակցության վրա ազդեցություն գործադրելու ռիսկեր:

Նշված հանգամանքները չեն կարող գնահատվել մեկուսացված կամ միմյանցից անջատ, այլ պետք է դիտարկվեն որպես ընտրական գործընթացի ընդհանուր միջավայրի բաղադրիչներ, քանի որ հենց այդ միջավայրն է որոշում՝ արդյոք ընտրողը իրական հնարավորություն ունեցել է իր քաղաքական կամքը ձևավորելու և արտահայտելու ազատ, հավասար և անթույլատրելի ազդեցություններից զերծ պայմաններում:

3.3. Ընտրական օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը քաղաքական մրցակցության վրա

Անտեսելով խորհրդարանական ընտրությունների օրենսդրական գործիքակազմին և էությանը միջամտելու սահմանափակումները՝ 2026 թվականի ապրիլի 7-ին նախաձեռնվել է Ազգային ժողովի արտահերթ նիստ, որի արդյունքում փոփոխություններ են կատարվել «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ մասում: Արդյունքում կուսակցությունների դաշինքի ձևաչափով ընտրություններին մասնակցելու դեպքում արգելվել է անձնանուն սահմանելը:

⁵ Yabloko Russian United Democratic Party and Others v. Russia, no. 18860/07, 8 November 2016, § 66:

Նշվածը պետք է դիտարկվի որպես **ընտրական իրավունքի հավասարության և ազատության սկզբունքների խախտում**⁶: Ընդ որում, տվյալ փոփոխությունն ընդունվել է առանց ընդդիմադիր խմբակցությունների մասնակցության կամ համաձայնության: Ուշագրավ է նաև, որ նախագծի քննարկման ընթացքում ուղղակիորեն արտահայտվել է փոփոխության իրական նպատակը՝ քաղաքական մրցակից ուժի գործունեությանը միջամտելու իմաստով: Մասնավորապես՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Լ. Մինասյանի կողմից նշվել էր. «Մեկ էլ էդքան ուժեղ եք, «Ուժեղ Հայաստան» կուսակցության ձեր ծրագրով գնացեք կրեք, թե՛ վախենում եք առանց մի անվանման, որ ընդհանրապես կապ չունի որևիցե ձև Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության հետ, առանց դրա չեք կարող որևիցե ձևով հաղթել ընտրությունները:»:

Հատկանշական է, որ 2026 թվականի ապրիլի 7-ին ընդունված նույն օրենսդրական փաթեթով փոփոխության են ենթարկվել նաև քվեաթերթիկի ձևին, լրացման կարգին և անվավեր ճանաչման հիմքերին վերաբերող դրույթները: Միաժամանակ, քաղաքացիների պատշաճ իրազեկման և փոփոխությունների վերաբերյալ լայնածավալ տեղեկատվական աշխատանքի բացակայության պայմաններում ընտրողների զգալի մասը չի ունեցել բավարար տեղեկացվածություն նոր կարգավորումների վերաբերյալ:

Արդյունքում, 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններում անվավեր քվեաթերթիկների թիվը կազմել է 16,210, ինչը էականորեն գերազանցում է Հայաստանի ընտրական պատմության վերջին տարիներին արձանագրված համադրելի ցուցանիշները: Համեմատության համար՝ 2021 թվականի Ազգային ժողովի ընտրություններում անվավեր է ճանաչվել 4,593 քվեաթերթիկ, իսկ 2018 թվականի ընտրություններում՝ 4,706 քվեաթերթիկ: **Այսպիսով, անվավեր քվեաթերթիկների թիվը գրեթե քառապատկվել է, ինչը հիմնավորում է այն մտահոգությունները, որ օրենսդրական փոփոխությունների և դրանց վերաբերյալ ընտրողների ոչ բավարար իրազեկման միջև առկա է անմիջական կապ, որն էական ազդեցություն է ունեցել ընտրողների կամքի ազատ և արդյունավետ արտահայտման իրավունքի իրացման վրա:**

⁶ Տե՛ս, օրինակ՝ Վենետիկի հանձնաժողովի (Եվրոպական հանձնաժողով հանուն ժողովրդավարության օրենքի միջոցով) «Ընտրության հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» 2.3. կետը.

«Հնարավորությունների հավասարություն

ա. Կուսակցությունների և թեկնածուների համար հավասարապես պետք է երաշխավորվի հնարավորությունների հավասարություն: Սա ենթադրում է պետական իշխանությունների կողմից չեզոք մոտեցում, մասնավորապես հետևյալ կետերի նկատմամբ.

i. ընտրարշավ,

ii. լրատվամիջոցների կողմից լուսաբանում, մասնավորապես հանրային սեփականություն հանդիսացող լրատվամիջոցների,

iii. կուսակցությունների և ընտրարշավների պետական ֆինանսավորում»:

Namat Aliyev v. Azerbaijan գործով ՄԻԵԴ-ի դիրքորոշման համաձայն՝ իրավասու մարմինը չի կարող ընտրական խախտումների նշանակությունը մերժել միայն վերջնական ձայների հարաբերակցության կամ թվային տարբերության հիմքով: **Նախ պետք է պատշաճ գնահատվի խախտումների լրջությունը, բնույթը, ծավալը և կրկնվող լինելը, և միայն դրանից հետո կարող է արվել եզրահանգում դրանց հնարավոր ազդեցության մասին: Հետևաբար ԿԸՀ-ի այն ընդհանուր եզրահանգումը, թե տեղի չեն ունեցել խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա, բավարար չէ, քանի դեռ ԿԸՀ-ն չի գնահատել անվավեր քվեաթերթիկների աննախադեպ թիվը, անճշտությունների չափը, վերահաշվարկներով բացահայտված անհամապատասխանությունները, առանձին տեղամասերում արդյունքների անվավեր ճանաչման փաստերը և դրանց համակցված ազդեցությունը ընտրողի կամքի ազատ արտահայտման ու արդյունքների վստահելիության վրա:**⁷

Այսպիսով, արձանագրված փաստն այն է, որ ընտրական գործընթացի արդեն մեկնարկած կամ դրան անմիջապես նախորդող փուլում փոփոխվել են ընտրություններին մասնակցելու և քվեաթերթիկի ձևավորման էական կանոնները, ընդ որում՝ այնպիսի եղանակով, որը անմիջականորեն առնչվել է ընդդիմադիր քաղաքական ուժի մասնակցության ձևաչափին և ընտրողի կողմից քվեարկության տեխնիկական իրացմանը:

Սահմանադրաիրավական առումով այս խախտումը նշանակություն է ստանում այն պատճառով, որ ընտրական մրցակցության կանոնները չեն կարող փոփոխվել այնպես, որ գործող քաղաքական մեծամասնությունը ստանա ընթացակարգային կամ տեղեկատվական առավելություն մյուս մասնակիցների նկատմամբ: Նման միջամտությունը խաթարում է քաղաքական ուժերի հավասար հնարավորությունները, քանի որ ընտրական գործընթացի կանոնները փաստացի գործարկվել են ոչ թե չեզոք և կանխատեսելի միջավայր ապահովելու, այլ կոնկրետ քաղաքական մրցակցության պայմանների վրա ազդելու տրամաբանությամբ:

Միաժամանակ, փոփոխությունների վերաբերյալ ընտրողների ոչ բավարար իրազեկումը և անվավեր քվեաթերթիկների աննախադեպ աճը վկայում են, որ ընտրողի կամքի արտահայտման արդյունավետությունը խաթարվել է: Այս պայմաններում խնդիրը չի սահմանափակվում միայն օրենսդրական տեխնիկայով, այլ վերածվում է ընտրողի ազատ կամքի ձևավորման և արտահայտման սահմանադրական երաշխիքի խախտման, քանի որ ընտրողը պետք է ունենա ոչ միայն քվեարկելու ֆորմալ հնարավորություն, այլև իր քվեն իրավաբանորեն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ բավարար տեղեկատվություն և հասկանալի **ընթացակարգային** պայմաններ:

⁷ Տե՛ս՝ Namat Aliyev v. Azerbaijan, no. 18705/06, 8 April 2010, §§ 74-75, 78-81, 83-90:

3.4. Ընտրություններից առաջ իրականացված սոցիալական և տնտեսական միջոցառումները

Վերը նշված քաղաքական և օրենսդրական անհավասար միջամտություններին հաջորդել է ի թիվս այլի 05.03.2026 թվականի կառավարության որոշմամբ⁸ կենսաթոշակների բարձրացումն այն պայմաններում, երբ այլևս ՀՀ Նախագահի կողմից հրապարակվել էր 2026 թվականի փետրվարի 6-ի թիվ ՆՀ-21-Ն հրամանագիրը, որով ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունը⁹ նշանակվել էր սույն թվականի հունիսի 7-ին: Հարկ է ընդգծել, որ կենսաթոշակների բարձրացումը տվյալ դեպքում չի կարող դիտարկվել մեկուսացված՝ որպես գործադիր իշխանության սովորական սոցիալական քաղաքականության իրականացում: Սոցիալական քաղաքականության իրականացումը, որպես այդպիսին, պետության իրավաչափ լիազորություն է, սակայն այն պահից, երբ ընտրությունները պաշտոնապես նշանակված են, պետական բյուջեի, սոցիալական վճարների և հանրային ֆինանսական միջոցների օգտագործումը պետք է ենթարկվի առավել խիստ գնահատման՝ պետության չեզոքության, ընտրական մրցակցության հավասարության և ընտրողի կամքի ազատ ձևավորման տեսանկյունից:

Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ «վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ: Արգելվում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հարուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝

1) հանրային ծառայության մեջ գտնվողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական

⁸ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2026/03/05/Cabinet-meeting/>

⁹ Տե՛ս, օրինակ՝ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2026/03/05/Cabinet-meeting/>

ուսումնական հասարակությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս...»

Միջազգային ընտրական չափանիշներով ևս, պետությունը պարտավոր է ապահովել հստակ տարանջատում պետության և քաղաքական կուսակցությունների միջև, իսկ ընտրական գործընթացում կուսակցությունները պետք է մրցակցեն իշխանությունների կողմից հավասար վերաբերմունքի պայմաններում: ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթուղթը¹⁰ հստակ սահմանում է պետության և կուսակցությունների տարանջատման պարտականությունը, ինչպես նաև պահանջում է, որ օրենքն ու հանրային քաղաքականությունը հնարավորություն տան քարոզարշավն իրականացնել ազատ և արդար մթնոլորտում, որտեղ վարչական գործողությունը չի խոչընդոտում կուսակցությունների մրցակցությանը և ընտրողների ազատ կամքի ձևավորմանը:

Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» համաձայն՝ կուսակցությունների և թեկնածուների համար պետք է երաշխավորվի հնարավորությունների հավասարություն, ինչը ենթադրում է պետական իշխանությունների չեզոք վերաբերմունք, այդ թվում՝ ընտրարշավի և կուսակցությունների ու թեկնածուների ֆինանսավորման հարցերում: Նույն փաստաթուղթը ազատ ընտրական իրավունքի բաղադրիչ է համարում ընտրողի կարծիքի ազատ ձևավորումը և պարտադրում է պետական իշխանություններին պահպանել չեզոքության պարտականությունը:¹¹

Այս չափանիշների լույսի ներքո կենսաթոշակների բարձրացումը հատկապես խնդրահարույց է այն պատճառով, որ այն իրականացվել է հերթական ընտրությունների նշանակման մասին ՀՀ Նախագահի հրամանագրի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ արդեն մեկնարկած ընտրական գործընթացի պայմաններում, և ուղղված է եղել լայն, սոցիալապես զգայուն և ընտրական վարքագծի վրա ազդեցության տեսանկյունից առանձնապես խոցելի ընտրողների խմբին: Այդպիսի սոցիալական վճարի բարձրացումը, եթե այն նախապես ամրագրված չէ Կառավարության ծրագրով, չունի ընտրական գործընթացից անկախ, նախապես կանխատեսելի և հիմնավորված սոցիալ-տնտեսական հրատապություն, օբյեկտիվորեն վերաժվում է գործող իշխանության օգտին նյութական բնույթի ընտրական առավելության:

Այսպիսով, արձանագրված փաստն այն է, որ ընտրությունների նշանակվելուց հետո գործադիր իշխանության կողմից իրականացվել է սոցիալական բնույթի այնպիսի միջոցառում, որն ուղղված է եղել ընտրողների լայն և սոցիալապես զգայուն խմբի:

¹⁰ <https://odhr.osce.org/odhr/elections/14304>

¹¹ https://www.venice.coe.int/images/SITE%20IMAGES/Publications/Code_conduite_PREMS%20026115%20GBR.pdf

Այդ հանգամանքը սահմանադրաիրավական նշանակություն է ստանում այն պատճառով, որ ընտրական գործընթացի ընթացքում պետական ֆինանսական միջոցների օգտագործումը պետք է ենթարկվի պետության չեզոքության առավել խիստ պահանջին: Երբ նման միջոցառումը իրականացվում է ընտրությունների անմիջական համատեքստում, այն օբյեկտիվորեն կարող է ձևավորել գործող իշխանության օգտին նյութական և քաղաքական առավելություն՝ խախտելով մյուս քաղաքական ուժերի հետ հավասար մրցակցության պայմանները:

Միաժամանակ, սոցիալական վճարի բարձրացումը կարող էր ընտրողների մոտ ձևավորել շնորհակալության, կախվածության կամ ապագա ակնկալիքի ազդեցություն գործող իշխանության նկատմամբ, ինչի հետևանքով ընտրողի քաղաքական կամքը ձևավորվել է ոչ լիովին ազատ և անթույլատրելի ազդեցություններից զերծ պայմաններում:

3.5. Պետական քաղաքականության և իշխող կուսակցության շահերի համընկնման խնդիրը

Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համատեղ ուղեցույցներում վարչական ռեսուրսները բնութագրվում են լայնորեն՝ ներառելով պետական հատվածի ֆինանսները, հատկացումները, հանրային պաշտոնից բխող ազդեցությունը, ինչպես նաև սոցիալական ծրագրերից ստացվող օգուտները: **Նույն ուղեցույցներով «պետական ռեսուրսների չարաշահումը» դիտարկվում է որպես որոշակի կուսակցությունների կամ թեկնածուների կողմից պաշտոնական դիրքի կամ պետական մարմինների հետ կապի միջոցով անհարկի առավելություն ստանալը՝ ընտրությունների արդյունքի վրա ազդելու նպատակով:**

Այսինքն՝ տվյալ դեպքում խնդիրը ոչ միայն այն է, որ կենսաթոշակների բարձրացման համար օգտագործվել են պետական բյուջեի միջոցներ, այլ այն, որ այդ միջոցները գործարկվել են այնպիսի ժամանակահատվածում և այնպիսի քաղաքական համատեքստում, երբ դրանք օբյեկտիվորեն կարող էին ձևավորել ընտրողների մոտ գործող իշխանության նկատմամբ նյութական կախվածության, շնորհակալության կամ ակնկալիքի ազդեցություն: Ընտրական գործընթացի ընթացքում պետական սոցիալական վճարների բարձրացումը, եթե այն չունի նախապես հաստատված և ընտրություններից անկախ ծրագիր, գործնականում հավասարազոր է պետական ֆինանսական ռեսուրսի օգտագործմամբ ընտրողների կամքի վրա անուղղակի ազդեցություն գործադրելուն:

Որոշիչ չէ այն հանգամանքը, որ Կառավարությունն առհասարակ իրավասու է սոցիալական ոլորտում որոշումներ ընդունելու: **Որոշիչն այն է, որ այդ իրավասությունը չի կարող իրականացվել այնպիսի ձևով, ժամանակով և նպատակային ազդեցությամբ, որը խախտում է պետության չեզոքության պարտականությունը և**

իշխող քաղաքական ուժին տալիս է այնպիսի առավելություն, որը հասանելի չէ մյուս ընտրական մրցակիցներին: Վարչական ռեսուրսի չարաշահման արգելքի էությունը հենց այն է, որ գործող իշխանությունը չօգտագործի պետական բյուջեն, պետական քաղաքականության գործիքները կամ հանրային պաշտոնից բխող հնարավորությունները իր ընտրական դիրքերն ամրապնդելու նպատակով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ ՀՀ Ազգային ժողովի 2025 թվականի դեկտեմբերի 3-ի նիստին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ով Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների մասնակից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջին համարն է և վարչապետի թեկնածուն, 2026 թվականի բյուջեի նախագծի եզրափակիչ ելույթում հայտարարել է, որ *«Մենք ի՞նչ ենք ասում, ասում ենք, լավ, թոշակառուների թոշակը ամսեկան տասնմեկ հազար դրամով կամ տասը հազար չորս հարյուր դրամով ավելացնենք, ի՞նչ է անելու թոշակառուն, էդ գումարը ինչի՞ վրա է ծախսելու: Մեր հեղափոխությունը ցույց է տալիս, խոսքը էս դեպքում վաթսունհինգ պլյուս տարեկան թոշակառուների մասին է, մեր հեղափոխությունը ցույց է տալիս, որ մարդկանց առաջնային ծախսը առողջապահությունն է: Հեղափոխություն, ինչի մենք մարդկանց տանք էդ փողը, որ ինքը չիմանա, թե ինչպես էդ փողը արդյունավետ օգտագործի իր առողջապահության վրա: Գնա դեղատոմս այլ բան գնի, քան պետք է գնի, գնա ստանա էն բուժօնախնայությունը, քան պետք է ստանա:»¹²*

Սակայն ընդամենը շուրջ 2 /երկու/ ամիս անց, երբ արդեն մեկնարկել էին ընտրական գործընթացները և ուժի մեջ էր մտել ընտրությունների նշանակման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը, ՀՀ կառավարությունը կայացրեց կենսաթոշակների բարձրացման վերաբերյալ որոշում: Այսպիսով, եթե 2025 թվականի դեկտեմբերի 3-ի դրությամբ ՀՀ վարչապետը հրապարակայնորեն հիմնավորում էր, որ ՀՀ քաղաքացիները կարող են չիմանալ, թե ինչպես պետք է ծախսեն իրենց տրամադրվող լրացուցիչ միջոցները, ապա ընտրական գործընթացների մեկնարկից անմիջապես հետո նույն քաղաքացիներին լրացուցիչ դրամական միջոցների տրամադրումն արդեն ներկայացվեց որպես պետական քաղաքականության նպատակահարմար միջոցառում: Նման ժամանակային համընկնումը հիմնավոր կասկածներ է առաջացնում, որ համապատասխան որոշումները պայմանավորված էին ոչ թե սոցիալական քաղաքականության հետևողական իրականացման, այլ ընտրական գործընթացների համատեքստում ընտրողների վրա ազդեցություն գործադրելու նպատակով:

Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համատեղ ուղեցույցները շեշտում են, որ վարչական ռեսուրսների չարաշահման դեմ իրավական կարգավորումները պետք է

¹² <http://www.parliament.am/transcript.php?day=03&month=12&year=2025&lang=arm>

ապահովեն պետական մարմինների չեզոքությունն ու անաչառությունը, թեկնածուների և կուսակցությունների նկատմամբ հավասար վերաբերմունքը, ինչպես նաև հավասար մրցակցային դաշտը, այդ թվում՝ գործող իշխանության թեկնածուների նկատմամբ: **Վարչական ռեսուրսի չարաշահումը պետք է դիտարկվի որպես ընտրական իրավախախտում**, իսկ այն դեպքերում, երբ խախտումները ազդել են արդյունքի վրա, կիրառելի հետևանքների շարքում դիտարկվում է նաև ընտրությունների արդյունքների չեղարկումը:

Հետևաբար կենսաթոշակների բարձրացումը տվյալ ընտրական համատեքստում պետք է որակվի ոչ թե որպես չեզոք սոցիալական միջոցառում, այլ որպես պետական ֆինանսական և վարչական ռեսուրսի չարաշահմամբ իրականացված ընտրական միջամտություն: Այն խաթարել է ընտրական գործընթացի հավասարությունը, ազդել է ընտրողների կամքի ազատ ձևավորման վրա և ստեղծել է իշխող քաղաքական ուժի համար այնպիսի նյութական և քաղաքական առավելություն, որը չէր կարող հասանելի լինել մյուս մասնակիցներին: Այս հանգամանքը, իր բնույթով, կազմում է ընտրությունների ազատության, հավասարության և օրինականության սկզբունքների ակնհայտ խախտում և պետք է գնահատվի որպես ընտրությունների արդյունքների լեգիտիմությունը կասկածի տակ դնող էական խախտում:

3.6. Քաղաքական մրցակցության անհավասար պայմաններ

Անհավասար քաղաքական մրցակցային պայմանների առումով հարկ է ընդգծել նաև հետևյալը.

Հանրահայտ փաստ է, որ Սամվել Կարապետյանը քաղաքական հայտ է ներկայացրել, հայտարարել է քաղաքական թիմի ձևավորման և ՀՀ-ում քաղաքական գործընթացներին մասնակցելու մասին, որպիսի հանգամանքներում ձևավորվում է ՀՀ-ի հետ անխզելի կապվածություն և հանրային բարձր պատասխանատվություն, որը ամբողջությամբ չեզոքացնում է ցանկացած ոչ իրավաչափ վարքագծի ենթադրյալ ռիսկը: Այսինքն, կանխատեսական դատողություններին հակադրվում են իրական կյանքում գոյություն ունեցող տվյալներ, որոնք պետք է գնահատվեն ռիսկերի իրատեսական լինելու տեսանկյունից: Ազատության սահմանափակում ենթադրող խափանման միջոցների շարունակական պահպանումը փաստացի միջամտում է այլևս քաղաքական բնույթի իրավական գործընթացներին և զերծ է պահել բացառապես պատշաճ վարքագիծ դրսևորած և այլևս «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանին Դաշինքի քարոզարշավին լիարժեք մասնակցություն ունենալուց:

ՀՀ ԿԸՀ-ի կողմից 2026 թվականի մայիսի 3-ին, արդեն իսկ գրանցվել էր «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը¹³, և նշված փաստը բացահայտված էր Դատարաններին: Այսինքն չնայած այն հանգամանքին, որ Սամվել Կարապետյանի կողմից առաջնորդած ուժը ընտրական գործընթացի սուբյեկտ է, ինչն առնվազն ենթադրում է մրցակցության պայմանների հավասարության ապահովում, այդ թվում ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի տեսանկյունից, ըստ որի՝ ԱԺ ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա ամբողջ ընտրական գործընթացի ընթացքում Սամվել Կարապետյանը գրկված է եղել այդ հնարավորությունից:

Ի տարբերություն ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցած այլ ուժերին՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի առաջնորդը՝ **Ուժեղ Հայաստան կուսակցության նախագահը** հնարավորություն չի ունեցել անմիջական մասնակցության և ներգրավվածության, հասարակության հետ անմիջական շփման, ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ ՀՀ մարզերում: Այսինքն՝ քաղաքական և քաղաքացիական իրավունքների իրացման ողջամիտ, համաչափ հնարավորության տեսանկյունից, նշված երաշխիքների անմիջականորեն գործելու պայմաններում՝ Սամվել Կարապետյանը պետք է հնարավորություն ունենար անձամբ, անմիջականորեն մասնակցելու «Ուժեղ Հայաստան» կուսակցության (կուսակցությունների դաշինք) նախընտրական քարոզարշավին:

Հաշվի առնելով Սամվել Կարապետյանի կողմից ներկայացված քաղաքական հայտը, դրա շրջանակներում քաղաքական իրավունքների իրացման պատշաճ, լիարժեք հնարավորության ապահովման անհրաժեշտությունը, գտնում ենք, որ խափանման միջոցը չպետք է իրացվի նաև անձի քաղաքական իրավունքների սահմանափակման նպատակով և դրա կիրառման հարցը լուծելիս պետք է հաշվի առնի նաև նման տվյալները: Ի դեպ, ի թիվս այլնի, հենց նման դիրքորոշում է արձանագրվել Նավալնին ընդդեմ Ռուսաստանի ՄԻԵԴ նախադեպային որոշմամբ, որի շրջանակներում հենց տնային կալանք էր կիրառված Նավալնիի նկատմամբ և չնայած դրան՝ Դատարանն արձանագրել էր նաև 18-րդ հոդվածի խախտում (NAVALNYY v. RUSSIA, 43734/14 inter alia § 98, 174): Ի դեպ, հենց տնային կալանքի պայմաններում, երբ քաղաքական գործընթացի ամբողջական մասնակցության սահմանափակում էր առաջացել, ՄԻԵԴ-ը նշվածը գնահատել էր որպես Կոնվենցիայի նաև 18-րդ հոդվածի խախտում:

Tănase v. Moldova (Մեծ պալատ, 2010) գործով Դատարանը գտել է, որ Կոնվենցիայի իմաստով ժողովրդավարությունը կախված է քաղաքական բազմակարծությունից և բաց մրցակցությունից՝ ընդգծելով, որ «կարևոր է ապահովել ընդդիմադիր կուսակցությունների մուտքը քաղաքական հարթակ այնպիսի

¹³ <https://www.pastinfo.am/hy/news/2026/05/03/34445/1967029>

պայմաններով, որոնք նրանց թույլ կտան ներկայացնել իրենց ընտրազանգվածը»: Այն գտել է, որ բացառող միջոցները, որոնք էականորեն սահմանափակում են մասնակցությունը, կարող են «վնասել հենց ընտրական իրավունքների էությանը» և «զրկել դրանք արդյունավետությունից»՝ դրանով իսկ խաթարելով ժողովրդի կարծիքի ազատ արտահայտությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հաստատում է, որ համաչափության և անհատականացված գնահատման չափանիշները չեն կարող փոխարինել վերջնական դատապարտման բացակայությանը: Անհատականացված գնահատումը գործում է որպես սահմանափակող սկզբունք այն դեպքերում, երբ դատապարտման վրա հիմնված սահմանափակումներն այլ կերպ օրինաչափ են. այն ինքնուրույն հիմք չի ստեղծում թեկնածուին ընտրություններին մասնակցելուց բացառելու համար՝ միայն մեղադրանքի առաջադրման կամ առկախ մեղադրանքների առկայության ուժով: Դատարանը երբևէ չի հաստատել թեկնածուի բացառումը ընտրություններին մասնակցելու իրավունքից՝ չավարտված քրեական վարույթի հիմքով:

Mukong v. Cameroon գործով (Հաղորդակցություն թիվ 458/1991), թեև գործը չի հարուցվել 25-րդ հոդվածի հիմքով, Հանձնաժողովը գտել է, որ անձի կալանավորումը կիրառվել է նրա քաղաքական հայացքների և գործունեության պատճառով: Հանձնաժողովը շեշտել է, որ քաղաքական անհամաձայնությունը չի կարող ճնշվել ազատությունից զրկելու միջոցներով՝ նշելով. «Ազգային միասնության պահպանման և առավել ևս ամրապնդման օրինական նպատակը չի կարող իրականացվել բազմակուսակցական ժողովրդավարության քարոզչությունը լռեցնելու փորձով»:

Մարդու իրավունքների հանձնաժողովի թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության և դրա նախադեպային իրավունքի համակցված վերլուծությունից բխում է ՔՔԻԴ-ի ներքո գործող հստակ և ներքին առումով հետևողական կանոն: Ընտրվելու իրավունքի սահմանափակումները պետք է սահմանված լինեն օրենքով և հիմնված լինեն օբյեկտիվ ու ողջամիտ չափանիշների վրա: Քրեական իրավական կարգավիճակը չի կարող օգտագործվել որպես քաղաքական կյանքին մասնակցելու ոչ պիտանելիության վերջնական որոշման փոխարինիչ: Մինչդատական կալանքի, առկախ մեղադրանքների կամ չավարտված քրեական վարույթի վրա բացառապես հիմնված միջոցները, վերջնական դատապարտման և համաչափ, օրենքով նախատեսված իրավազրկման բացակայության պայմաններում, 25-րդ հոդվածի իմաստով հանդիսանում են անհիմն սահմանափակումներ և անհամատեղելի են 14(2)-րդ հոդվածով երաշխավորված անմեղության կանխավարկածի հետ: Դաշնագիրը պետություններին թույլ չի տալիս անուղղակիորեն՝ քննչական կամ կալանավորման միջոցների միջոցով, հասնել այն բանին, ինչ 25-րդ հոդվածն ուղղակիորեն արգելում է՝ քաղաքական դերակատարների բացառմանը ժողովրդավարական մրցակցությունից՝

առանց դատապարտման վրա հիմնված, անհատականացված և համաչափ հիմնավորման:

Քաղաքական գործընթացներում ոչ միայն հատուկ կարևորություն է ստանում համապատասխան թեկնածուի՝ անձամբ և անմիջական ներգրավվածությունը, այլև որոշ գործընթացների իրականացում առհասարակ հնարավոր չէ տվյալ անձի բացակայության պայմաններում՝ պայմանավորված վերջինիս գործառույթների էությունից: Նման պայմաններում, ներկայումս կիրառված խափանման միջոց տնային կալանքը, ի թիվս այլնի, զրկում է Սամվել Կարապետյանին նաև քաղաքական իրավունքների լիարժեք իրացման հնարավորությունից:

4. Վարչական ռեսուրսի համակարգային օգտագործումը

4.1. Վարչապետի պաշտոնեական կարգավիճակի և նախընտրական գործունեության չտարանջատումը

ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրության ողջ գործընթացում խաթարվել է **ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածը, որը հանդիսանալով սահմանադրական կարգի հիմունք-նորմ երաշխավորում է ընտրությունների հավասարության և օրինականության սկզբունքը**, քանի որ Վարչապետի կողմից թեև ներկայացվել էր արձակուրդում գտնվելու որոշում, սակայն իրականում չի ապահովվել վարչապետի՝ որպես պետական բարձրագույն պաշտոնատար անձի կարգավիճակի և իշխող կուսակցության քարոզարշավի միջև փաստացի տարանջատումը:

Մասնավորապես, այն հանգամանքը, որ վարչապետը և կառավարության անդամների մեծ մասը նախընտրական քարոզարշավին մասնակցելու նպատակով արձակուրդում գտնվելու վերաբերյալ հայտարարություն են կատարել կառավարության նիստի շրջանակում, ինքնին չի կարող բավարար համարվել վարչական ռեսուրսի օգտագործման ռիսկերը բացառելու համար: Ձևական արձակուրդը չի չեզոքացնում այն հանրային, ինստիտուցիոնալ և քաղաքական ազդեցությունը, որը պայմանավորված է վարչապետի պաշտոնով, պաշտոնական հարթակներով, պետական կառավարման համակարգի նկատմամբ ունեցած վերահսկողական ազդեցությամբ և պետական քաղաքականության գործիքակազմին փաստացի հասանելիությամբ:

Ավելին, ընտրական գործընթացի ընթացքում Նիկոլ Փաշինյանը շարունակել է հանրային դաշտում ընկալվել և ներկայացվել ոչ միայն որպես կուսակցական ցուցակը գլխավորող թեկնածու, այլև որպես գործող վարչապետ: Դրա վառ օրինակ է 2026 թվականի մայիսի 28-ի մամուլի ասուլիսը, որի ընթացքում նա հանդես է եկել հենց վարչապետի կարգավիճակով: Միջազգային դիտորդական առաքելության **նախնական** եզրակացություններով ևս արձանագրվել է, որ մայիսի 28-ի մամուլի ասուլիսի ընթացքում, հանդես գալով որպես վարչապետ, Նիկոլ Փաշինյանը «Բարգավաճ

«Հայաստան» կուսակցության առաջնորդի նկատմամբ հնչեցրել է ձերբակալության և նրան պատկանող ընկերությունների ազգայնացման վերաբերյալ սպառնալիքներ: Նման վարքագիծը չի կարող դիտարկվել որպես սովորական նախընտրական խոսք, քանի որ այն արվել է գործող վարչապետի կարգավիճակից բխող պետական իշխանության իրական գործիքների հիշատակմամբ և քաղաքական մրցակցի նկատմամբ պետական հարկադրանքի հնարավոր կիրառման ուղերձով:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակի ավելի քան 90 տոկոսը կազմված է եղել պետական և հանրային հատվածի աշխատողներից, այդ թվում՝ պետական ծառայողներից, պետական պաշտոնատար անձանցից և Ազգային ժողովի գործող պատգամավորներից: Նման պայմաններում հնարավոր չէ չկատարել այնպիսի առ այն, որ Ազգային ժողովում քաղաքական մեծամասնություն ունեցող ուժի կողմից նույնիսկ քաղաքական հայտի, քաղաքացի ուժի ընտրություններին մասնակցելու պատգամավորների թեկնածուների ցուցակն առնվազն անուղղակիորեն ստեղծել է միջավայր, որ վարչական ռեսուրսը օգտագործվի կազմակերպված եղանակով և ունենա զանգվածային բնույթ, ուստի հենց ԿԸՀ կողմից Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական ցուցակի հաստատման պահից ակնհայտ է, որ ընտրություններին մասնակցում է մի քաղաքական ուժ որի նույնիսկ նախընտրական ցուցակի 90% վարչական ռեսուրսի լծակներով օժտված է և այն որևէ իրավիճակում չէր կարող չազդել ընտրությունների արդյունքների վրա:

Վերոգրյալից հետևում է, որ արձանագրված փաստը վերաբերում է ոչ միայն վարչապետի՝ նախընտրական քարոզարշավին մասնակցելու հանգամանքին, այլ պետական բարձրագույն պաշտոնի, պաշտոնական հարթակների և կուսակցական քարոզչության փաստացի չտարանջատմանը:

Սահմանադրաիրավական տեսանկյունից, այդ թվում Սահմանադրության 7-րդ հոդվածի տեսանկյունից այս խախտումը էական է, քանի որ պետական իշխանության հեղինակությունը, պաշտոնեական դիրքը և դրանցից բխող հանրային ազդեցությունը գործարկվել են մեկ քաղաքական ուժի օգտին՝ նրան տալով այնպիսի առավելություն, որը հասանելի չէր մյուս ընտրական մասնակիցներին: Դա խաթարել է քաղաքական մրցակցության հավասարությունը և պետության չեզոքության սահմանադրական պահանջը:

Միաժամանակ, երբ ընտրողը քաղաքական ուղերձը ստանում է ոչ միայն թեկնածուից, այլ գործող վարչապետի կարգավիճակով հանդես եկող անձից, այդ ուղերձը ստանում է պետական իշխանության հեղինակությամբ ուժեղացված ազդեցություն: Արդյունքում ընտրողի կամքի ձևավորումը տեղի է ունենում ոչ թե հավասար մրցակցային միջավայրում, այլ պետական իշխանության ազդեցության ներքո:

4.2. Պեղական ծառայողների ներգրավումը նախընտրական գործընթացներին

Նույն տրամաբանության մեջ պետք է դիտարկել նաև իշխող քաղաքական ուժի նախընտրական միջոցառումներին պետական և հանրային հատվածի ներկայացուցիչների, ուսումնական հաստատությունների աշխատակիցների և աշակերտների ներգրավման վերաբերյալ արձանագրումները: Մամուլում և դիտորդական կառույցների հաղորդումներում հրապարակվել են տվյալներ այն մասին, որ ՀՀ վարչապետի մասնակցությամբ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավի շրջանակներում, մասնավորապես Ապարան համայնքում, արձանագրվել են վարչական ռեսուրսի չարաշահման, հանրակրթական ուսումնական հաստատություններում քաղաքական գործունեության արգելքի խախտման և քարոզչությանը անչափահասների ներգրավման դեպքեր:¹⁴ Նշվել է նաև, որ դպրոցների տնօրեններ և ուսուցիչներ աշխատանքային ժամերին, դասապրոցեսի ընթացքում, կազմակերպված մասնակցություն են ապահովել իշխող կուսակցության միջոցառմանը, իսկ առանձին դեպքերում աշակերտները դուրս են բերվել դասերից՝ վարչապետին դիմավորելու և քարոզչական միջոցառմանը մասնակցելու նպատակով:

Հատկանշական է, որ այս հանգամանքների կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անգամ հրապարակայնորեն հիշեցրել է նախընտրական քարոզչության ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի մասին՝ արձանագրելով, որ վարչական ռեսուրսները ներառում են մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցները, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք: Այսպիսով, խոսքը ոչ թե մեկուսացված կամ պատահական դրվագների, այլ ընտրական գործընթացի վրա պետական և հանրային համակարգի ազդեցության կիրառման համակարգային ռիսկի մասին է:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միջազգային դիտորդական առաքելության նախնական եզրակացություններում ևս արձանագրվել է, որ թեև տեղական մակարդակում վարչական ռեսուրսների համակարգային օգտագործում ուղղակիորեն չի արձանագրվել, այնուամենայնիվ դիտարկվել և ստացվել են իշխող կուսակցության նախընտրական միջոցառումներին մասնակցելու նպատակով ընտրողների նկատմամբ ճնշում գործադրելու վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներ:¹⁵ Նույն փաստաթղթում նշվել է նաև, որ ընտրություններից առաջ կառավարության կողմից հայտարարված կամ ներդրված սոցիալական և տնտեսական միջոցառումները լայնորեն ընկալվել են որպես իշխող կուսակցությանը նպաստող քայլեր, իսկ նման գործելակերպը հակասում է

¹⁴ <https://news.am/hy/news/1035062>; <https://www.azatutyun.am/a/kyh-n-zgoushatsnoug-e-yntarshavi-yntatskoum-varchakan-resoursi-%D6%85gtagortsoum-n-argelvoug-e/33755961.html>

¹⁵ https://odhr.osce.org/sites/default/files/documents/official_documents/2026/06/ARM%20Parliamentary%202026_PS_08.06.2026_ARM.pdf

պետության և քաղաքական կուսակցությունների միջև հստակ տարանջատման միջազգային չափանիշին և կարող է խաթարել ընտրություններին մասնակցող ուժերի համար հավասար հնարավորությունների սկզբունքը:

Պետք է նկատել, որ նշվածն ընդհանուր ընտրական գործընթացի էական խախտում է. ի թիվս այլի ընտրական գործընթացների փուլում վարչական ռեսուրսների չարաշահմանն առնչվող՝ Վենետիկի հանձնաժողովի 2013թ. CDL-AD(2013)033 զեկույցում վարչական ռեսուրսը բնութագրվում է որպես ընտրությունների ընթացքում գործող պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների՝ մարդկային, ֆինանսական, նյութական և այլ ռեսուրսները, հանրային զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ նրանց ունեցած վերահսկողության հանգամանքը, ինչպես նաև իրենց դիրքով պայմանավորված՝ հանրային օբյեկտների և ռեսուրսների նկատմամբ ունեցած հասանելիությունը, ինչը կարող է վերածվել քաղաքական կամ այլ ձևաչափի աջակցության:

Միջազգային իրավական փաստաթղթերում միանշանակ արձանագրված է այն դիրքորոշումը, ըստ որի՝ ընտրական իրավունքի ազատությունը չի սահմանափակվում զուտ կոնկրետ ընտրողի կամահայտնության վրա անմիջական ազդեցությամբ, այն ավելի լայն շրջանակներ է ընդգրկում և ներառում է նաև այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են՝ հետապնդումները, թշնամության և ատելության ռճաբանությունը, վարչական ռեսուրսների օգտագործմամբ նախընտրական քարոզչության համար չնախատեսված ամբիոններն օգտագործելը և այլն¹⁶:

Հավելենք, որ ընտրական իրավունքի հավասարությունը միջազգային իրավական փաստաթղթերով ևս չի սահմանափակվում սուկ քվեարկության ծայների հավասարության չափանիշով: Հավասարության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ ոչ միայն վարչական մարմինները, մինչդեռական վարույթ իրականացնելու և այն հսկելու լիազորությամբ օժտված պետական մարմինները, այլև արդարադատություն իրականացնող դատարանները զերծ են մնում կրկնակի չափանիշների կիրառումից¹⁷:

¹⁶Տես, օրինակ՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ «Ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու գործող պարտավորությունների մասին» 7-րդ բաժինը, Վարշավա, 2004 թ.:

¹⁷ Տե՛ս, օրինակ՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ «Ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու գործող պարտավորությունների մասին» 1-ին բաժինը, Վարշավա, 2004 թ.: Վենետիկի հանձնաժողովի (Եվրոպական հանձնաժողով հանուն ժողովրդավարության օրենքի միջոցով) «Ընտրության հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» 26-րդ կետի 3.1. ենթակետի համաձայն. «Քվեարկողների կարծիք կազմելու ազատությունը մասամբ փոխհատվում է հավասար հնարավորությունների հետ: Այն պահանջում է, որպեսզի պետությունը, և պետական իշխանություններն առհասարակ, հարգեն արդարություն ցուցաբերելու իրենց պարտականությունը, մասնավորապես լրատվամիջոցների օգտագործման, ցուցապաստառների փակցման, հանրահավաքների իրավունքի պաշտպանության, ինչպես նաև կուսակցությունների և թեկնածուների ֆինանսավորման տեսանկյունից»:

Այսպիսով, արձանագրված փաստն այն է, որ իշխող քաղաքական ուժի նախընտրական միջոցառումներին ներգրավվել են պետական և հանրային հատվածի ներկայացուցիչներ, իսկ առանձին դեպքերում նաև ուսումնական հաստատությունների աշխատակիցներ և աշակերտներ:

Նման ներգրավվածությունը սահմանադրաիրավական նշանակություն է ստանում այն պատճառով, որ հանրային ծառայության և պետական համակարգի մարդկային ռեսուրսը չի կարող ծառայեցվել որևէ կուսակցության քարոզչական նպատակներին: Դրա օգտագործումը մեկ քաղաքական ուժի օգտին խախտում է ընտրություններին մասնակցող ուժերի հավասար հնարավորությունները, քանի որ մյուս մասնակիցները չեն տիրապետում նույն վարչական, կազմակերպչական և ինստիտուցիոնալ ռեսուրսներին:

Միաժամանակ, պետական կամ համայնքային համակարգի ներկայացուցիչների կազմակերպված մասնակցությունը ընտրողների մոտ ձևավորում է իշխանության կողմից աջակցվող ուժի գերակայության ընկալում և կարող է ազդել ընտրողի ազատ քաղաքական կողմնորոշման վրա: Այդ պատճառով խախտումը պետք է գնահատվի ոչ թե որպես առանձին կազմակերպչական դրվագ, այլ որպես ընտրողի կամքի ազատ ձևավորման վրա ազդող համակարգային հանգամանք:

4.3. Համայնքային և պետական կառույցների ներգրավումը

Ընտրական գործընթացի փուլում, այդ թվում, հենց քվեարկության օրը՝ 2026 թվականի հունիսի 7-ին, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների կողմից մշտապես և համակարգված օգտագործվել է վարչական ռեսուրս և պաշտոնեական դիրք: Ընդ որում, ընտրական իրավունքի, **հատկապես հավասարության սկզբունքի լրջագույն խախտումների հանգեցրած վարչական ռեսուրսի ապօրինի օգտագործումն իրականացվել է տարաբնույթ եղանակներով՝** թե՛ գույքի և այլ միջոցների օգտագործմամբ, թե՛ մարդկային ռեսուրսի միջոցով, դրանով արտաքուստ ապահովելով քաղաքական հակառակորդների նկատմամբ, այսպես կոչված, սառեցնող ազդեցություն (chilling effect), ինչպես նաև ստեղծելով իբրև բարձր վարկանիշ երաշխավորող հավաքի մասնակիցների մեծաքանակության պատրանք: Նշված խախտումների բացահայտ բնույթը և դրանց նկատմամբ իրավասու մարմինների համակարգված անգործությունը առնվազն ստեղծում են ողջամիտ տպավորություն, որ խախտումներ կատարող սուբյեկտները չեն ակնկալել արդյունավետ իրավական արձագանք և գործել են փաստացի անպատժելիության պայմաններում:

Վերոգրյալ հանգամանքները վկայում են, որ ընտրական գործընթացում պետական և համայնքային կառույցների ներգրավումը չի սահմանափակվել առանձին կամ պատահական դեպքերով, այլ ունեցել է համակարգային բնույթ: Նման գործելակերպը

խաթարում է ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի միջև հավասար հնարավորությունների սկզբունքը, քանի որ պետական ռեսուրսների փաստացի օգտագործումը մեկ քաղաքական ուժի օգտին նրան ապահովում է այնպիսի առավելություններով, որոնք անհասանելի են մյուս մասնակիցներին:

Ավելին, պետական մարմինների և պաշտոնատար անձանց ներգրավվածությունը ընտրողների մոտ ձևավորում է իշխանության կողմից աջակցվող քաղաքական ուժի առավելության ընկալում, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրողների քաղաքական կամքի ազատ ձևավորման և արտահայտման վրա: Հետևաբար, նշված խախտումները պետք է գնահատվեն որպես ազատ և հավասար ընտրությունների սահմանադրական սկզբունքների խաթարման կարևոր դրսևորումներ:

4. Կրթական հաստատությունների և ուսումնական համակարգի օգտագործումը

Պետք է նկատել, որ առկա են նաև հիշյալ և այլ նմանաբնույթ փաստերը արձանագրած այլ տեսանյութեր, որտեղ, օրինակ՝ կրթական հաստատությունների ներկայացուցիչները ուսումնական հաստատությունում իրենց ունեցած աշխատանքային պարտականությունները ստորադասել են նախընտրական քարոզարշավին մասնակցելուն, ինչը զուգորդվել է ուսումնական գործընթացի խաթարմամբ՝ դասաժամերի կրճատ անցկացմամբ, ինչպես նաև աշակերտների՝ որպես անչափահաս երեխաների լավագույն շահի և կրթության իրավունքի ոտնահարմամբ և քաղաքական գործընթացներում վերջիններիս ներգրավմամբ: Այսինքն՝ աշխատանքային պարտականությունները թերի կատարած ուսուցիչների և վերջիններիս դրդմամբ աշակերտներին քարոզարշավի ներգրավումը նպատակ է հետապնդել հիմնականում դպրոցական աշակերտների ներգրավմամբ մասնակցության պատրանք ստեղծելու: Նշված հարցի վերաբերյալ մեր կողմից ներկայացվել էր համապատասխան դիմում Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որը, ցավոք, որևէ կերպ պատշաճ քննության առարկա չի դարձել, այլ միայն վերահասցեագրվել է ՀՀ գլխավոր դատախազությանը, որի առնչությամբ էլ առկա չէ դատախազության կողմից պատշաճ գնահատական: Ավելին՝ նշված դիմումի առնչությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից անգործություն կիրառելը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան: Հարկ է նկատել, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից քարոզարշավի ընթացքում կիրառվել է նաև վարչական ռեսուրս, որը դրսևորվել է Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանության» ՀՈԱԿ-ի աշխատակիցների կողմից փակցվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական պաստառը՝ դրա ցուցակը գլխավորող Նիկոլ Փաշինյանի նկարով: Այսինքն՝ սույն դեպքում էլ ՀՈԱԿ-ը, ենթակա լինելով Երևանի քաղաքապետին, որը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակով առաջադրված

է որպէս պատգամավորի թեկնածու, ստանձնում է քաղաքապետի մասնակցությամբ կուսակցության քարոզչական պաստառի տեղաբաշխման պարտականությունը: Նշվածով ևս փաստացի խախտվում են ՀՀ ընտրական օրենսգրքի «Վարչական ռեսուրսի օգտագործման արգելքը և նախընտրական քարոզչության սահմանափակումները» վերտառությամբ 23-րդ հոդվածի կանոնները, ինչպէս նաև առողջ մրցակցությունը: Անդրադառնալով վարչական ռեսուրսի կիրառման վերաբերյալ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից պարբերաբար ահազանգման դեպքերին, հարկ ենք համարում արձանագրել, որ դրանցից ոչ մեկի մասով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի ձեռնարկել «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով իրեն ընձեռնված նախընտրական քարոզչության ընթացքում վերահսկողական լիազորությունների կիրառման գործիքակազմը: Այսինքն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, լինելով Հայաստանի Հանրապետությունում ընտրություններ կազմակերպող և անցկացնող միակ մարմինը և ունենալով դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտավորություն, յուրաքանչյուր դիմումի առնչությամբ կա՛մ չի նախաձեռնել որևէ գործողություն, կա՛մ այն վերահասցեագրել է ՀՀ գլխավոր դատախազությանը՝ իրավական գնահատական ստանալու համար:

Նկարագրված գործողությունները չեն սահմանափակվում միայն վարչական ռեսուրսի օգտագործման առանձին դեպքերով: Դրանք փաստացի հանգեցրել են կրթական համակարգի ներուժի օգտագործմանը նախընտրական նպատակներով՝ ընտրական գործընթացում մեկ քաղաքական ուժի օգտին լրացուցիչ կազմակերպչական և քարոզչական առավելություններ ստեղծելու համար:

Միաժամանակ, կրթական հաստատությունների և հատկապէս անչափահասների ներգրավումը քաղաքական գործընթացներում վտանգում է ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը և հակասում է պետության չեզոքության պահանջին: Նման գործելակերպը խաթարում է քաղաքական մրցակցության արդարությունը և բացասաբար ազդում ընտրական միջավայրի ազատության վրա:

4.5. ԿԸՀ-ի արձագանքը վարչական ռեսուրսի վերաբերյալ ահազանգերին

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված մի շարք դիմումների պարագայում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հանդիսանալով ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողություն իրականացնող միակ **իրավասու սահմանադրական մարմինը, ցուցաբերել է անգործություն և ոչ պատշաճ վարչարարություն, ինչն առանձին և համակցության մեջ ևս առաջացնում է Սահմանադրության 7-րդ հոդվածի տեսանկյունից էական անհամապատասխանություն:**

Այսինքն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, լինելով Հայաստանի Հանրապետությունում ընտրություններ կազմակերպող և անցկացնող միակ մարմինը և

ունենալով դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտավորություն, յուրաքանչյուր դիմումի առնչությամբ կա՛մ չի նախաձեռնել որևէ գործողություն կա՛մ այն վերահասցեագրել է ՀՀ գլխավոր դատախազությանը՝ իրավական գնահատական ստանալու համար:

Հանձնաժողովը չի կիրառել «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով իրեն ընձեռնված վերահսկողական գործիքակազմը, չի ապահովել պատշաճ լսվելու իրավունքը **մի շարք դիմումների առնչությամբ՝** սահմանափակվելով դիմումները ՀՀ գլխավոր դատախազությանը վերահասցեագրելով, ինչով խուսափել է խախտումներին անմիջապես արձագանքելու իր պոզիտիվ պարտականությունից:

Այս առումով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ ազատ ընտրությունների իրավունքը պետության վրա դնում է ոչ միայն նեգատիվ, այլև պոզիտիվ պարտականություն՝ ապահովելու ընտրական խախտումների վերաբերյալ բողոքների արդյունավետ քննություն (Namat Aliyev v. Azerbaijan, §§ 81-90): Դատարանը մասնավորապես ընդգծել է, որ բողոքների պարզապես վերահասցեագրումը, կամ ըստ էության չքննարկելը չի բավարարում ՄԻԵԿ Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի պահանջներին:

Ի դեպ ընտրությունների վերաբերյալ բողոքների քննության ընդհանուր մոտեցումը որն առավելապես իրացվել է ԿԸՀ-ի կողմից, իր բնույթով ևս համապատասխանում է նման խախտման չափանիշներին:

Այս առումով կիրառելի են նաև The Georgian Labour Party v. Georgia և Gahramanli and Others v. Azerbaijan գործերով ՄԻԵԴ-ի ձևավորած չափանիշները, որոնց համաձայն՝ ընտրական հանձնաժողովների կազմը և գործունեությունը պետք է գործնականում ապահովեն ընտրական վարչարարության թափանցիկությունը, անաչառությունը և անկախությունը քաղաքական մանիպուլյացիայից: Հանձնաժողովների կազմի խնդիրը ինքնին մեկուսացված գնահատման ենթակա չէ, սակայն այն դառնում է էական այն դեպքում, երբ զուգորդվում է կոնկրետ խախտումների, բողոքների ոչ արդյունավետ քննության, դիտորդների կամ մասնակիցների ներկայացրած փաստերի անտեսման և որոշումների ոչ բավարար պատճառաբանվածության հետ: Սույն գործով ԿԸՀ-ն պարտավոր էր պարզել՝ արդյոք հանձնաժողովների առանձին անդամների գործողությունները և դրանց վերաբերյալ ներկայացված դիմումները վկայում են միայն անհատական խախտումների, թե ընտրական վարչարարության վստահելիության և անաչառության ավելի լայն խնդրի մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իր վերահսկողական լիազորությունների փաստացի չիրականացումը հանգեցրել է նրան, որ ընտրական գործընթացի ընթացքում արձանագրված խախտումները **չեն ենթարկվել արդյունավետ** և ժամանակին արձագանքի: Արդյունքում խախտումները ոչ միայն չեն կանխվել կամ

դադարեցվել, այլ շարունակել են ազդեցություն ունենալ ընտրական գործընթացի բնականոն ընթացքի վրա:

Ընտրական գործընթացի նկատմամբ արդյունավետ վերահսկողության բացակայությունը ինքնին վտանգում է ազատ և արդար ընտրությունների անցկացումը, քանի որ ընտրական օրենսդրությամբ նախատեսված երաշխիքները դառնում են ձևական և չեն ապահովում ընտրություններին մասնակցող սուբյեկտների իրավունքների իրական պաշտպանությունը: Այս առումով ԿԸՀ-ի անգործությունը պետք է գնահատվի ոչ միայն որպես առանձին վարչարարական թերություն, այլ որպես ընտրական գործընթացի ամբողջականության վրա ազդած հանգամանք:

4.5.1. Վարչական ռեսուրսի չարաշահման մասով

2026 թվականի մայիսի 20-ին մամուլում տարածվել են տեսանյութ և լուսանկար, որում երևում է, թե ինչպես են Երևանի քաղաքապետարանի կանաչապատման ծառայության աշխատակիցները փակցնում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական նյութը՝ Նիկոլ Փաշինյանի լուսանկարով:

2026 թվականի մայիսի 21-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչների կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել դիմում՝ վերոնշյալ փաստի վկայակոչմամբ և դրա համատեքստում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ վարչական վարույթ հարուցելու և «ՀՀ Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում արձանագրելու պահանջով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված դիմումը վերահասցեագրվել էր ՀՀ գլխավոր դատախազությանը՝ դրա հնարավոր քրեաիրավական գնահատականը տալու համար:

«Ուժեղ Հայաստան» դաշինքի կողմից ՀՀ վարչական դատարան էր ներկայացվել հայացադիմում ընդդեմ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ պահանջելով ոչ իրավաչափ ճանաչել Պատասխանողի՝ Հայցվորի 21.05.2026 թվականի դիմումը ՀՀ գլխավոր դատախազությանը վերահասցեագրելու ձևով դրսևորված գործողությունը:

Հայցադիմումի քննության շրջանակներում ՀՀ վարչական դատարանի վարչական գործով 13.06.2026 թվականին կայացվել է հայցը մերժելու մասին դատական ակտ:

Դատական ակտում մասնավորապես արձանագրվել է. « (...) Դատարանը գտնում է, որ քննարկվող խախտման պայմաններում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ նախազգուշացում կիրառելու հայեցողական լիազորության իրականացումը չի կարող լինել այն պիտանի, անհրաժեշտ և չափավոր լուծումը:

Հաջորդիվ, Դատարանն արձանագրում է, որ քննարկվող դեպքը չի վերաբերում միայն այն հարցին, թե փակցվել են արդյոք կուսակցության պաստառներ, կամ արդյոք հետագայում դրանք կարող են հեռացվել: Հայցվորի կողմից հայցադիմումով բարձրացվել է այն հարց, որ քարոզչական գործունեությանը ներգրավված են եղել համայնքապատկան կազմակերպության աշխատակիցներ, իսկ վերջիններիս գործողությունների արդյունքը ծառայել է այն քաղաքական ուժի շահերին, որի ընտրական ցուցակում ընդգրկված է նաև համայնքի ղեկավարը:

Ասվածի համատեքստում, Դատարանի համոզմամբ իրավական գնահատման ենթակա է ոչ միայն քարոզչական գործողության արտաքին դրսևորումը, այլև այն կազմակերպական և ծառայողական մեխանիզմը, որի միջոցով այդ գործողությունը կատարվել է:

Այս համատեքստում էական նշանակություն ունեն այնպիսի հարցերի պարզումը, ինչպիսիք են. արդյոք աշխատակիցները գործել են իրենց նախաձեռնությամբ, թե համապատասխան հանձնարարությամբ, արդյոք այդ գործողությունները կատարվել են աշխատանքային ժամերին, օգտագործվել են արդյոք համայնքային կազմակերպության տեխնիկական, տրանսպորտային կամ այլ միջոցներ, գոյություն ունեցել է արդյոք ծառայողական ենթակայության կամ կախվածության ազդեցություն, և վերջապես՝ ներգրավված են եղել արդյոք այլ պաշտոնատար անձինք: Այս հարցերի պատասխաններից է կախված ոչ միայն ընտրական օրենսդրության խախտման փաստի արձանագրումն ու գնահատականը, այլև հնարավոր վարչական, կարգապահական կամ այլ իրավական հետևանքների առաջացումը:

Հետևաբար, տվյալ դեպքում խախտման իրական բովանդակությունը չի սպառվում թեկնածուի կամ կուսակցության վարքագծով: Խախտման հնարավոր աղբյուրը կարող է գտնվել նաև համայնքային կառավարման համակարգում, համայնքապատկան կազմակերպության ղեկավարության գործողություններում կամ պաշտոնեական լիազորությունների իրականացման ոլորտում: Նման իրավիճակում թեկնածուին կամ կուսակցությանը հասցեագրված նախազգուշացումը, նույնիսկ եթե այն հանգեցնի պաստառների հեռացմանը կամ հետագա նման գործողությունների դադարեցմանը, չի կարող ապահովել այն հանգամանքների բացահայտումը, որոնք հանգեցրել են վարչական ռեսուրսի օգտագործմանը: Այլ կերպ ասած՝ նախազգուշացումը կարող է վերացնել խախտման արտաքին հետևանքը, սակայն ի վիճակի չէ բացահայտել դրա պատճառը:

Դատարանը նաև փաստում է վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի նպատակը կոչված է ապահովելու հանրային իշխանության քաղաքական չեզոքությունը, բացառելու համայնքային և պետական ռեսուրսների ծառայեցումը առանձին քաղաքական ուժերի շահերին և պահպանելու ընտրական գործընթացի

նկատմամբ հանրային վստահությունը: Հետևաբար, երբ առկա են տվյալներ, որ քարոզչական գործընթացում հնարավոր է, որ օգտագործվել են հանրային ռեսուրսներ, առաջնային նշանակություն է ստանում ոչ թե կոնկրետ դեպքով խախտման վերացումը, այլ դրա ծագման պատճառների բացահայտումը և պատասխանատու անձանց շրջանակի որոշումը, ինչը կբացառի նաև դրա կրկնությունը:

Մինչդեռ նշված նպատակներին հասնելու համար խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ նախազգուշացում կիրառելը, խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ տրամադրելով, չի կարող ծառայել իր նպատակներին:

Ինչպես նշվեց վերը, քննարկվող դեպքը չի վերաբերում միայն այն հարցին, թե փակցվել են արդյոք կուսակցության պաստառներ, կամ արդյոք հետագայում դրանք կարող են հեռացվել: Հայցվորի կողմից հայցադիմումով բարձրացվել է այն հարց, որ քարոզչական գործունեությանը ներգրավված են եղել համայնքապատկան կազմակերպության աշխատակիցներ, իսկ վերջիններիս գործողությունների արդյունքը ծառայել է այն քաղաքական ուժի շահերին, որի ընտրական ցուցակում ընդգրկված է նաև համայնքի ղեկավարը»:

Վերոգրյալ դատական արձանագրումներից հետևում է, որ արձանագրված փաստը չի սահմանափակվում քարոզչական պաստառի տեղադրմամբ. խոսքը համայնքապատկան կազմակերպության աշխատակիցների և ենթակառուցվածքների հնարավոր օգտագործման մասին է՝ իշխող քաղաքական ուժի քարոզչական շահերի սպասարկման նպատակով:

Սահմանադրաիրավական առումով այս հանգամանքը էական է, քանի որ համայնքային ռեսուրսի օգտագործումը մեկ քաղաքական ուժի օգտին խախտում է պետական և համայնքային իշխանության չեզոքության պահանջը և ընտրություններին մասնակցող սուբյեկտների հավասար մրցակցային պայմանները: Այնպիսի կազմակերպչական հնարավորություն, ինչպիսին համայնքապատկան կառույցի աշխատակիցների, գույքի կամ ծառայողական ենթակայության օգտագործումն է, հասանելի չէ մյուս քաղաքական ուժերին:

Միաժամանակ, նման վարքագիծը ընտրողների մոտ ստեղծում է այն տպավորությունը, որ պետական կամ համայնքային իշխանությունը նույնացվում է իշխող կուսակցության հետ: Դա կարող է ուղղակիորեն ազդել ընտրողի ազատ կամքի ձևավորման վրա՝ նրան դնելով իշխանության կողմից աջակցվող քաղաքական ուժի գերակայության ընկալման պայմաններում:

4.6. ՎԴ/9260/05/26 վարչական գործի նշանակությունը

Հարկ է նշել, նաև որ ՀՀ վարչական դատարանը (թիվ ՎԴ/9260/05/26 գործով) ըստ էության արձանագրել է վարչական ռեսուրսի չարաշահման խնդիրը: Դատարանն իր վճռով բովանդակային առումով չի հերքել այն փաստը, որ Նիկոլ Փաշինյանի կողմից ՀՀ կառավարության շենքն օգտագործվել է որպես օրենսդրությամբ արգելված վարչական ռեսուրս և դրա շրջանակներում ԿԸՀ-ն իրացրել է իր հայեցողական լիազորությունը:

Այլ կերպ ասած՝ դատարանը հաստատված է համարել խախտման օբյեկտիվ գոյությունը, սակայն հայցի մերժումը հիմնավորել է **բացառապես դատական վերահսկողության սահմաններով դիտարկելով ԿԸՀ հայեցողական լիազորությունը:**

Դատարանը հայցի մերժումը հիմնավորել է բացառապես դատական վերահսկողության սահմաններով՝ նշելով, որ դատարանը չի կարող փոխարինել վարչական մարմնին և գնահատել որևէ միջոցի կիրառման «նպատակահարմարությունը», եթե օրենքը ԿԸՀ-ին տվել է հայեցողական լիազորություն (ընտրելու նախազգուշացման և արձագանքման այլ միջոցների միջև):

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք նշել, որ Դատական ակտերի համադրված վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ դատարաններն արձանագրել են իշխող կուսակցության կողմից թե՛ ատելության խոսքի կիրառման, և թե՛ վարչական ռեսուրսի չարաշահման օբյեկտիվ փաստերը: Սակայն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սեփական հայեցողական լիազորությունների ոչ պատշաճ իրացման և դատարանի կողմից վարչական մարմնի հայեցողությանը չմիջամտելու (դատական վերահսկողության սահմանափակման) արդյունքում, քաղաքական ուժը խուսափել է օրենքով նախատեսված ուղղակի պատասխանատվությունից (նախազգուշացումից):

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ բնակավայրում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավի ընթացքում ուսուցիչները և դպրոցականները, հանայնքապետրանի աշխատակիցները ներգրավված են եղել նախընտրական քարոզչության գործընթացում:

2026 թվականի մայիսի 23-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչների կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել դիմում՝ վերոնշյալ փաստի վկայակոչմամբ և դրա համատեքստում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ վարչական վարույթ հարուցելու և «ՀՀ Ընտրական օրենսգրքը» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում արձանագրելու պահանջով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղղված դիմումը վերահասցեագրվել է ՀՀ գլխավոր դատախազությանը՝ դրանում հնարավոր քրեական բնույթի հատկանիշների

բացահայտման նպատակով, «Ուժեղ Հայաստան» դաշինքի կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում: Նշված հայցադիմումով Դաշինքը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Պատասխանողի՝ Հայցվորի կողմից 23.05.2026 թվականի դիմումը ՀՀ գլխավոր դատախազությանը վերահասցեագրելու ձևով դրսևորված գործողությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գրիգոր Առաքելյան) թիվ ՎԴ/9807/05/26 վարչական գործով 12.06.2026 թվականի վճռով արձանագրվել է, որ «տվյալ դեպքում, Պատասխանողին ներկայացված՝ 23.05.2026թ.-ի դիմումով հաղորդվել էր, որ նախընտրական քարոզչության ընթացքում ուսուցիչները, դպրոցականները և համայնքապետարանի աշխատակիցները ներգրավված են եղել քարոզչական գործընթացում: Նման տեղեկությունները, իրենց բնույթով, կարող էին առնչվել ինչպես «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածով արգելված վարչական ռեսուրսների օգտագործմանը, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածով նախատեսված՝ քարոզչություն կատարելուն հարկադրելու հնարավոր դեպքերին, եթե ներգրավվածությունը պայմանավորված լիներ ծառայողական ազդեցությամբ, պաշտոնեական ենթակայությամբ կամ կախվածության հարաբերություններով:

Այս պայմաններում Դատարանը գտնում է, որ Պատասխանողի կողմից ընտրված լուծումը լիովին համապատասխանում է օրենքով ուրվագծված հայեցողության սահմաններում և ուղղված է եղել հենց այն նպատակին, որը կանխորոշված է «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասով, այն է՝ նախընտրական քարոզչության օրինականության ապահովումը, հնարավոր խախտումների կանխումը և դրանց պատշաճ ստուգման կազմակերպումը»:

Ասվածից հետևում է, որ Դատարանի կողմից փաստացի չի հերքվել վարչական ռեսուրսի չարաշահման դեպքը, ավելին՝ արձանագրվել է, որ նկարագրված դեպքն իրենից կարող է ենթադրել ինչպես ընտրական օրենսդրության խախտում, այն է՝ վարչական ռեսուրսի չարաշահում, այլ նաև քրեաիրավական հանցանքի տարրեր՝ քարոզչություն կատարելուն հարկադրելու մասով:

5. Պետական մարմինների միջամտությունը քաղաքական մրցակցությանը

Ընտրական գործընթացի փուլում խախտվել են ազատ և հավասար ընտրական սկզբունքների տարրերը նաև այնքանով, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի հարյուրավոր շտաբերի ներկայացուցիչների նկատմամբ բազմաթիվ քրեական գործեր են հարուցվել՝ այնպիսի խափանման միջոցների կիրառմամբ, ինչպիսիք են կալանքը, տնային կալանքը և վարչական հսկողությունը: Նշված քրեական գործերը հետապնդում են մեկ նպատակ՝ համընդհանուր սպառնալիքի ու վախի մթնոլորտի ձևավորում, որի պայմաններում թե՛ դաշինքի ներկայացուցիչների և թե՛ դաշինքին

սատարող քաղաքացիների մոտ առաջանում է քաղաքական գործընթացներին մասնակցելու և իշխող ուժին չսատարելու պայմաններում քաղաքական հետապնդման ենթարկվելու հնարավոր վտանգ: Ընդ որում, բացի համընդհանուր վախի մթնոլորտ ձևավորելուց, այդպիսի գործողություններով անդառնալի վնաս է հասցվել «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի քարոզչական աշխատանքներին, քանզի առանցքային աշխատակիցները անհարկի տևական ժամանակով զրկված են եղել շտաբներում իրենց բնականոն աշխատանքներն իրականացնելու տարրական հնարավորությունից:

Համանման մոտեցում ընդհանրապես չի իրականացվել իշխանական դիրքերից հանդես եկող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և նրանց քաղաքական դիրքորոշումներին սատարող այլ թեկնածու կուսակցությունների նկատմամբ: Այս ապօրինի գործելաոճը անթաքույց միտված է եղել վարչական ռեսուրսների օգտագործմամբ քարոզչական կտրվածքով այնպիսի տպավորություն թողնելուն, որ իբր «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը զբաղված է զանգվածային ընտրախախտումներով և ընտրակաշառքներով, և իրենք համարժեք միջոցներ են ձեռնարկում իբր այդպիսիք կանխարգելելու համար: Հատկանշական է, որ նման գործողություններին և անհավասար պայմաններ ստեղծելը կանխարգելելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրություններ են հասցեագրվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին՝ պահանջով, որ վերջիններիս կողմից հրապարակվող նյութերում չմատնանշվի Դաշինքի անվանումը: Մինչդեռ կարևոր ենք համարում արձանագրել, որ պետական միջոցներով ֆինանսավորվող Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը քվեարկության օրը՝ հունիսի 7-ին ամբողջ օրվա ընթացքում չնայած այն հանգամանքին, որ հրապարակում էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ներառված պատգամավորի թեկնածուների կողմից քվեարկության պրոցեսը և դրանից հետո տրվող հարցազրույցը, չի հրապարակել «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի որևէ թեկնածուի քվեարկության պրոցեսը: Ավելին՝ պարբերաբար ցուցադրվում էր ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հրապարակված ձայնագրությունը՝ այն ասոցացնելով հենց Դաշինքի հետ: Այսպիսով՝ Հանրային հեռարձակողի միջոցով ևս փորձ է արվել ազդեցություն ունենալ ընտրողների կամքի վրա՝ պարբերաբար ցուցադրելով Դաշինքի մասին խեղաթյուրված տեղեկատվություն:

Անկախ համապատասխան քրեական վարույթների բովանդակային գնահատականից, դրանց կիրառման ծավալը, ժամանակագրությունը և ընտրական գործընթացի ընթացքում առաջացրած հետևանքները **էականորեն ազդել են Դաշինքի կողմից նախընտրական գործունեություն իրականացնելու հնարավորությունների վրա:** Արդյունքում խաթարվել է ընտրություններին մասնակցող սուբյեկտների միջև հավասար քաղաքական մրցակցության միջավայրը, ինչը սահմանադրական նշանակություն

ունեցող հանգամանք է՝ ընտրությունների արդյունքների օրինականության գնահատման տեսանկյունից:

5.1. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակումները և անմեղության կանխավարկածի խախտումը՝ դրանց ուղիղ ազդեցությունը ընտրողների ազատ կամարտահայտության վրա

Հատկանշական են նաև ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ՀՀ քննչական կոմիտեի գործողությունները: Այսպես՝ նախընտրական քարոզարշավի մեկնարկից անմիջապես առաջ և նաև բուն քարոզչության փուլում, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ֆեյսբուքյան էջի միջոցով հրապարակվում են տեսանյութեր, որտեղ հանրայնացվում են որոշակի գաղտնալսումներ՝ ի հիմնավորումն ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ընտրակաշառք տալու, ստանալու, ինչպես նաև հավաքին մասնակցելու նպատակով անձանց նյութապես շահագրգռելու դեպքեր բացահայտելու, **որոնք պարտադիր ուղեկցվում են «Ուժեղ Հայաստան» կուսակցության հետ իբրև առնչություն ունենալու վերաբերյալ գրառումներով: Հատկապես կարևոր է նաև, որ նման բովանդակություն նույն ձայնագրություններում չի հիշատակվում, բայց Կոմիտեի կողմից այն անպայմանորեն նշվում է:**

Վերը նշված նյութերը մատուցվում են հատուկ մոնտաժված տեսաշարերով և հանրությանը հրամցվում են որպես արդեն իսկ բացահայտված հանցանքներ: Նախ նշենք, որ ի թիվս այլի ելնելով ըստ էության լուծող, վերջնական դատական ակտի բացակայության օբյեկտիվ հանգամանքից սույն դիմումի շրջանակներում չենք ցանկանա մանրամասն անդրադառնալ և իրավական գնահատական տալ այդ ձայնագրությունների քրեադատավարական արժանահավատությանը, ինչպես նաև վարույթի շրջանակներում առանձին անձանց մեղադրանքների առաջադրման հիմնավորվածությանը կամ քրեական գործի նյութական կողմին: Այնուամենայնիվ առնվազն պետք է արձանագրել, որ հրապարակված նյութերում առհասարակ հիմնավորված չէ՝ արդյո՞ք ձայնագրության մեջ լսվող անձինք ունեն որևէ կապ «Ուժեղ Հայաստան» կուսակցության հետ, թե՞ գործ ունենք անհատական նախաձեռնությունների կամ նպատակային սադրանքների հետ, արդյո՞ք դրանք ներկայացված են ամբողջական տարբերակներով, թե՞ մոնտաժված են և այլն:

Պետք է նկատել, որ Կոմիտեն նման ջանասիրությամբ որևէ այլ դրվագների հանրայնացում չի ապահովում, իսկ նման գործելաոճը նախընտրական շրջանում լրջագույնս խախտում է **անմեղության կանխավարկածը** և ի վերջո, անձի մեղավորությունը ճանաչվում է բացառապես դատարանի կողմից և որևէ այլ մարմին չունի այդ իրավասությունը, անձն անմեղ է, քանի դեռ նրա մեղքը չի հաստատվել օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ակնհայտ է, որ նման վարույթների հարուցումը, նախաձեռնումը կարող է իրականացվել և ամփոփ տեղեկատվություն տրամադրել որոնք զերծ կլինեն անուղղակի քաղաքական միջամտությունից:

Կրկին, մանրամասն չանդրադառնալով վերը նշված սկզբունքի էությանը, հարկ է արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է մեղադրյալի անմեղության վերաբերյալ կասկածները բարձրաձայնելն ընդունելի է, քանի դեռ քրեական վարույթի արդյունքում մեղադրանքի էության վերաբերյալ որոշում չի կայացվել (Sekanina-ն ընդդեմ Ավստրիայի, § 30):

Այնուամենայնիվ, երբ արդարացումը դառնում է վերջնական, մեղավորության վերաբերյալ ցանկացած կասկած բարձրաձայնելն անհամատեղելի է անմեղության կանխավարկածի հետ (Rushiti-ն ընդդեմ Ավստրիայի, § 31, O.-ն ընդդեմ Նորվեգիայի, § 39, Geerings-ն ընդդեմ Նիդեռլանդների, § 49, Paraponiaris-ն ընդդեմ Հունաստանի, § 32):

Անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի կողմից, այլև պետական իշխանության այլ մարմինների կողմից (Allenet de Ribemont-ն ընդդեմ Ֆրանսիայի, § 36, Daktaras-ն ընդդեմ Լիտվայի, § 42, Petyo Petkov-ն ընդդեմ Բուլղարիայի, § 91): Դա վերաբերում է, օրինակ, ոստիկանության աշխատակիցներին (Allenet de Ribemont-ն ընդդեմ Ֆրանսիայի, §§ 37 և 41), Հանրապետության նախագահին (Peša-ն ընդդեմ Խորվաթիայի, §149), վարչապետին կամ ներքին գործերի նախարարին (Gutsanovi-ն ընդդեմ Բուլղարիայի, §§ 194-198), արդարադատության նախարարին (Konstas-ն ընդդեմ Հունաստանի, §§ 43 և 45), խորհրդարանի նախագահին (Butkevičius-ն ընդդեմ Լիտվայի, §53), դատախազին (Daktaras-ն ընդդեմ Լիտվայի, §42) և մեղադրող այլ պաշտոնատար անձանց, ինչպես օրինակ՝ քննիչին (Khuzhin-ն ընդդեմ Ռուսաստանի, §96):

Անմեղության կանխավարկածի սկզբունքը չի կանխում, որ իշխանությունները տեղեկացնեն հանրությանը քրեական գործով քննությունների ընթացքի վերաբերյալ, սակայն այն պահանջում է, որ նրանք դա անեն անհրաժեշտ հայեցողությամբ ու շրջահայացությամբ՝ հարգելով անմեղության կանխավարկածը (Fatullayev-ն ընդդեմ Ադրբեջանի, § 159, Allenet de Ribemont-ն ընդդեմ Ֆրանսիայի, § 38, Garycki-ն ընդդեմ Լեհաստանի, § 69):

Դատարանն ընդգծել է պետական պաշտոնատար անձանց կողմից իրենց հայտարարություններում բառերի ընտրության կարևորությունը՝ նախքան դատաքննության արդյունքում իրավախախտման համար անձին մեղավոր ճանաչելը (Daktaras-ն ընդդեմ Լիտվայի, § 41, Arrigo-ն և Vella-ն ընդդեմ Մալթայի (որոշում), Khuzhin-ը և այլք ընդդեմ Ռուսաստանի, § 94):

Ժողովրդավարական հասարակությունում մամուլի խիստ մեկնաբանությունները հանրային շահին վերաբերող գործերում երբեմն անխուսափելի են (Viorel Burzo-ն ընդդեմ Ռումինիայի, § 160, Akay-ն ընդդեմ Թուրքիայի (որոշում)):

Մամուլի չարական արշավը կարող է, այնուամենայնիվ, **դատաքննության** արդարության վրա բացասաբար ազդել՝ ներգործելով հանրային կարծիքի վրա և, հետևաբար, մեղադրյալի մեղավորությունը որոշող երդվյալ ատենակալների վրա (Kuzmin-

ն ընդդեմ Ռուսաստանի, § 62): Որոշիչը ոչ թե կասկածյալի՝ քննող դատարաններից պահանջվող կանխակալության բացակայության վերաբերյալ սուբյեկտիվ ընկալումներն են, որքան էլ որ հասկանալի լինեն, այլ թե արդյոք գործի կոնկրետ հանգամանքներում նրա մտավախությունները կարող են համարվել օբյեկտիվորեն արդարացված (Wloch-ն ընդդեմ Լեհաստանի (որոշում), Dakaras-ն ընդդեմ Լիտվայի (որոշում), Priebke-ն ընդդեմ Իտալիայի (որոշում), Mustafa (AbuHamza)-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշում), §§ 37-40, գործը քննող դատարանի անկողմնակալության վրա մամուլի լուսաբանման ազդեցության վերաբերյալ):

Հարկ է նկատել, որ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից վերը նշված գաղտնալսումների հրապարակումները որպես ընտրակաշառք տալ, ստանալու դեպքերի բացահայտում ներկայացնելը, ոչ միայն խախտում է անմեղության կանխավարկածը, այլև խախտում է նախաքննական գաղտնիքի հրապարակման անթույլատրելիության պահանջները և այս պարագայում միանշանակ կարող ենք արձանագրել, որ **նախընտրական փուլում կոնկրետ «Ուժեղ Հայաստան» կուսակցության վերաբերյալ գործերով կիրառվում է ակնհայտ ընտրովի մոտեցում, քանի որ համանման, կամ նույնական մոտեցում այլ անձանց վերաբերյալ չի իրականացվում:**

Նախաքննական նյութերի համակարգված և փուլային հրապարակումը քարոզարշավի ընթացքում վկայում է իրավապահ մարմնի կողմից իր լիազորությունների օգտագործման մասին՝ **ընտրողների շրջանում կոնկրետ քաղաքական ուժի նկատմամբ կանխակալ բացասական վերաբերմունք ձևավորելու համար:**

Ընդ որում, նշված դիրքորոշմանը հանգել ենք նաև այն պատճառաբանությամբ, որ հիշյալ ձայնագրությունների հիմքով հարուցված քրեական վարույթների շրջանակներում, երբ վարույթն իրականացնող մարմինները դատարան են ներկայացրել միջնորդություններ՝ ենթադրյալ հանցանք կատարած անձանց նկատմամբ խափանման միջոցներ (այդ թվում՝ կալանք) կիրառելու վերաբերյալ, դատարանները մերժել են այդ միջնորդությունները՝ հիմնավոր կասկածի բացակայության հիմքով:

Չնայած այս կարևոր հանգամանքին՝ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն կամ որևէ այլ իրավապահ մարմին նշված գործերով նախաձեռնված քրեական վարույթների ընթացքի վերաբերյալ որևէ տեղեկացում կամ լրացուցիչ տեղեկատվություն չի տրամադրել:

Տպավորություն է ստեղծվում, թե ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նպատակն էր հանրությանը հրամցնել միայն ձայնագրությունների նախնական «աղմկոտ էֆեկտը», այդպիսով տպավորություն ստեղծելով, թե «Ուժեղ Հայաստան» կուսակցության վերաբերյալ առկա են աղմկահարույց քրեական գործեր, իսկ թե հետագայում իրավական գործընթացում ի՞նչ է պարզվել կամ արձանագրվել դատարանի կողմից՝ այլևս էական նշանակություն չունի և չպետք է ներկայացվի հանրությանը, ինչն անթույլատրելի է:

Ընդ որում, նշված գործելաոճի բացասական ազդեցությունը հատկապես մեծ նշանակություն է ստանում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, երբ պետական մարմինների յուրաքանչյուր գործողություն, հայտարարություն կամ հրապարակում կարող է անմիջական ազդեցություն ունենալ ընտրական գործընթացի և ընտրողների քաղաքական կամքի ձևավորման վրա: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ հրապարակված հայտարարությունները, ինչպես նաև լայն հանրային տարածում ստացած ձայնագրությունները, ուղղակիորեն վնասում են «Ուժեղ Հայաստան» կուսակցության և դրա ներկայացուցիչների հանրային հեղինակությանը, ձևավորում բացասական հանրային ընկալում և ընտրողների շրջանում ստեղծում կանխակալ վերաբերմունք:

Հատկանշական է, որ նման տեղեկատվության տարածումը տեղի է ունեցել ընտրական գործընթացի ամենազգայուն փուլում՝ այն ժամանակ, երբ քաղաքական ուժերը մրցակցում են ընտրողների վստահության և աջակցության համար: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, թե տվյալ գործողությունները ինչ իրավական նպատակ են հետապնդել, դրանց փաստացի հետևանքը դարձել է ընտրողների քաղաքական ընտրության վրա ազդեցություն գործադրելը: Ընտրողը, ստանալով պետական մարմնի կողմից հրապարակված նման բնույթի տեղեկություններ, անխուսափելիորեն ձևավորում է վերաբերմունք տվյալ քաղաքական ուժի նկատմամբ, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ նրա հետագա քվեարկության որոշման վրա:

Ավելին, ժողովրդավարական ընտրությունների հիմնարար սկզբունքներից է պետական մարմինների քաղաքական չեզոքության և հավասարության պահպանումը: Պետական մարմինները պարտավոր են իրենց գործունեությամբ չստեղծել այնպիսի իրավիճակ, որը թեկուզ անուղղակիորեն կարող է նպաստել կամ վնասել ընտրություններին մասնակցող որևէ քաղաքական ուժի: Մինչդեռ տվյալ դեպքում ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի գործողությունների հետևանքով ստեղծվել է մի իրավիճակ, որի արդյունքում ընտրողներին փոխանցվել են այնպիսի տեղեկություններ և գնահատականներ, որոնք օբյեկտիվորեն կարող են ազդել նրանց քաղաքական նախասիրությունների և ընտրական վարքագծի վրա:

Հետևաբար, առկա են բավարար հիմքեր պնդելու, որ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն, դուրս գալով նախընտրական գործընթացում պետական մարմիններից պահանջվող առավելագույն զսպվածության և քաղաքական չեզոքության շրջանակներից, փաստացի իրականացրել է ընտրական գործընթացի նկատմամբ անուղղակի և ոչ իրավաչափ միջամտություն՝ ազդելով ընտրողների քաղաքական կամքի ազատ ձևավորման և արտահայտման գործընթացի վրա: Նման վարքագիծը անհամատեղելի է ազատ, արդար և մրցակցային ընտրությունների միջազգային չափանիշների, *ինչպես նաև պետական իշխանության մարմինների կողմից հավասար և անկողմնակալ վերաբերմունքի սկզբունքի* հետ:

5.2. Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի անվանումների հրապարակային շահարկումը

Անդրադառնալով վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի խախտմանը՝ պաշտոնատար անձանց կողմից հարկ է արձանագրել, որ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հրապարակված ձայնագրությունների հրապարակումից հետո, իշխող քաղաքական ուժի տարբեր ներկայացուցիչներ, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահը, Ազգային ժողովի պատգամավորներ, ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը իրենց ֆեյսբուքյան հարթակներով **անմիջապես անդրադառնում են այդ նյութերին, տարածելով և մեկնաբանելով դրանք՝ կրկին լրջագույնս խախտելով անմեղության կանխավարկածը:**

Իրենց հրապարակումներում նշված անձինք, ամբողջությամբ անտեսում են անմեղության կանխավարկածի սկզբունքը, ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից տարածած նախնական և դեռևս նախաքննության փուլում գտնվող քրեական վարույթների շրջանակներում կատարում է ենթադրյալ հանցանք կատարած անձանց նկատմամբ **մեղադրական հայտարարություններ և պնդումներ, ինչն անթույլատրելի է:**

Կրկին նշենք, որ հրապարակված ձայնագրությունների առնչությունը՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը նույնիսկ դրանց բովանդակության պայմաններում առկա չէ: Նշված ձևով և մոտեցումներով տեղեկատվությունը հանրության հնարավոր ավելի մեծ զանգվածների հասցնելը ոչ այլ ինչ է, քան **վարչական ռեսուրսի օգտագործմամբ հակաքարոզչության իրականացում:** Նշվածը ևս մեկ անգամ հաստատում է մեր կասկածներն առ այն, որ իշխող քաղաքական ուժը, իրավապահ մարմնի՝ այս դեպքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներգրավմամբ զբաղվում է «Ուժեղ Հայաստան» կուսակցության վերաբերյալ ոչ օրինաչափ հակաքարոզչության իրականացմամբ, ինչը խաթարում է ընտրությունների ազատության և հավասարության սկզբունքները: Պետք է նկատել, որ ՀՀ ԿԸՀ-ի կողմից համապատասխան գրություն էր հասցեագրվել նման վարքագծի կանխարգելման նպատակով, որը ուղիղ անտեսվել էր իրավասու մարմինների կողմից:

5.3. ՀՀ ԿԸՀ նախագահի 20.05.2026 թվականի գրության իրավական նշանակությունը

Այս համատեքստում հատկապես կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ նշված խնդիրը արձանագրվել և կանխարգելման առարկա է դարձել ոչ միայն դիմողի կողմից, այլև հենց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մակարդակով: Մասնավորապես, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 20.05.2026 թվականի գրությամբ, ի պատասխան 19.05.2026 թվականի դիմումի, տեղեկացվել է, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական

հանձնաժողովը գրությամբ դիմել է ՀՀ քննչական կոմիտե և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե՝ խնդրելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով, նշված կառույցների կողմից տարածվող հաղորդագրություններում զերծ մնալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների անվանումները հիշատակումից:

Վերոգրյալը փաստում է, որ նույնիսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստացի ճանաչել է իրավապահ մարմինների հաղորդագրություններում ընտրություններին մասնակցող կուսակցությունների կամ դաշինքների անվանումների հիշատակման վտանգավորությունը՝ այն դիտարկելով որպես հավասար հնարավորությունների սկզբունքի խաթարման ռիսկ: Այլ կերպ ասած՝ ԿԸՀ-ի նշված գրությունը ինքնին հաստատում է, որ նախընտրական շրջանում իրավապահ մարմինների կողմից քրեական վարույթների վերաբերյալ հրապարակային հաղորդագրությունների բովանդակությունը կարող էր ունենալ ոչ միայն տեղեկատվական, այլև ընտրական գործընթացի վրա ազդեցություն ունեցող բնույթ:

Այնուամենայնիվ, չնայած ԿԸՀ-ի կողմից նման կանխարգելիչ դիրքորոշման արտահայտմանը, իրավասու մարմինների հետագա վարքագիծը փաստացի չի համապատասխանել այդ պահանջին: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից նախաքննական նյութերի և ձայնագրությունների հրապարակումը, դրանց կապակցությամբ կոնկրետ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժի անվան հիշատակումը կամ դրա հետ առնչության տպավորության ստեղծումը, ինչպես նաև իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչների կողմից այդ նյութերի անմիջական տարածումն ու մեղադրական բնույթի մեկնաբանությունները վկայում են, որ ԿԸՀ-ի կողմից մատնանշված ռիսկը ոչ միայն չի կանխվել, այլև իրականացվել է գործնականում:

Այսպիսով, տվյալ պարագայում առկա է ոչ թե սովորական տեղեկատվական հաղորդակցություն քրեական վարույթների վերաբերյալ, այլ իրավապահ մարմնի հրապարակային գործունեության այնպիսի օգտագործում, որը նախընտրական շրջանում օբյեկտիվորեն կարող էր ձևավորել ընտրողների մոտ կոնկրետ քաղաքական ուժի նկատմամբ կանխակալ բացասական վերաբերմունք: Ավելին, նման վարքագիծը տեղի է ունեցել այն պայմաններում, երբ ԿԸՀ-ն նախապես մատնանշել էր նման հաղորդագրություններում ընտրություններին մասնակցող ուժերի անվանումները հիշատակելու անթույլատրելիությունը՝ հավասար հնարավորությունների **ապահովման** նկատառումով:

Հետևաբար, ԿԸՀ-ի նշված գրությունը լրացուցիչ հաստատում է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և այլ իրավասու մարմինների գործողությունները պետք է գնահատվեն ոչ միայն անմեղության կանխավարկածի խախտման, այլև վարչական ռեսուրսի օգտագործմամբ ընտրական գործընթացին ոչ իրավաչափ միջամտության տեսանկյունից: Այդ վարքագիծը խաթարել է ընտրական մրցակցության հավասարությունը, վնասել է կոնկրետ քաղաքական ուժի հեղինակությանը, ազդել է ընտրողների կամքի ազատ ձևավորման վրա և հակասել է ԿԸՀ-ի կողմից նույն հարցով նախապես արտահայտված կանխարգելիչ դիրքորոշմանը:

6. Անհավասար տեղեկատվական միջավայրը և ատելության խոսք

Ընտրական գործընթացի տեղեկատվական միջավայրի գնահատման շրջանակում էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակվելուց հետո՝ 2026 թվականի փետրվարի 7-ից սկսած, Հայաստանի Հանրապետության գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանի վերաբերյալ հնչել են մի շարք արտաքին քաղաքական գործիչների հրապարակային աջակցական հայտարարություններ: Նման հայտարարությունները, հատկապես այն պայմաններում, երբ Նիկոլ Փաշինյանը միաժամանակ հանդիսացել է գործող վարչապետ և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող անձ, չեն կարող դիտարկվել միայն որպես սովորական դիվանագիտական հաղորդակցություն: Դրանք օբյեկտիվորեն ձևավորել են ընտրական գործընթացի այնպիսի տեղեկատվական ֆոն, որտեղ գործող իշխանության քաղաքական առաջնորդը ներկայացվել է որպես միջազգային գործընկերների կողմից աջակցություն վայելող, տարածաշրջանային խաղաղության, եվրոպական մերձեցման և արտաքին աջակցությամբ պայմանավորված տնտեսական հնարավորությունների հիմնական կրող:

Այս համատեքստում, մասնավորապես, 2026 թվականի փետրվարի 9-ին ԱՄՆ փոխնախագահ Ջեյմս Դի Վենսը, պատասխանելով Հայաստանում առաջիկա ընտրություններին առնչվող հարցին, նշել է, որ եթե իր աջակցությունը որևէ նշանակություն ունի, ապա Նիկոլ Փաշինյանը «անկասկած ունի այդ աջակցությունը»՝ միաժամանակ Փաշինյանի առաջնորդությունը կապելով երկարաժամկետ գործընկերության և տարածաշրջանային ծրագրերի իրականացման հետ: Նույն հայտարարությունների շրջանակում ԱՄՆ փոխնախագահը Հայաստանի հետ տնտեսական, էներգետիկ և անվտանգային համագործակցության մի շարք խոշոր

նախագծեր ներկայացրել է որպես վարչապետ Փաշինյանի առաջնորդության և նրա որդեգրած խաղաղության օրակարգի արդյունք:¹⁸

Նույն տրամաբանության մեջ պետք է գնահատել նաև ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ 2026 թվականի մայիսի 28-ին հնչեցրած հայտարարությունը, որով նա Նիկոլ Փաշինյանին հայտնել է իր «ԼԻԱԿԱՏԱՐ և ԲԱՅԱՐՁԱԿ աջակցությունը» հունիսի 7-ի ընտրություններում՝ Փաշինյանին ներկայացնելով որպես իր տեսլականը կիսող առաջնորդ և Հայաստանի ու Հարավային Կովկասի խաղաղության ու բարեկեցության օրակարգի առանցքային գործընկեր:¹⁹

Նախընտրական ժամանակահատվածում նման աջակցական ուղերձներ են ձևավորվել նաև եվրոպական ուղղությամբ: 2026 թվականի մայիսի 5-ին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, Հայաստան կատարած պետական այցի շրջանակում, նշել է, որ Ֆրանսիան ուղեկցում և աջակցում է այն գործընթացին, որը Նիկոլ Փաշինյանի աշխատանքի և հանձնառության արդյունքն է, և շեշտել, որ Ֆրանսիան լինելու է Հայաստանի կողքին:²⁰ Այդ հայտարարությունները արվել են ընտրություններից մոտ մեկ ամիս առաջ՝ բարձր հանրային տեսանելիություն ունեցող պետական այցի և լայն մեդիա լուսաբանման պայմաններում:

Նման արտաքին աջակցական հայտարարությունների ազդեցությունը չի սահմանափակվել միայն դիվանագիտական հարաբերությունների ոլորտով: Դրանք ընտրողների մոտ կարող էին ձևավորել այն ընկալումը, որ գործող իշխանության վերարտադրությունը միջազգային աջակցության, խաղաղության օրակարգի շարունակականության, արտաքին տնտեսական ծրագրերի և եվրոպական մերձեցման գրեթե անփոխարինելի նախապայման է: Այսինքն՝ ընտրողի քաղաքական կամքի ձևավորումը տեղի է ունեցել ոչ միայն ներքին քաղաքական մրցակցության պայմաններում, այլև արտաքին քաղաքական հեղինակության և միջազգային աջակցության գործոնի ազդեցության ներքո, որը փաստացի աշխատել է ի շահ գործող վարչապետի և նրա գլխավորած քաղաքական ուժի:

Միևնույն ժամանակ, քվեարկությունից հետո հնչած հայտարարությունները ևս պետք է դիտարկվեն ընտրական գործընթացի ամբողջականության գնահատման համատեքստում: Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին Նիկոլ Փաշինյանի հաղթանակը որակել է նաև որպես Հայաստանի ինքնիշխանության և ընտրելու

¹⁸ Ջեյմս Դի Վենսի հայտարարություններ, 09.02.2026՝

<https://www.primeminister.am/hy/press-release/item/2026/02/09/Nikol-Pashinyan-I-D-Vance-Announcement/>

¹⁹ Դոնալդ Թրամփի Truth Social գրառում, 28.05.2026՝

<https://truthsocial.com/@realDonaldTrump/posts/116648998520896910>

Բովանդակությունը հաստատող լրատվական աղբյուր՝

<https://www.azatutyun.am/a/trampn-ir-liakatar-ajaktsoutyounn-e-haytnoum-pashinyanin/33767269.html>

²⁰ Էմանուել Մակրոնի պետական այցի հայտարարություններ, 05.05.2026՝

<https://www.primeminister.am/hy/press-release/item/2026/05/05/Nikol-Pashinyan-meeting-Emmanuel-Macron/>

իրավունքի հաղթանակ²¹, իսկ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լյայենը հայտարարել է, որ Հայաստանը կարող է հույս դնել Եվրոպական միության վրա: Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը և շնորհավորել է Նիկոլ Փաշինյանին՝ խոսելով Հայաստանի խաղաղության, ինքնիշխանության և Եվրոպայի հետ մերձեցման ուղղությամբ համագործակցությունը շարունակելու մասին:²²

Թեև քվեարկությունից հետո հնչած հայտարարությունները չեն կարող հետադարձաբար ազդած լինել քվեարկության պահին ընտրողի կամքի ձևավորման վրա, դրանք հաստատում են այն նույն արտաքին քաղաքական տեղեկատվական գծի շարունակականությունը, որով Հայաստանի ընտրությունները ներկայացվել են ոչ միայն որպես ներքաղաքական մրցակցություն, այլ նաև որպես գործող վարչապետի արտաքին քաղաքական ուղղության նկատմամբ միջազգային վստահության հանրաքվե: Այդ հանգամանքը լրացուցիչ կարևորություն է ստանում այն պայմաններում, երբ ընտրական գործընթացի ընթացքում արդեն իսկ արձանագրվել էին պետական ռեսուրսի, պաշտոնեական կարգավիճակի, հանրային տեղեկատվական հարթակների և արտաքին քաղաքական օրակարգի անհավասար օգտագործման վերաբերյալ փաստեր: Հետևաբար, արտաքին քաղաքական աջակցական հայտարարությունները պետք է գնահատվեն որպես ընտրական տեղեկատվական միջավայրի վրա ազդած գործոն, որը նպաստել է գործող իշխանության համար լրացուցիչ քաղաքական և հոգեբանական առավելության ձևավորմանը և խաթարել է ընտրողների ազատ կամքի ձևավորման չեզոք պայմանները:

6.1. ՎԴ/8592/05/26 վարչական գործով հաստատված հանգամանքներ

Ընտրական գործընթացը իրականացվել է նաև աննախադեպ ատելության խոսքի համակարգված տարածմամբ, ինչը ևս անդառնալի կերպով հանգեցրել է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքների խախտումներին: ՀՀ վարչական դատարանը (թիվ ՎԴ/8592/05/26 գործով) հաստատված է համարել, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող Նիկոլ Փաշինյանի հրապարակային հայտարարությունները (մասնավորապես՝ 09.05.2026թ. Կապանում և 18.05.2026թ. ՋԼՄ-ներում) դուրս են քաղաքական քննադատության և թույլատրելի բանավեճի սահմաններից:

²¹ Էմանուել Մակրոնի շնորհավորանքը, 08.06.2026՝

<https://www.primeminister.am/en/congratulatory/item/2026/06/08/Nikol-Pashinyan-Congratulations-Emmanuel-Macron/>

²² Ուրսուլա Ֆոն դեր Լյայենի շնորհավորանքը, 08.06.2026՝

<https://www.primeminister.am/en/congratulatory/item/2026/06/08/Nikol-Pashinyan-Congratulations-Ursula-Von-Der-Leyen/>

Դատարանը արձանագրել է, որ նման խոսույթն անհամատեղելի է ազատ, խաղաղ ու առողջ ընտրական միջավայրի հետ (համաձայն ՍԴՈ-1606 որոշման չափանիշների), իսկ ԿԸՀ-ն թերի է գնահատել հնչեցված արտահայտությունները:

Մասնավորապես դատարանը եզրակացրել է, որ.

-նախընտրական քարոզչության ընթացքում օգտագործված արտահայտությունները դուրս են քաղաքական քննադատության և ընդունելի քաղաքական բանավեճի սահմաններից,

- դրանք օբյեկտիվորեն կարող են ընկալվել այլ համատեքստում, քան ամրագրված է Պատասխանողի որոշմամբ,

- ՍԴՈ-1606 որոշմամբ ամրագրված չափանիշների համաձայն՝ նման խոսույթը համատեղելի չէ ազատ, խաղաղ և առողջ ընտրական միջավայրի հետ,

- Պատասխանողը չի իրականացրել ներկայացված արտահայտությունների բավարար և ամբողջական գնահատում»:

Միևնույն ժամանակ Դատարանի կողմից մերժվել էր նախազգուշացում կիրառելուն պարտավորեցնելու պահանջը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ մատնանշած գործողությունները յուրաքանչյուր դեպքում դրսևորվել են տարբեր ձևերով և չեն կրկնվել, դրանք չունեն տևող և շարունակվող բնույթ»:

Սակայն դատարանի կողմից հաշվի չէր առնվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական հոլովակի պարբերական ցուցադրության հարցը այն համատեքստում, որ ատելության խոսք տարածող և Դատարանի կողմից ազատ, խաղաղ և առողջ ընտրական միջավայրի հետ անհամատեղելի հանդիսացող խոսույթը պարբերաբար ցուցադրվել է հեռուստատեսությամբ:

Նման վարքագծով և նման ատելության խոսքի տարածմամբ փաստացի ուղղակի սպառնալիքների են ենթարկվել քաղաքական հակառակորդ հանդիսացող ուժերը և նրանց համակիրների հոծ շրջանակները:

Այս հանգամանքների պայմաններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի եզրահանգումը առավել ևս անհիմն է, քանի որ ԿԸՀ-ն, մի կողմից, արձանագրել է ընտրական գործընթացի ընթացքում ներկայացված դիմումների, առանձին տեղամասերում արդյունքների անվավեր ճանաչման և վարչական դատարանի գործերի առկայությունը, սակայն, մյուս կողմից, որոշման եզրափակիչ մասում հանգել է հետևյալ ընդհանրական եզրակացության.

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայացած հերթական ընտրությունների նախապարաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա»:

Ուշագրավ է, որ ԿԸՀ-ի կողմից նույնիսկ անդրադարձ չի կատարվել հենց նույն Սահմանադրական դատարանի կողմից ՍԴՈ-1606 որոշմամբ արձանագրված հետևյալ իրավական դիրքորոշմար. «Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ վերլուծված՝ վարչապետի սահմանադրական կարգավիճակը և լիազորությունների ծավալը Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության պայմաններում, ինչպես նաև քաղաքական մեծամասնության ունեցած ազդեցությունը հանրային իշխանության մարմինների համակարգում, ընդգծում է նրանց կողմից գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը հայաստանյան քաղաքական խոսքում՝ արելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքի և վարքագծի որևէ դրսևորում, ներառյալ նաև նախընտրական քարոզչության ժամանակ հնչեցվող խոսքում բացառելու նպատակով: Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կողմից իրականացվող նախընտրական քարոզչությունն ուղղված է ընտրողների վստահությունը ձեռք բերելուն (ամրապնդելուն): Այդ գործընթացում առանցքային դեր պետք է կատարի փոփոխական, սոցիալական, պաշտպանական և այլ բնագավառներում քաղաքական ուժերի ծրագրային դրույթների մասին ընտրողների իրազեկումը և այդ դրույթների առարկայական քննարկումը՝ չբացառելով նախընտրական քարոզչության ժամանակ սուր քննադատական խոսքը, որը, սակայն, չպետք է ուղեկցվի արելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքով և վարքագծով: Ընդ որում, նշված գործընթացի արդյունավետության ապահովման հարցում մեծ դերակատարում ունեն ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերը:»: Արդյունքում չնայած մեր Դաշինքի կողմից ձեռնարկված միջոցներին և իրավասու մարմինների կողմից կանխարգելման իրական հնարավորություններին և կառուցակարգերին դրսևորվել է այնպիսի ազդեցություն, որն անխուսափելիորեն ազդեցություն է թողել ընտրողների կամքի արտահայտման վրա:

6.2. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական նյութերը

Խորհրդարանական ընտրությունների ողջ գործընթացն ընթացել է ընտրական իրավունքի առանցքը կազմող ազատության և հավասարության սկզբունքների կոպտագույն խախտումներով: Մասնավորապես, նախընտրական քարոզչությունն ուղեկցվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից այնպիսի տեսալսողական նյութերի տարածումով, որոնց բովանդակությունն ամբողջությամբ պարունակել է վիրավորական և զրպարտչական բնույթի արտահայտություններ՝ ուղղված ընդդիմադիր քաղաքական ուժերին՝ այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքին: Արդյունքում մեր կողմից արձանագրվել են «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով և «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված նախընտրական քարոզչության ընթացքում

ընտրություններին մասնակցող կուսակցությունների և/կամ կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններով, անկողմնակալ և ոչ խտրական տեղեկատվության հրապարակման վերաբերյալ պահանջների մի շարք խախտումներ:

Մասնավորապես, հրապարակված բազմաթիվ նյութերում տեղ են գտել այնպիսի վիրավորական արտահայտություններ, ինչպիսիք են «կալուզացի օլիգարխ Սամվել Կարապետյանը», «պատերազմի եռագլուխ կուսակցությունը» և այլն: «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքին են վերագրվել իրականությանը չհամապատասխանող և կուսակցության բարի համբավն արատավորող գործողություններ, ինչպիսիք են «ձայներ գնելը», «ժողովրդին խաբելը», «պատերազմ հրահրելը», «Հայաստանի անկախությունը վերացնելը» և այլն: Բացի այդ, նախընտրական քարոզչության ողջ ընթացքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից հեռուստաընկերություններին տրամադրված գովազդային նյութերում և հրապարակվող ելույթներում նպատակադրված կերպով առաջ է տարվել այն մտացածին թեզը, որ «ընդդիմության վարչապետի միասնական թեկնածուն Ռոբերտ Քոչարյանն է», ինչն ակնհայտ կեղծ տեղեկատվություն է հանդիսացել և ընտրազանգվածին մոլորության մեջ գցելու նպատակ է հետապնդել: Ընդ որում, գովազդներն ուղեկցվել են նույն բովանդակությունը կրող լուսանկարներով, տեսահոլովակներով, որոնցում ցուցադրվել են պատերազմական գործողություններից դրվագներ, «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի առաջնորդ Սամվել Կարապետյանի լուսանկարը և այլն:

Նման բովանդակությամբ տեսալսողական նյութերի հրապարակումն ակնհայտորեն խախտում է ընտրական իրավունքի իրացման շրջանակներում կուսակցությունների համար անկողմնակալ և հավասար պայմաններով տեղեկատվության հրապարակման օրենսդրական պահանջը և ժողովրդավարական ընտրական գործընթացներում քաղաքական քննադատության թույլատրելի սահմանները, ինչը պետք է պատշաճ գնահատական ստանար վերահսկողություն իրականացնող պետական մարմինների՝ այդ թվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից:

Հետևաբար, արձանագրված փաստը վերաբերում է ոչ թե առանձին քարոզչական գնահատականների կամ կոշտ քաղաքական քննադատության, այլ այնպիսի տեսալսողական նյութերի տարածմանը, որոնք համակարգված ձևով բացասական, վախի և թշնամանքի վրա հիմնված պատկեր են ձևավորել քաղաքական մրցակիցների նկատմամբ:

Այս հանգամանքը խախտել է մրցակցության հավասարությունը, քանի որ քարոզչական դաշտում մեկ քաղաքական ուժի կողմից օգտագործվել է ոչ թե ծրագրային մրցակցության, այլ հակառակորդին հանրային ընկալման մեջ վտանգի, պատերազմի կամ հանցավորության հետ նույնացնելու մեխանիզմ:

Նման տեղեկատվական ազդեցությունը կարող էր ձևավորել ընտրողի կամքը ոչ թե ազատ և տեղեկացված ընտրության, այլ վախի, մոլորության կամ կանխակալ վերաբերմունքի հիման վրա, **ինչը սահմանադրահիրավական առումով խաթարում է ընտրողի ազատ կամարտահայտության երաշխիքը:**

6.3. Հանրային հեռուստաընկերության և Հեռուստատեսության ու ռադիոյի հանձնաժողովի վարքագիծը

Նախընտրական քարոզչության ընթացքում մեր կողմից վերոգրյալ հիմնավորումներով դիմումներ են ներկայացվել տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող օրենքով սահմանված իրավասու պետական մարմին՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին, ինչպես նաև Հայաստանի Հանրային հեռուստաընկերությանը, սակայն խախտումները վերացնելու ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել:

Հատկանշական է, որ Հանրային հեռուստաընկերությունը փաստացի գրաքննություն է իրականացրել նախընտրական քարոզչության գրեթե բոլոր մասնակիցների նկատմամբ, բացառությամբ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության: Նման վարքագիծը հատկապես անընդունելի է Հանրային հեռուստաընկերության պարագայում՝ հաշվի առնելով վերջինիս՝ Հանրային հեռարձակող հանդիսանալու, և դրանով պայմանավորված՝ նաև առավել լայն լսարան և ընտրազանգվածի վրա մեծ ազդեցություն ունենալու հանգամանքը:

Մասնավորապես, Հանրային հեռուստաընկերության կողմից որպես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչության հոլովակ տարածվող տեսանյութով հնչեցվում էր հետևյալ բովանդակությամբ տեքստը. «Կալուզացի օլիգարխ Սամվել Կարապետյանը, Հայաստանի քրեաօլիգարխիկ կլանի համահիմնադիր Ռոբերտ Քոչարյանը և նրա կամակարար Գագիկ Ծառուկյանը միասին կազմում են պատերազմի եռագլուխ կուսակցությունը: Պատերազմի այս կուսակցության նպատակը մեկն է՝ ժողովրդին խաբելով, կեղծ ու հիմար թեզերով վախեցնելով, ձայներ գնելով գալ իշխանության: Վերահասարակել օլիգարխիկ բեզարիդելը Հայաստանում, հրահրել նոր պատերազմ Ադրբեջանի հեղ և վերացնել Հայաստանի անկախությունը՝ սրանալով ծայրագավառապետի աթոռ: Այս երեքի բերելիք պատերազմում իրենց որդիները չեն կռվելու և չեն զոհվելու: Այդ չակերտավոր առաքելությունը ժողովրդին է, ոչ թե օլիգարխիների կապույտ արյունով զավակներինը: Հունիսի 7-ին գնա ընտրարտեղամաս, վերցրու 16 համարի քվեաթերթիկը և տե՛ր կանգնիր խաղաղությունը, տե՛ր կանգնիր երեխաներիդ խաղաղ ապագային, տե՛ր կանգնիր Հայաստանի անկախությանը»:

Ակնհայտ է, որ նման բովանդակությամբ նյութերի հեռարձակումը հակասում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռարձակողների կողմից ընտրական օրենսդրությամբ առաջնորդվելու, անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն ներկայացնելու, հավասար և ոչ խտրական պայմաններ ապահովելու օրենսդրորեն սահմանված պահանջները: Արդյունքում խաթարվել է նաև ընտրողների իրավունքը՝ ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների և նրանց նախընտրական ծրագրերի վերաբերյալ ճշտված և հավաստի տեղեկատվություն ստանալու առնչությամբ:

Նման բովանդակությամբ տեսանյութերի հրապարակումը հակասում է նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 11.02.2026 թվականի ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին թիվ 19-Ա որոշմանը, որով սահմանվում են Հանձնաժողովի կողմից ընտրական օրենսդրության պահանջներին համապատասխան հեռարձակողների գործունեությունը գնահատելու նպատակով իրականացվող մշտադիտարկման և գնահատման չափորոշիչները:

Մասնավորապես, որոշմամբ սահմանված չափանիշներից են նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռարձակողների կողմից տեսալսողական հաղորդումներում, ի թիվս այլնի, հավաստի ստուգված, անկողմնակալ փաստի կամ իրադարձության մասին տեղեկացումը, փաստերի և կարծիքների միջև հստակ տարբերությունը, կարծիքների անաչառությունը, կշռադատվածությունն ապահովելը, էթիկական նորմերի պահպանումը և այլն:

Այնուամենայնիվ, չնայած վերը թվարկված ակնառու խախտումներին և դրանց վերաբերյալ մեր կողմից հնչեցված ահազանգերին, իրավասու մարմինների կողմից պատշաճ արձագանք չի տրվել և նախընտրական քարոզչության ողջ շրջանն ընթացել է «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական իրավունքի կոպիտ խախտումներով:

7. Քվեարկության և ձայների հաշվարկման փուլում արձանագրված խախտումները

7.1. Ընտրողների նույնականացման տեխնիկական սարքերի տվյալները և ձեռքով մուտքագրված տվյալների մեծածավալ կիրառումը

Հատկանշական է, որ տեխնիկական սարքավորումներից դուրս բերված և հատուկ համակարգչային ծրագրի միջոցով ամփոփված տվյալներով՝ տեխնիկական

սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը կազմել է 1,474,550, մինչդեռ մասնագետի կողմից անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղծաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների թիվը ըստ ԿԸՀ-ի կազմել է **79,125**:

Այլ կերպ ասած՝ տասնյակ հազարավոր դեպքերում ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները տեխնիկական սարքավորման միջոցով ավտոմատ եղանակով չեն ներմուծվել, այլ մուտքագրվել են մասնագետի ձեռքով: Նշված թիվը կազմում է ընդհանուր տպված քվեարկության կտրոնների **շուրջ 5.4 տոկոսը, ինչը չի կարող գնահատվել որպես աննշան կամ զուտ տեխնիկական շեղում**: Երբ այդպիսի ծավալով ընտրողների նույնականացման գործընթացում ավտոմատացման փոխարեն կիրառվում է մարդկային միջամտություն, օբյեկտիվորեն մեծանում են սխալի, ոչ պատշաճ նույնականացման, վերահսկողության թուլացման և հետագա ստուգման անհնարինության ռիսկերը:

Այս հանգամանքը հատկապես կարևոր է այն պատճառով, որ ընտրությունների **ազատության և վստահելիության ապահովման համար ընտրողի ինքնության ստուգման մեխանիզմը պետք է լինի կանխատեսելի, ստուգելի և հնարավորինս զերծ մարդկային սուբյեկտիվ միջամտությունից**:

Սույն դիմումով վիճարկման առարկան այն է, թե արդյոք ձեռքով մուտքագրման բացառության կիրառման 79,125 դեպքերը, որոնք տեղի են ունեցել ամբողջ հանրապետության տարածքում մեկ ընտրական օրվա ընթացքում, կարող են դիտվել որպես սովորական կամ աննշան երևույթ:

Չեն կարող՝ առնվազն երեք պատճառով.

Առաջին՝ ստուգելիության խնդիրը:

Ավտոմատ սկանավորումը ստեղծում է մեքենայի կողմից գեներացված գրառում, որը կապում է կոնկրետ փաստաթուղթը ընտրողի կոնկրետ գրառման հետ և հետագայում ենթակա է անկախ ստուգման: Ձեռքով մուտքագրումը, հակառակը, արձանագրում է միայն այն տվյալը, որը մուտքագրել է մասնագետը: Չկա որևէ անկախ մեխանիզմ՝ ստուգելու, թե մուտքագրված համարը համապատասխանում էր ներկայացված փաստաթղթին, արդյոք փաստաթուղթն իսկական էր, կամ արդյոք այն ներկայացնող անձը նույն անձն էր, ում այն տրված էր:

Ուստի 79,125 ձեռքով մուտքագրված գրառումները, իրենց բնույթով, որևէ իմաստալից վերստուգման ենթակա չեն:

Երկրորդ՝ ընտրողների ցուցակներից դուրս գտնվող անձանց հետ կապը:

Սույն դիմումն արդեն նշել է, որ ընտրություններին մասնակցել են մոտ 16,738 անձինք, որոնց տվյալները գաղտնի էին դասակարգված, իսկ նրանց կցագրված ընտրական տեղամասերը չէին հրապարակվել: Այս ընտրողների նկատմամբ նախնական

գրանցման վրա հիմնված վերահսկողության մեխանիզմ փաստացի գոյություն չի ունեցել:

Ձեռքով մուտքագրումն այն մեխանիզմն է, որի միջոցով սկանավորման ենթակա, գրանցամատյանի հետ կապակցված փաստաթուղթ չունեցող անձը կարող էր ստանալ քվեաթերթիկ: Ձեռքով մուտքագրման միջոցով նույնականացված ընտրողների խմբի և հրապարակման ենթակա չեղած գրանցման տվյալներ ունեցող անձանց խմբի միջև հնարավոր համընկնման հարցը ԿԸՀ-ն երբևէ չի ուսումնասիրել:

Երրորդ՝ ընտրությունների արդյունքը որոշած տարբերության չափը:

Ինչպես ցույց է տրվել վերևում՝ 4.7 ենթաբաժնում, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը 4 տոկոսանոց շեմը չի հաղթահարել ընդամենը 135 ձայնի տարբերությամբ: Մինևույն ժամանակ, ձեռքով կատարված նույնականացումների ընդհանուր թիվը կազմել է 79,125:

Նույնիսկ այդ զանգվածի ներսում առկա աննշան անկանոնությունը՝ զգալիորեն ավելի փոքր, քան ընտրական օրվա պայմաններում իրականացվող ցանկացած ձեռքով գործընթացի համար ողջամիտ սխալի սահմանը, թվաբանականորեն բավարար կլիներ շեմի հաղթահարման հարցում արդյունքը փոխելու համար:

ՀՀ ԿԸՀ-ն սահմանափակվել է այն փաստով, որ ձեռքով մուտքագրումը օրենքով թույլատրված է, և դրանով ավարտել է իր քննությունը: Այն որևէ գնահատական չի տվել, թե արդյոք ձեռքով մուտքագրման նման ծավալը, տվյալ ընտրությունների և դրանց արդյունքների կոնկրետ համատեքստում, համատեղելի էր ընտրողների նույնականացման գործընթացի ամբողջականությունն ու ստուգելիությունն ապահովելու պետության պոզիտիվ պարտականության հետ և հենց դրա նաև համադրումը Սահմանադրության 7-րդ հոդվածի պահանջների հետ:

7.2. Գաղտնի տվյալներով ընտրողների մասնակցության խնդիրը

Ընտրությունների ազատ լինելու սկզբունքի երաշխավորման համար պարտադիր վավերապայման է ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցողների տվյալների հասանելիությունը: Մինչդեռ՝ ընտրություններին մասնակցել են հազարավոր անձինք (ինչպես օրինակ համաձայն առերևույթ հրապարակված տվյալների 16738), որոնց տվյալները պահվել են գաղտնի, քվեարկության վայրը պահվել է գաղտնի և հասանելի տեղեկատվություն առկա չի եղել: Ավելին՝ ընտրություններին հնարավոր խախտումների և կեղծիքների կանխարգելման համակարգերը (ինչպես օրինակ անձնագրի ընտրատարածքային տեղամասում հաշվառելը) առհասարակ առկա չի եղել հազարավոր անձանց պարագայում: Նշվածը ինքնին անհնարին է դարձրել այդպիսի կարգավիճակ ունեցող անձանց մասով պատշաճ հսկողական և վերահսկողական մեխանիզմների իրականացումը: Փաստացի նշված խնդիրը առհասարակ որևէ ճանապարհով հաղթահարման ենթակա չէ և բոլոր այն ընտրական տեղամասերում

որտեղ առկա են անձանց քվեաթերթիկներ, որոնք մինչ այդ պատշաճ կերպով ինքնության ստուգում չեն անցել (ինչպես իրականացվում է անձնագրով կամ նույնականացման քարտով, որը ՀՀ օրենսդրության համաձայն հավասարեցված է անձնագրին) անվավեր ճանաչելու ակնհայտ հիմք են պարունակում: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ առհասարակ նշված հարցի վերաբերյալ կամ առնվազն ընտրական տեղամասերի (այսինքն փաստացի քվեարկության վայրի պարզումը, որպեսզի հսկողական մեխանիզմներ մշակվեն) տեղեկատվության տրամադրումը ԿԸՀ-ի կողմից մերժվել էր հղում տալով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 12-րդ մասին, դրանով առհասարակ վերահսկողական որևէ մեխանիզմ հստակ բացառելով: Տեղին է նշել նաև, որ առկա են բազմաթիվ ահազանգեր ՀՀ տարածքից բացակայող անձանց ռեգիստրի տվյալներում առկայության, քվեարկության մասով: Նշվածի տեսանկյունից անվավերության տարրեր են պարունակում նաև **թվով 79,125 քվեաթերթիկները այնքանով, որքանով հնարավոր է առնվազն, որ հենց այդ խնդրի հետ առնչությունը ուղղակի առկա լինի, քանի որ անձնագիրը միայն մուտքագրվել է մասնագետի միջամտությամբ, ինչն արդեն ընտրական գործընթացի վերահսկողության ընդհանուր մոտեցումից շեղում է, իսկ բացասական հետևանքների գնահատման տեսանկյունից հանգեցնում է պետության պոզիտիվ պարտականության ոչ լիարժեք ապահովմանը: Գտնում ենք, որ վերահսկողական մեխանիզմների բացակայությունը նման ընտրության կազմակերպման և դրա հետևանքով հստակ տեղամասերում և ընտրատարածքներում արդյունքները պետք է գնահատվեն Սահմանադրական դատարանի կողմից, այդ թվում դիտարկելով դրանք Սահմանադրության 7-րդ հոդվածի համապատասխանության մասով:**

7.3. Ձինժառայողների քվեարկության կազմակերպման հետ կապված խնդիրները և փարեց ու խոցելի ընտրողների ուղեկցման դեպքերը

Ընտրական իրավունքի համակարգված խախտումների մասին են վկայում նաև այն մեծաքանակ տեսանյութերը, որոնցից ակնհայտ են դառնում զինվորներին սպաների կողմից ուղղորդելու, քվեատուփերում արդեն իսկ պատրաստի ծրարները վերցնելու և տարածքային հանձնաժողովի կողմից իրենց հանձնված ծրարը, առանց այն բացելու, աղբարկղը նետելու, ինչպես նաև սպաների կողմից անմիջապես քվեարկության տուփի մոտ քվեարկությանը հետևելու փաստերը: Նկատենք, որ այս խախտումների համակարգվածության մասին է վկայում այն, որ ճշգրիտ նույնատեսակ խախտումներ են արձանագրվել միանգամայն տարբեր վայրերում: Ավելին փաստացի նշված անձանց ընտրական տեղամաս էին տեղափոխում միավորված և իրենց համար նախատեսված ավտոմեքենայով, ինչն ինքնին անհաղթահարելի ռիսկ էր սահմանում **ընտրության** ազատ արտահայտման առանցքային սկզբունքի պահպանման մասով,

Արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ քվեարկության օրն առողջական խնդիրներ ունեցող կամ տարեց անձանց ուղեկցել են հենց համայնքապետարանի աշխատակիցները, որոնց կողմից մերժվել է վստահված անձանց այն պահանջը, որ վերջիններս ուղեկցելու իրավասություն չունեն և այդպիսի միջամտությունը ուղիղ ազդեցություն կարող է ունենալ ընտրողների կամքի վրա: Մի շարք դեպքերում արձանագրվել են իրավիճակներ, երբ տարեց ընտրողին օգնություն է ցուցաբերել մեկ այլ տարեց անձ, ինչպես նաև գրանցվել են ընտրողի գաղտնի և ազատ կամքի արտահայտմանը միջամտելու այլ դեպքեր, որոնք չեն արժանացել պատշաճ կանխարգելման և վերահսկողության:

7.4. Քվեարկության վայրի փոփոխման դիմումների մերժումը

Կարևոր ենք համարում արձանագրել նաև, որ շուրջ 7000 անձի՝ քվեարկելու ընտրատեղամասը փոխելու դիմումները մերժվել են ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից, ինչի արդյունքում նշված անձինք զրկվել են Սահմանադրությամբ ամրագրված իրենց ընտրական իրավունքի իրականացման հնարավորությունից ընդհանրապես: Ինքնին նման հարցերով դատական վերահսկողության կառուցակարգի վկայակազումը չի կարող լինել պատշաճ, քանի որ կրկին պետք է նշել, որ պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել պատշաճ ընթացքը նման իրավիճակներում, որոնք ուղիղ վերաբերում են ընտրություններին, իսկ նման ծավալի մերժումները վկայում են պետության պոզիտիվ պարտականության խաթարման, պատշաճ վարչարարության երաշխիքների արգելափակման ի թիվս այլի ձևական պահանջների չարաշահման տեսանկյունից: Վեճի առարկա ընտրությունների արդյունքների տեսանկյունից շուրջ 40 ձայն ունեցել է էական ազդեցություն մանդատների բաշխման, արգելապատնեշի հաղթահարման տեսանկյունից, հետևաբար շուրջ 7000 անձի ընտրատեղամասը փոխելու դիմումները մերժելը էական ազդեցություն է ունեցել ընտրությունների վրա:

7.5. Վերահաշվարկների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները

Հատկանշական է, որ մինչ օրս որևէ համոզիչ և իրավաչափ բացատրություն չի ներկայացվել այն հարցի վերաբերյալ, թե ինչպես է հնարավոր, որ պետության պոզիտիվ պարտականությունների անմիջական դրսևորում հանդիսացող ընտրական գործընթացի արդյունքների ամփոփման փուլում արձանագրվեն այդպիսի ծավալի և համակարգային բնույթի անճշտություններ: Ընտրական տեղամասերի հանձնաժողովները, տարածքային ընտրական հանձնաժողովները և Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանդիսանում են ընտրական գործընթացի օրինականության, թափանցիկության և արդյունքների ճշգրտության ապահովման

համար պատասխանատու մարմիններ, հետևաբար ընտրությունների արդյունքների վերաբերյալ կազմվող արձանագրությունները պետք է արտացոլեն ընտրողների կամարտահայտության իրական պատկերը և վայելեն հանրային վստահություն:

Սակայն արդեն իսկ իրականացված շուրջ 637 ընտրական տեղամասերի վերահաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ սկզբնական արձանագրություններում առկա են եղել այնպիսի սխալներ և անհամապատասխանություններ, որոնք հանգեցրել են ոչ միայն «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքին տրված ձայների թվաքանակի փոփոխության և ավելացման, այլ նաև այլ ընդդիմադիր կուսակցությունների և դաշինքների օգտին տրված ձայների վերանայման: Այս հանգամանքը չի կարող գնահատվել որպես մեկուսացված, կամ պատահական բնույթի երևույթ, քանի որ խոսքը վերաբերում է հարյուրավոր ընտրական տեղամասերի, որոնցում վերահաշվարկի արդյունքում արձանագրվել են արդյունքների փոփոխություններ:

Նման իրավիճակում հիմնավոր կասկած է առաջանում ընտրությունների արդյունքների ամբողջական ճշգրտության և հավաստիության նկատմամբ: Եթե վերահաշվարկված 637 տեղամասերում արձանագրվել են այնպիսի սխալներ, որոնք հանգեցրել են ընտրական արդյունքների փոփոխության, ապա բացակայում են որևէ օբյեկտիվ երաշխիքներ, որ նույն կամ նմանատիպ բնույթի խախտումներ և անճշտություններ առկա չեն մնացած ընտրական տեղամասերում, որոնցում վերահաշվարկ չի իրականացվել: Ընդհակառակը, վերահաշվարկների արդյունքները ձևավորում են բավարար փաստական հիմք ենթադրելու, որ հայտնաբերված խախտումները կարող են կրել ոչ թե բացառիկ, այլ կրկին համակարգային բնույթ:

Ընդ որում, ընտրական իրավունքի միջազգային չափանիշների համաձայն՝ ընտրությունների արդյունքների նկատմամբ վստահությունը չի կարող հիմնվել ենթադրությունների կամ պետական մարմինների հայտարարությունների վրա, այլ պետք է ապահովվի ստուգելի և հավաստի մեխանիզմներով: Երբ վերահաշվարկված տեղամասերի զգալի մասում արձանագրվում են արդյունքների փոփոխություններ, ապա ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահությունը էականորեն խաթարվում է, իսկ ընտրական գործընթացի ամբողջականությունը դրվում է հիմնավոր կասկածի տակ: Այդ պայմաններում ընտրական վարչարարություն իրականացնող մարմինները պարտավոր են ոչ թե սահմանափակվել առանձին տեղամասերի վերահաշվարկով, այլ ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ կտան պարզել՝ արդյոք արձանագրված խախտումները տարածված են եղել նաև այլ ընտրական տեղամասերում:

Ավելին, ժողովրդավարական ընտրությունների հիմնարար սկզբունքներից է, որ ընտրությունների պաշտոնական արդյունքները պետք է արտացոլեն բացառապես ընտրողների ազատ կամարտահայտությունը: Եթե հարյուրավոր տեղամասերում

վերահաշվարկի արդյունքում փոփոխվում են կուսակցություններին տրված ձայների քանակները, ապա արդեն իսկ առաջանում է ողջ ընտրական գործընթացի նկատմամբ վստահության ճգնաժամ, քանի որ անհնար է համարվում վստահորեն պնդել, որ չվերահաշվարկված տեղամասերում արձանագրված արդյունքները ճշգրիտ են և չեն պարունակում նույնաբնույթ շեղումներ: Հետևաբար վերահաշվարկների արդյունքում բացահայտված այս ծավալի անհամապատասխանություններն ինքնին հանդիսանում են բավարար հիմք ընտրությունների արդյունքների ճշգրտության վերաբերյալ հիմնավոր կասկածներ առաջացնելու, ընտրական մարմինների գործունեության արդյունավետությունը հարցականի տակ դնելու և ընտրությունների վերջնական արդյունքների արժանահավատության նկատմամբ հանրային վստահության էական նվազումը փաստելու համար: Նման պայմաններում ընտրությունների արդյունքների օրինականության և հավաստիության ապահովման նպատակով անհրաժեշտ է կիրառել առավել խիստ ստուգողական մեխանիզմներ, ներառյալ՝ վերահաշվարկների շրջանակի ընդլայնումը կամ ընտրական արդյունքների համապարփակ վերանայումը, քանի որ հակառակ մոտեցումը չի ապահովի ընտրողների իրական կամարտահայտության պատշաճ պաշտպանությունը և կխաթարի ժողովրդավարական ընտրությունների նկատմամբ հանրային վստահությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հետևողականորեն ընդգծել է, որ ազատ ընտրությունների իրավունքը չի սահմանափակվում միայն ընտրողի կողմից քվեարկությամբ, այլ ընդգրկում է ամբողջ ընտրական գործընթացը՝ ներառյալ ձայների հաշվարկը, ամփոփումը և արդյունքների հաստատումը: Այդ առումով ձայների հաշվարկման և ամփոփման ընթացակարգերը հանդիսանում են ընտրական գործընթացի անբաժանելի և էական տարրերը, որոնց նկատմամբ պետությունը պարտավոր է ապահովել թափանցիկ, ստուգելի և արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Davydov and Others v. Russia» գործով արձանագրել է, որ ձայների հաշվարկը և ամփոփումը պետք է ուղեկցվեն հստակ ընթացակարգային երաշխիքներով, իսկ իրավասու մարմինները պարտավոր են արդյունավետ քննության ենթարկել ընտրական խախտումների վերաբերյալ ներկայացված հիմնավոր պնդումները (Davydov and Others v. Russia, no. 75947/11, 30 May 2017, §§ 284, 333-337): Դատարանը խախտում է արձանագրել այն պայմաններում, երբ ներպետական մարմինները սահմանափակվել էին ձևական ստուգումներով և պատշաճ գնահատական չէին տվել ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն ունենալու ներուժ ունեցող խախտումներին:

Սույն գործով վերահաշվարկների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև համանման խախտումների առկայությունը չվերահաշվարկված ընտրատեղամասերում պարզելու ուղղությամբ

արդյունավետ գործողությունների բացակայությունը, պետք է գնահատվեն հենց վերոնշյալ չափանիշների լույսի ներքո: Ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը հնարավոր է ապահովել միայն այն դեպքում, երբ ընտրությունների արդյունքները ձևավորվում են թափանցիկ, ստուգելի և իրավական արդյունավետ վերահսկողության ենթակա ընթացակարգերի արդյունքում:

Նշված գործընթացի շրջանակներում ՀՀ ԿԸՀ-ի կողմից նաև կայացվել է ամենահինտենսիվ միջամտությունը ենթադրող թվով երկու որոշում՝ 35/65 և 10/51 ընտրական տեղամասերի արդյունքները ընդհանրապես ճանաչվել են անվավեր, իսկ դրա հիմքում դրված խախտումների ընտրությունների արդյունքների վրա ազդելու հանգամանքի գնահատում չի իրականացվել: Ակնհայտ է, որ նույն ընտրական տեղամասերում հնարավոր խնդիրների բնույթը վերագրելի է դրա կազմակերպական խախտումներին:

Հետևաբար, եթե ընտրական գործընթացի կազմակերպական բնույթի խախտումները կարող են հանգեցնել ընտրական տեղամասի արդյունքներն ամբողջությամբ անվավեր ճանաչելուն, ապա նույնաբնույթ կամ համադրելի խախտումների առկայությունը այլ ընտրական տեղամասերում չէր կարող մնալ առանց պատշաճ իրավական գնահատականի և արդյունավետ քննության: Հակառակ մոտեցումը հանգեցնում է ընտրական իրավունքի կիրառման անհետևողականության, խախտում է իրավական որոշակիության և հավասարության սկզբունքները, ինչպես նաև կասկածի տակ է դնում ընտրությունների արդյունքների ընդհանուր արժանահավատությունն ու ընտրողների կամքի ազատ արտահայտման սահմանադրական երաշխիքների ապահովվածությունը:

7.6. Ընտրողների ուղղորդումը և անթույլատրելի քարոզչությունը քվեարկության օրը

Քվեարկության օրը մի շարք ընտրատեղամասերում արձանագրվել են ընտրողների կամքի ազատ ձևավորման և արտահայտման գործընթացին միջամտության դեպքեր: Մասնավորապես, արձանագրվել են ընտրողներին ցուցումներ տալու, նրանց ընտրական վարքագիծն ուղղորդելու, ընտրության կատարման եղանակի վերաբերյալ խորհուրդներ կամ հորդորներ տալու, ինչպես նաև որոշակի քաղաքական ուժի օգտին կամ դեմ քվեարկելու վերաբերյալ կոչեր հնչեցնելու դեպքեր:

Արձանագրվել են նաև ընտրատեղամասերում և դրանց հարակից տարածքներում քարոզչության իրականացման դեպքեր, ներառյալ՝ քաղաքական բնույթի հայտարարություններ, ընտրողների հետ նպատակային շփումներ, կուսակցական խորհրդանիշների կամ քարոզչական նյութերի առկայություն/շապիկներ թեկնածուի նկարով, ՔՊ քարոզչական քարտեզ, տեղամասի մուտքի մոտ ՔՊ քարոզչական պաստառ/, ինչպես նաև ընտրողների վրա

ազդեցություն գործադրելու տպավորություն ստեղծող այլ գործողություններ: Ընդ որում, ընտրատեղամասի հարակից տարածքում իրականացվող քարոզչությունը, նույնիսկ եթե այն ձևականորեն տեղի է ունեցել ընտրատեղամասից դուրս, իր բնույթով և ազդեցությամբ կարող էր ուղղակիորեն ազդել ընտրողների ազատ կամարտահայտության վրա:

Նման վարքագիծը հակասում է ազատ ընտրությունների սկզբունքին և խաթարում ընտրողի կողմից իր քաղաքական կամքի ազատ և չհարկադրված արտահայտման սահմանադրական երաշխիքները: Ընտրական գործընթացի նկատմամբ ցանկացած ուղղորդող կամ ազդեցություն գործադրող վարքագիծ, անկախ դրա փաստացի արդյունքից, ինքնին անհամատեղելի է ազատ ընտրությունների սկզբունքի հետ, քանի որ ընտրողը պետք է հնարավորություն ունենա իր քաղաքական կամքն արտահայտելու բացառապես ազատ և արտաքին ազդեցություններից զերծ պայմաններում:

7.7.Քաղաքական ուժերի վստահված անձանց միջամտությունը ընտրական գործընթացին և քվեարկության գաղտնիության սահմանադրական երաշխիքների խախտումները

Քվեարկության ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ ընտրական գործընթացում ներգրավված վստահված անձինք գտնվել են ընտրողների անմիջական հարևանությամբ, շփվել են ընտրողների հետ, մոտեցել են քվեախցիկներին կամ դրսևորել վարքագիծ, որը օբյեկտիվորեն կարող էր ձևավորել ընտրողների նկատմամբ վերահսկողության, կախվածության կամ ճնշման տպավորություն:

Առանձին դեպքերում վստահված անձանց կամ այլ մասնակիցների վարքագիծը կարող էր ընկալվել որպես ընտրողների ընտրության նկատմամբ վերահսկողության կամ հետագա հաշվետվողականության մեխանիզմ, ինչը հակասում է ազատ և գաղտնի ընտրությունների սկզբունքին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ազատ ընտրությունների իրավունքը ենթադրում է ոչ միայն հարկադրանքի բացակայություն, այլև այնպիսի միջավայրի ապահովում, որտեղ ընտրողը զերծ է մնում վերահսկողության կամ դրա տպավորության ազդեցությունից: Հետևաբար, նման վարքագիծը վտանգում է ընտրական գործընթացի ազատությունն ու արժանահավատությունը:

Քվեարկության ընթացքում արձանագրվել են մի շարք հանգամանքներ, որոնք վտանգել են քվեարկության գաղտնիության սկզբունքի արդյունավետ իրացումը: Մասնավորապես, արձանագրվել են քվեախցիկների ոչ պատշաճ կահավորման և տեղադրման դեպքեր, երբ քվեախցիկների կառուցվածքը, դիրքը կամ տեխնիկական

առանձնահատկությունները չեն ապահովել ընտրողի կամարտահայտության լիարժեք գաղտնիությունը:

Ավելին, արձանագրվել են դեպքեր, երբ քվեաթերթիկը դրվել է ծրարի մեջ, իսկ ծրարը ունեցել է թափանցիկություն, ինչը թույլ էր տալիս տեսնել, թե անձն ում է ընտրել:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ քվեախցիկների դասավորությունը կամ դրանց նկատմամբ տեսանելիության աստիճանը հնարավորություն են տվել այլ անձանց հետևելու ընտրողի գործողություններին կամ առնվազն ստեղծել են նման հնարավորության օբյեկտիվ տպավորություն: Որոշ դեպքերում ընտրողների կողմից քվեաթերթիկների լրացման գործընթացը կարող էր տեսանելի լինել հանձնաժողովի անդամների, վստահված անձանց կամ այլ ընտրողների համար:

Առանձին դեպքերում ընտրողներին տրամադրված ծրարների թափանցիկության աստիճանը հնարավորություն է տվել տեսանելի դարձնել քվեաթերթիկների համարները կամ այլ նույնականացնող տվյալներ, ինչն օբյեկտիվորեն ստեղծել է ընտրողի կամքի նկատմամբ վերահսկողության հնարավորություն:

Քվեարկության գաղտնիությունը հանդիսանում է ազատ ընտրությունների հիմնարար տարրերից մեկը, և դրա խախտումը կամ խախտման իրական վտանգի առկայությունը կասկածի տակ է դնում ընտրական գործընթացի ազատությունն ու արդյունքների արժանահավատությունը:

7.8. Քվեաթերթիկների տրամադրման և հաշվառման խախտումները, տեխնիկական միջոցների աշխատանքի խափանումները

Արձանագրվել են դեպքեր, երբ ընտրողներին տրամադրված քվեաթերթիկների փաթեթներում բացակայել են առանձին քաղաքական ուժերին վերաբերող քվեաթերթիկներ կամ դրանց քանակը եղել է ակնհայտ անհավասար: Որոշ ընտրատեղամասերում արձանագրվել են քվեաթերթիկների ոչ համաչափ բաշխման դեպքեր, որոնց հետևանքով առանձին քաղաքական ուժերի քվեաթերթիկները սպառվել են կամ հասանելի չեն եղել ընտրողներին հավասար պայմաններով:

Նման խախտումները սահմանափակում են ընտրողների ազատ ընտրության հնարավորությունը, խաթարում ընտրական իրավունքի հավասարության սկզբունքը և կասկածի տակ են դնում քվեաթերթիկների իսկությունն ու ընտրական գործընթացի օրինականությունը:

Քվեարկության ընթացքում արձանագրվել են ընտրողների նույնականացման տեխնիկական միջոցների աշխատանքի խափանումներ, ինչպես նաև ժամանակային անհամապատասխանություններ և ընթացակարգային այլ թերություններ, մասնավորապես Սյունիքի մարզում գործող թիվ 34 ընտրատարածքային հանձնաժողովի թիվ 34/19 ընտրատեղամասում խափանվել է տեխնիկական

սարքավորումը, որից հետո սարքը վերագործարկվել է և ժամային գրաֆիկի 7 ժամյա տարբերություն է արձանագրվել:

Թեև տեխնիկական բնույթի խախտումները յուրաքանչյուր դեպքում կարող են դիտարկվել առանձին, դրանց բազմակի և համակցված դրսևորումները օբյեկտիվորեն կասկածի տակ են դնում ընտրական ընթացակարգերի հուսալիությունը և ընտրողների հաշվառման ճշգրտությունը:

Արձանագրվել են դեպքեր, երբ քվեատուփերը չեն եղել պատշաճ կերպով կապարակնքված կամ կիրառվել են անվտանգության ոչ լիարժեք միջոցներ, այսինքն միայն ինքնակաշուն ժապավենով է կնքված եղել քվեատուփը, սակայն օրենքի պահանջով դրա կապարակնքումը ապահովված չի եղել, անգամ մի տեղամասում դա նկատվել է ընտրությունների ավարտից 1 ժամ առաջ: Քվեատուփերի անձեռնմխելիության և անվտանգության երաշխիքները հանդիսանում են ընտրական գործընթացի վստահելիության առանցքային տարրերից մեկը, քանի որ դրանք ապահովում են քվեարկության արդյունքների պահպանվածությունն ու անփոփոխելիությունը: Նման երաշխիքների թուլացումը կամ դրանց նկատմամբ հիմնավոր կասկածների առաջացումը վտանգում է քվեարկության արդյունքների ամբողջականությունը և ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը:

Ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը պայմանավորված է ոչ միայն փաստացի օրինականությամբ, այլև ընտրական ընթացակարգերի նկատմամբ վստահության պահպանմամբ: Հետևաբար, քվեատուփերի անվտանգության երաշխիքների խաթարումը կասկածի տակ է դնում ընտրությունների արդյունքների արժանահավատությունը:

7.9. Ընտրական հանձնաժողովների գործունեության և արհեստավարժության հետ կապված խնդիրները

Քվեարկության և ձայների հաշվարկի ընթացքում արձանագրվել են ընտրական հանձնաժողովների գործունեությանը վերաբերող այնպիսի հանգամանքներ, որոնք կասկածի տակ են դնում հանձնաժողովների՝ ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպումն ու վերահսկողությունն իրականացնելու կարողությունը:

Մասնավորապես, արձանագրվել են դեպքեր, երբ հանձնաժողովի անդամները չեն կատարել հանձնաժողովի նախագահի կողմից տրված հրահանգները, ինչի հետևանքով խաթարվել է ընտրական գործողությունների կազմակերպված և համակարգված իրականացումը: Նման իրավիճակները վկայում են ոչ միայն հանձնաժողովների ներսում գործառութային անհամաձայնությունների առկայության, այլև ընտրական գործընթացի օրինական ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ կազմակերպական կարգապահության բացակայության մասին:

Ավելին, առանձին դեպքերում արձանագրված գործողությունները՝ կապված օգտագործված քվեաթերթիկների հետագա գործածության և հաշվառման հետ, օբյեկտիվորեն առաջացնում են կասկածներ ընտրական փաստաթղթերի պահպանման և հաշվառման նկատմամբ կիրառված ընթացակարգերի օրինականության վերաբերյալ:

Ընտրական հանձնաժողովները հանդիսանում են ընտրական գործընթացի օրինականությունն ու հավաստիությունն ապահովող առաջնային մարմինները: Հետևաբար, դրանց գործունեության ընթացքում արձանագրված թերությունները, հանձնաժողովի անդամների կողմից սահմանված կարգի չպահպանումը և ընտրական գործողությունների իրականացման հարցում միասնական ու իրավաչափ վարքագծի բացակայությունը կասկածի տակ են դնում հանձնաժողովների բավարար իրավասու և կոմպետենտ լինելու հանգամանքը՝ ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպումն ու վերահսկողությունն ապահովելու տեսանկյունից:

Հանձնաժողովների գործունեության արդյունավետության և կոմպետենտության վերաբերյալ մտահոգություններն առավել խորանում են այն հանգամանքով, որ թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից կիրառվել են կարգապահական միջոցներ, որոնց արդյունքում ընտրական հանձնաժողովների առնվազն երկու անդամ զրկվել են համապատասխան լիցենզիայից:

Նշված հանգամանքն ինքնին վկայում է, որ ընտրական գործընթացի կազմակերպման և իրականացման ընթացքում արձանագրվել են այնպիսի խախտումներ, որոնք իրավասու ընտրական մարմնի կողմից գնահատվել են որպես կարգապահական պատասխանատվության հիմք:

Թեև առանձին հանձնաժողովների անդամների նկատմամբ կիրառված կարգապահական միջոցները յուրաքանչյուր դեպքում վերաբերում են կոնկրետ անձանց վարքագծին, այնուամենայնիվ դրանց առկայությունը, հատկապես ընտրական գործընթացի ընթացքում արձանագրված այլ խախտումների համատեքստում, օբյեկտիվորեն կասկածի տակ է դնում ընտրական վարչարարության պատշաճ կազմակերպվածությունը, հանձնաժողովների բավարար մասնագիտական պատրաստվածությունը և ընտրական գործընթացի օրինականության ապահովման կարողությունը:

Վերոգրյալ խախտումները չեն կարող գնահատվել մեկուսացված կամ առանձին դրվագների տրամաբանությամբ: Դրանք արձանագրվել են ընտրական գործընթացի տարբեր փուլերում, ունեցել են բազմակի և փոխկապակցված բնույթ և իրենց համակցված ազդեցությամբ վերաբերել են ընտրական իրավունքի հիմնարար տարրերին՝ ընտրությունների ազատությանը, հավասարությանը, քվեարկության գաղտնիությանը և ընտրական վարչարարության նկատմամբ հանրային վստահությանը:

Հետևաբար, գնահատելով ներկայացված խախտումները դրանց ամբողջության և ընտրությունների արդյունքների վրա ունեցած համակցված ազդեցության տեսանկյունից, առկա են բավարար հիմքեր եզրահանգելու, որ ընտրողների կամքի ազատ ձևավորման և արտահայտման համար անհրաժեշտ սահմանադրական և միջազգային իրավական երաշխիքները լիարժեք չեն ապահովվել, իսկ ընտրությունների արդյունքների արժանահավատությունը ենթակա է հիմնավոր կասկածի:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի 2026 թվականի հունիսի 13-ի թիվ 53-Ա որոշմամբ արձանագրվել են ընտրական գործընթացի ընթացքում տեղի ունեցած բազմաթիվ խախտումներ՝ կապված քվեարկության գաղտնիության, ընտրողների ազատ կամարտահայտության, քարոզչության արգելքի, քվեաթերթիկների բաշխման և հաշվառման, քվեատուփերի անվտանգության, հանձնաժողովների գործունեության և ընտրական ընթացակարգերի պահպանման հետ:

Որոշման մեջ մանրամասն նկարագրված են տասնյակ խախտումներ, այդ թվում՝ ընտրողների ուղղորդում, քվեախցիկների ոչ պատշաճ կահավորում, քարոզչություն ընտրատեղամասերում և դրանց հարակից տարածքներում, քվեաթերթիկների բացակայություն կամ անհավասար բաշխում, քվեարկության գաղտնիության վտանգում, քվեատուփերի կապարակնքման հետ կապված խնդիրներ, ինչպես նաև հանձնաժողովների աշխատանքի կազմակերպման թերություններ:

Միաժամանակ, որոշմամբ արձանագրված խախտումների մեծ մասը սահմանափակվել է միայն փաստական նկարագրությամբ, առանց դրանց ազդեցության վերաբերյալ պատշաճ իրավական գնահատականի և բավարար հիմնավորման: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ըստ էության, արձանագրել է խախտումների առկայությունը, սակայն չի ներկայացրել, թե ինչու դրանք չեն կարող ազդել ընտրությունների արդյունքների վրա և ինչ փաստական կամ իրավական հիմքերով է հանգել նման եզրակացության:

Մինչդեռ արձանագրված խախտումները իրենց բնույթով վերաբերում են ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներին՝ քվեարկության գաղտնիությանը, ընտրողների ազատ կամարտահայտությանը, ընտրական գործընթացի հավասարությանը և ընտրությունների նկատմամբ հանրային վստահությանը: Նման խախտումների առկայության պայմաններում արդյունքների վրա ազդեցության բացակայության մասին եզրակացությունը չէր կարող կատարվել վերացական ձևով և ենթակա էր մանրամասն հիմնավորման:

Հատկանշական է նաև, որ մի շարք դեպքերում արձանագրվել են այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են տեղամասային հանձնաժողովների կողմից ընտրական գործընթացի պատշաճ կառավարման և վերահսկողության խնդիրների

մասին, իսկ առանձին դեպքերում հանձնաժողովի նախագահի հրահանգների չկատարումը կասկածի տակ է դնում հանձնաժողովների պատշաճ գործունեությունը, իրավասությունն ու կոմպետենտությունը:

Հետևաբար, միայն խախտումների թվարկումը և դրանց վերաբերյալ «ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն չեն ունեցել» ընդհանուր ձևակերպումը չի կարող համարվել բավարար իրավական հիմնավորում, քանի որ նման եզրակացությունը պետք է բխեր յուրաքանչյուր խախտման առանձին գնահատումից, դրա տևողությունից, ծավալից և ընտրողների կամարտահայտության վրա հնարավոր ազդեցությունից:

Հատկանշական է, որ թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, մի կողմից եզրակացրել է, որ արձանագրված խախտումները որևէ ազդեցություն չեն ունեցել ընտրությունների արդյունքների վրա, սակայն մյուս կողմից նույն որոշմամբ միջնորդել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուժը կորցրած ճանաչել երկու տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների մասնավորապես թիվ 36/6 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Արուսյակ Սամվելի Միքայելյանի և 36/11 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Մարտին Մարկոսի Սահակյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները: Նման պայմաններում պարզ չէ, թե ինչպես կարող են ընտրական գործընթացում այնպիսի խախտումները, որոնք հիմք են հանդիսացել հանձնաժողովի անդամների որակավորման վկայականների դադարեցման համար, միաժամանակ համարվել ընտրությունների արդյունքների վրա որևէ ազդեցություն չունեցող: Այս հանգամանքը կասկածի տակ է դնում հանձնաժողովի եզրակացությունների ներքին տրամաբանությունն ու բավարար հիմնավորվածությունը: Ուշագրավ է, որ հենց այս վեճի շրջանակներում այլևս փաստ է, որ մի կողմից ՀՀ ԿԸՀ-ն սեփական նախաձեռնությամբ փաստացի անվավեր է ճանաչում թվով երկու ընտրական տեղամասերում ընտրության արդյունքները, սակայն իր լիազորություններից որևէ մեկը չի իրացնում հենց նշյալ և դիմումում ներկայացված այլ դեպքերով, **ինչը ևս փաստում է ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի տեսանկյունից կանխատեսելիության, միասնական մոտեցման ընդհանրապես բացակայությունը:**

7.10. Վարչական ռեսուրսի կիրառումը և պետական իշխանության ազդեցությունը ընտրական գործընթացի վրա հենց քվեարկության օրը

Ընտրական գործընթացի ընթացքում արձանագրվել են վարչական ռեսուրսի կիրառման և պետական իշխանության ներկայացուցիչների ներգրավվածության բազմաթիվ դեպքեր, որոնք իրենց բնույթով կարող էին ազդել ընտրողների ազատ

կամարտահայտության վրա և խաթարել ընտրական գործընթացի հավասար ու մրցակցային բնույթը:

Մասնավորապես, արձանագրվել են դեպքեր, երբ ընտրատեղամասերի անմիջական հարևանությամբ գտնվել և ընտրողների հետ շփվել են տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք, այդ թվում՝ համայնքների վարչական ղեկավարներ, ինչպես նաև արձանագրվել են մարդկանց և տրանսպորտային միջոցների կուտակումներ, որոնց կանխարգելման և վերացման ուղղությամբ իրավասու մարմինները գործուն միջոցներ չեն ձեռնարկել:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ընտրատեղամասերի տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ պահպանվել են քաղաքական ուժերի քարոզչական նյութեր, այդ թվում՝ հանրային նշանակության կամ համայնքային վերահսկողության ներքո գտնվող տարածքներում տեղադրված պաստառներ, որոնք օբյեկտիվորեն կարող էին հոգեբանական ազդեցություն ունենալ ընտրողների վրա:

Ընտրական գործընթացում վարչական ռեսուրսի կիրառման արգելքը նպատակ ունի բացառելու պետական իշխանության և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ինստիտուցիոնալ առավելությունների օգտագործումը՝ հօգուտ որևէ քաղաքական ուժի: Այդ արգելքի խախտումը վտանգում է ոչ միայն առանձին ընտրողի ազատ կամարտահայտությունը, այլև ընտրությունների հավասարության և արդար մրցակցության սահմանադրական սկզբունքները:

Հատկանշական է, որ արձանագրված դեպքերը չեն կրել մեկուսացված բնույթ և դրսևորվել են տարբեր ընտրատարածքներում, ինչը վկայում է վարչական ռեսուրսի կիրառման համակարգային ռիսկերի առկայության մասին:

7.11. Խախտումների նկատմամբ ոչ միապետակ իրավական գնահատականը և ընտրական վարչարարության հեղուկականության բացակայությունը

Ընտրությունների ընթացքում արձանագրված ողջ խախտումների, դրանց տրված գնահատականների ուսումնասիրությունը վկայում է, որ Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից տարբեր ընտրատեղամասերում արձանագրված խախտումների նկատմամբ ցուցաբերվել է ոչ միասնական և անհետևողական մոտեցում, ինչն ինքնին կասկածի տակ է դնում ընտրական վարչարարության կանխատեսելիությունն ու իրավական որոշակիությունը:

Մասնավորապես, առանձին ընտրատեղամասերում արձանագրված խախտումները գնահատվել են որպես ընտրությունների արդյունքների վրա ազդող այնպիսի հանգամանքներ, որոնք հանգեցրել են համապատասխան տեղամասերում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչման: Միևնույն ժամանակ, այլ ընտրատեղամասերում արձանագրված համադրելի կամ նույնիսկ ոչ պակաս ծանր

բնույթի խախտումները չեն ստացել համարժեք իրավական գնահատական և չեն հանգեցրել նույն իրավական հետևանքներին:

Իրավական պետության, հավասարության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքներից բխում է, որ համանման փաստական հանգամանքները պետք է ստանան համանման իրավական գնահատական, եթե առկա չեն դրանց տարբերակման օբյեկտիվ և ողջամիտ հիմքեր: Հակառակ դեպքում ընտրական մարմինների հայեցողական լիազորությունների իրականացումը կարող է ձեռք բերել կամայական բնույթ, ինչը հակասում է ազատ և արդար ընտրությունների սահմանադրական սկզբունքներին:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից առնվազն երկու հանձնաժողովի անդամների վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել են հանձնաժողովի անդամի լիցենզիայից զրկելու մասով: Լիցենզիայից զրկումն ինքնին վկայում է, որ իրավասու ընտրական մարմնի գնահատմամբ տվյալ անձանց կողմից թույլ են տրվել այնպիսի խախտումներ, որոնք անհամատեղելի են ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների պատշաճ իրականացման հետ:

Ընտրական հանձնաժողովները հանդիսանում են ընտրական գործընթացի օրինականությունն ու արդյունքների արժանահավատությունն ապահովող առաջնային մարմինները: Հետևաբար, եթե ընտրական գործընթացը կազմակերպող և վերահսկող մարմնի անդամների գործողությունները գնահատվել են որպես կարգապահական պատասխանատվության հիմք, ապա օբյեկտիվորեն ծագում է հարցադրում, թե ինչու նման խախտումները չեն հանգեցրել համապատասխան ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների վրա դրանց հնարավոր ազդեցության լիարժեք գնահատման:

Ավելին, հանձնաժողովի անդամի լիցենզիայից զրկումը փաստացի նշանակում է, որ իրավասու մարմինը կասկածի տակ է դրել տվյալ անձի՝ ընտրական գործընթացին մասնակցելու մասնագիտական պիտանիությունն ու օրինական գործունեությունը: Այդ պայմաններում հիմնավոր կասկած է առաջանում, թե արդյոք նման կազմով գործող հանձնաժողովի կողմից կազմակերպված քվեարկությունը կարող էր լիարժեք համապատասխանել ազատ, արդար և արժանահավատ ընտրությունների սահմանադրական չափանիշներին:

Նույնը վերաբերում է նաև այն ընտրատեղամասերին, որտեղ արձանագրվել են ընտրողների ուղղորդման, վարչական ռեսուրսի կիրառման, քվեարկության գաղտնիության խախտման, քվեաթերթիկների բացակայության կամ անհավասար բաշխման, տեխնիկական միջոցների աշխատանքի խափանումների, քվեատուփերի անվտանգության թերությունների և ընտրական հանձնաժողովների անգործության դեպքեր, սակայն դրանք չեն հանգեցրել համարժեք իրավական հետևանքների:

Մինչդեռ ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանությունը ենթադրում է ոչ միայն խախտումների արձանագրում, այլև դրանց նկատմամբ հետևողական, կանխատեսելի և համաչափ իրավական արձագանք: Հակառակ դեպքում խաթարվում է ոչ միայն ընտրական գործընթացի օրինականությունը, այլև ընտրությունների նկատմամբ հանրային վստահությունը, որն ազատ ընտրությունների անբաժանելի տարր է:

Հետևաբար, ընտրական մարմինների կողմից համանման կամ համադրելի խախտումների նկատմամբ տարբեր իրավական հետևանքների կիրառումը, առանց բավարար և համոզիչ հիմնավորման, օբյեկտիվորեն կասկածի տակ է դնում ընտրությունների արդյունքների գնահատման միատեսակությունն ու իրավաչափությունը: Նշվածը ևս գտնում ենք, որ պետք է Սահմանադրական դատարանի կողմից գնահատվածի ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի պահանջների տեսանկյունից, միաժամանակ մեր կողմից պնդում կատարելով, որ այն ևս հանդիսանում է Սահմանադրության երաշխավորված ընտրություններին վերաբերող երաշխիքների էական խաթարում:

8. Միջազգային դիտորդական առաքելությունների գնահատականները

8.1. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից վարչական ռեսուրսի օգտագործման վերաբերյալ արձանագրումները

Նկատենք, որ վարչական ռեսուրսի օգտագործման և ընտրական գործընթացի խախտումների վերաբերյալ մեր պնդումները հաստատվում են նաև միջազգային դիտորդական առաքելության արձանագրումներով: Մասնավորապես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միջազգային դիտորդական առաքելության՝ 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ նախնական արդյունքների և եզրակացությունների հայտարարությամբ արձանագրվել է, որ նախընտրական գործընթացում առկա են եղել պետական հատվածի աշխատակիցների նկատմամբ իշխող կուսակցության միջոցառումներին մասնակցելու նպատակով գործադրված ճնշումների վերաբերյալ հաղորդումներ, ինչպես նաև վերջերս ներդրված սոցիալական և տնտեսական միջոցառումներ, որոնք մտահոգություններ են առաջացրել քարոզչություն իրականացնելու հնարավորությունների հավասարության առնչությամբ:

Հատկանշական է, որ նույն հայտարարությամբ արձանագրվել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի ավելի քան 90 տոկոսը կազմված է եղել պետական և հանրային հատվածի աշխատողներից, այդ թվում՝ պետական ծառայողներից, պետական պաշտոնատար անձանցից և Ազգային ժողովի գործող պատգամավորներից: Միաժամանակ, դիտորդների կողմից դիտարկված նախընտրական միջոցառումների ավելի քան 27 տոկոսի ընթացքում ներկա են եղել

պետական պաշտոնատար անձինք: Այս հանգամանքը, **ինքնին, ցույց է տալիս իշխող կուսակցության և պետական կառավարման համակարգի միջև փաստացի սերտաճման բարձր ռիսկը, ինչը ընտրական գործընթացում ստեղծում է ոչ հավասար մրցակցային միջավայր և հակադրվում է Սահմանադրության 7-րդ հոդվածի պահանջներին:**

8.2. Պետական ծառայողների նկատմամբ ճնշումների վերաբերյալ արձանագրումները

Միջազգային դիտորդական առաքելությունը նաև արձանագրել է, որ Երևանից և ինը մարզերից ստացվել են տեղեկություններ նախընտրական միջոցառումներին մասնակցելու նպատակով ճնշումների և խրախուսումների վերաբերյալ, հիմնականում՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից: Այդ հաղորդումները ներառել են պետական ծառայողներին իշխող կուսակցության նախընտրական միջոցառումներին մասնակցելու հարկադրանքի վերաբերյալ տվյալներ: Նշվել է նաև Արագածոտնի մարզում արձանագրված դրվագը, երբ ուսանողներին բաժանվել են նախընտրական նյութեր և տրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության միջոցառմանը մասնակցելու հանձնարարություն, ինչից հետո վարչապետը հայտարարել է, որ անձամբ հանձնարարել է դպրոցի տնօրեններին հրաժարական տալ:

8.3. Սոցիալական և տնտեսական միջոցառումների վերաբերյալ դիտարկումները

Նույն հայտարարությամբ հատուկ արձանագրվել է նաև, որ ընտրություններից առաջ կառավարության կողմից հայտարարվել կամ ներդրվել են մի շարք սոցիալական և տնտեսական միջոցառումներ, որոնք լայնորեն ընկալվել են որպես իշխող կուսակցությանը նպաստող քայլեր: Դրանց թվում հիշատակվել են համընդհանուր առողջապահական ապահովագրության ներդրումը, կենսաթոշակների և հաշմանդամության նպաստների բարձրացումը, ավագ պաշտոնատար անձանց և նախարարությունների աշխատակիցների համար կատարողականի վրա հիմնված պարգևավճարների և հավելավճարների տրամադրումը, լրացուցիչ տարածաշրջանային ֆինանսավորումը, զրոյական տոկոսադրույքով գյուղատնտեսական վարկերը, ինչպես նաև քաղաքացիների որոշ խմբերի չվճարված պարտքերի զիջումը: Այս հանգամանքները, իրենց ամբողջության մեջ, վկայում են պետական քաղաքականության և պետական ֆինանսական գործիքների այնպիսի օգտագործման մասին, որը նախընտրական ժամանակահատվածում օբյեկտիվորեն կարող էր ձևավորել իշխող քաղաքական ուժի օգտին նյութական և քաղաքական առավելություն:

Ավելին, միջազգային դիտորդական առաքելությունը նշել է, որ նման գործելակերպը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին և միջազգային չափանիշներին, որոնք պահանջում են պետության և քաղաքական կուսակցությունների միջև հստակ

տարանջատում, և կարող է խաթարել ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար հավասար հնարավորությունների սկզբունքը: Այս արձանագրումն առանձնապես կարևոր է, քանի որ այն վերաբերում է ոչ թե առանձին մասնավոր խախտման, այլ ընտրական գործընթացի կառուցվածքային և ինստիտուցիոնալ հավասարության խաթարմանը:

8.4. Վարչապետի պաշտոնեական կարգավիճակի օգտագործման վերաբերյալ արձանագրումները

Վարչական ռեսուրսի խնդիրը դրսևորվել է նաև գործող վարչապետի պաշտոնական կարգավիճակի և նախընտրական պայքարի փաստացի միախառնմամբ: Միջազգային դիտորդական առաքելությունը արձանագրել է, որ մայիսի 28-ի մամուլի ասուլիսի ընթացքում Նիկոլ Փաշինյանը, հանդես գալով որպես վարչապետ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդին սպառնացել է ձերբակալությամբ և նրան պատկանող ընկերությունների ազգայնացմամբ: Նման վարքագիծը չի կարող դիտարկվել միայն որպես քաղաքական բանավեճի տարր, քանի որ այն արվել է ոչ թե շարքային թեկնածուի, այլ գործող վարչապետի կարգավիճակից՝ պետական հարկադրանքի և սեփականության նկատմամբ պետական միջամտության հնարավոր գործիքների հիշատակմամբ:

8.5. Քվեարկության օրվա ընթացակարգային խախտումների վերաբերյալ արձանագրումները

Ընտրության օրվա մասով ևս միջազգային դիտորդական առաքելության հայտարարությամբ արձանագրվել են մի շարք ընթացակարգային և կազմակերպական խախտումներ: Մասնավորապես, դիտարկված ընտրատեղամասերի բացման գործընթացում 5 տոկոսի դեպքում ոչ լիազորված անձինք, հիմնականում ընտրական գործընթացի մասնակիցների վստահված անձինք, միջամտել են տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքին: Քվեարկության ընթացքում արձանագրվել են առանձին ընթացակարգային խախտումներ, այդ թվում՝ դիտարկումների 2 տոկոսում քվեատուփերը պատշաճ կերպով չեն կնքվել, իսկ դիտարկումների 6 տոկոսում ընտրատեղամասերի ներսում կամ դրանցից 50 մետր շառավղով նկատվել են քարոզչական նյութեր կամ քարոզչական գործունեություն: Դիտարկումների 9 տոկոսում գրանցվել են բողոքներ կամ հատուկ կարծիքներ, որոնցից շատերը վերաբերել են ենթադրյալ խախտումներին:

Արձանագրվել են նաև քվեարկության գաղտնիության և անձնական քվեարկության սկզբունքին առնչվող խնդիրներ: Դիտարկված ընտրատեղամասերի 4 տոկոսում ընտրողները միշտ չէ, որ գաղտնի պայմաններում են ընտրել իրենց քվեաթերթիկը, խմբակային քվեարկություն արձանագրվել է դիտարկումների 3 տոկոսում, այլ անձի

փոխարեն քվեարկություն՝ 2 տոկոսում, իսկ դիտարկումների շուրջ 4 տոկոսում ընտրողները քվեախցիկից դուրս են բերել չօգտագործված քվեաթերթիկները: Նշված խախտումները, անկախ դրանց գնահատված պատճառներից, իրենց բնույթով առնչվում են ընտրողի կամքի ազատ և գաղտնի արտահայտման հիմնարար երաշխիքներին:

Քվեարկության գործընթացին միջամտություն արձանագրվել է դիտարկումների 6 տոկոսում: Ըստ միջազգային դիտորդների՝ միջամտությունները հիմնականում դրսևորվել են վստահված անձանց կողմից իրենց գործառույթների շրջանակից դուրս գալով՝ ընտրողներին ուղղորդելու, ընթացակարգային ցուցումներ տալու, քվեախցիկներին կամ քվեատուփերին չափազանց մոտ գտնվելու կամ այլ կերպ տեղամասային ընտրական հանձնաժողովների գործառույթներ ստանձնելու միջոցով: Ներկայության իրավունք չունեցող անձինք նկատվել են ընտրատեղամասերի 4 տոկոսում, հիմնականում՝ ոստիկանության աշխատակիցներ:

8.6. Ձայների հաշվարկի և արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրումները

Հաշվարկի և արդյունքների ամփոփման փուլում ևս արձանագրվել են էական խնդիրներ: Որոշ ընտրատեղամասերում արձանագրվել են ընթացակարգային թերություններ, այդ թվում՝ 29 դիտարկումների ընթացքում ստորագրությունների թիվը չի համապատասխանել ընտրողների նույնականացման սարքի կողմից տպագրված հաստատման կտրոնների թվին: Ավելի լուրջ խախտումների թվում միջազգային դիտորդները նշել են 11 դիտարկման ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ չհանդիսացող անձանց անմիջական մասնակցությունը ձայների հաշվարկին, 6 դեպքում՝ նախապես ստորագրված արձանագրությունների օգտագործումը, ինչպես նաև 8 դիտարկման ընթացքում արդյունքների արձանագրության պատճենը հանրային ծանոթացման համար չփակցնելու դեպքերը:

Բացի այդ, արդյունքների ամփոփման փուլում ԿԸՀ-ի կողմից տրված բանավոր ցուցումների հիման վրա 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից 11-ում միջազգային դիտորդներին արգելվել է հետևել տվյալների մուտքագրման գործընթացին՝ կիրճեռանվտանգության նկատառումներով, ինչը սահմանափակել է գործընթացի թափանցիկությունը: Արձանագրվել է նաև, որ որոշ տեղամասային ընտրական հանձնաժողովների արդյունքների արձանագրություններում առկա թվաբանական սխալները ստիպված են եղել ուղղվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում:

Միջազգային դիտորդական առաքելությունների արձանագրումները հաստատում են, որ դիմումով ներկայացված խախտումները մեկուսացված կամ միայն **դիմողի** սուբյեկտիվ գնահատականը չեն, այլ արտացոլում են ընտրական գործընթացի տարբեր փուլերում արձանագրված համակարգային խնդիրներ:

Դրանք սահմանադրաիրավական նշանակություն ունեն, քանի որ վերաբերում են ընտրական գործընթացի առանցքային երաշխիքներին՝ պետության չեզոքությանը, վարչական ռեսուրսի չօգտագործմանը, քարոզչական հավասար պայմաններին, քվեարկության ընթացակարգերի ստուգելիությանը և հաշվարկի թափանցիկությանը: Այդ խնդիրների համակցությունը խաթարել է քաղաքական ուժերի հավասար մրցակցության միջավայրը:

Միաժամանակ, միջազգային դիտարկումներով արձանագրված ճնշումների, վարչական ռեսուրսի, տեղեկատվական անհավասարության և ընթացակարգային խախտումների համակցությունը կարող էր էականորեն ազդել ընտրողի ազատ կամքի ձևավորման և արտահայտման վրա: Հետևաբար, այդ գնահատականները պետք է դիտարկվեն որպես ընտրությունների արդյունքների սահմանադրական լեգիտիմությունը կասկածի տակ դնող լրացուցիչ ապացուցողական աղբյուր:

9. Խախտումների կուտակային ազդեցությունը ընտրական գործընթացի վրա

9.1. Խախտումների փոխկապակցված բնույթը և առանձին տեղամասերում վերաքվեարկությամբ խախտումների հետևանքների վերացման անհնարինությունը

Այս բոլոր հանգամանքները, դիտարկված իրենց ամբողջության մեջ, վկայում են, որ ընտրական գործընթացում առկա են եղել ինչպես վարչական ռեսուրսի օգտագործման, այնպես էլ քվեարկության, հաշվարկի և արդյունքների ամփոփման փուլերի ընթացակարգային խախտումների համակարգային ռիսկեր: Դրանք ուղղակիորեն առնչվում են ընտրությունների ազատության, հավասարության, թափանցիկության և արդյունքների նկատմամբ հանրային վստահության սկզբունքներին և պետք է գնահատվեն ընտրությունների արդյունքների լեգիտիմության վրա ազդող էական հանգամանքների համատեքստում:

Թվարկված խախտումների համակարգային և հատուկ կազմակերպված բնույթը և մեծ ծավալը ինքնին առավել հավանական է դարձնում այդ խախտումների հետևանքների վերացման խոչընդոտը վերաքվեարկության միջոցով առանձին ընտրական տեղամասերում: Միաժամանակ ԿԸՀ-ն հաշվի առնելով նաև հենց իր նախաձեռնությամբ թվով երկու ընտրական տեղամասում առկա արդյունքների ընդհանրապես անվավեր ճանաչման փաստը և քվեարկության օրվա դրությամբ առկա խախտումների ծավալը պարտավոր է առանձին գնահատական տալ նման լիազորության իրացման հիմքերին:

10. Իրավական գնահատում

10.1. ՀՀ Սահմանադրության պահանջների խախտումը

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պարկանում է ժողովրդին, իսկ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է, ի թիվս այլնի, ազատ ընտրությունների միջոցով: Սահմանադրության 7-րդ հոդվածն ամրագրում է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքները. ընտրությունները անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Սահմանադրության 48-րդ հոդվածը երաշխավորում է քաղաքացիների ընտրական իրավունքը:

Սահմանադրության այս հիմնարար դրույթներից բխում է, որ ընտրությունները պետք է ապահովեն ժողովրդի քաղաքական կամքի ազատ և իրական արտահայտումը: Այդ պահանջը վերաբերում է ոչ միայն քվեարկության օրվան, այլ ամբողջ ընտրական գործընթացին՝ սկսած նախընտրական միջավայրից մինչև արդյունքների ամփոփումը:

Սույն դիմումով ներկայացված փաստական հանգամանքները վկայում են, որ ընտրական գործընթացի տարբեր փուլերում խաթարվել են ընտրությունների ազատության, հավասարության, մրցակցայնության և թափանցիկության սահմանադրական երաշխիքները:

Հետևաբար, արձանագրված խախտումները պետք է գնահատվեն որպես Սահմանադրությամբ երաշխավորված ժողովրդավարական ընտրակարգի և ժողովրդի ազատ կամարտահայտության իրավունքի էական խաթարում:

10.2. «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի հիմնարար սկզբունքների խախտումը

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Նույն սկզբունքներից բխում է պետության պարտականությունը՝

- ապահովել քաղաքական ուժերի համար հավասար պայմաններ,
- բացառել վարչական ռեսուրսի օգտագործումը,
- երաշխավորել ընտրողների կամքի ազատ ձևավորումը,
- ապահովել քվեարկության գաղտնիությունը,
- ապահովել ընտրական գործընթացի թափանցիկությունը և արդյունքների

արժանահավատությունը:

Դիմումով ներկայացված փաստական հանգամանքները վկայում են, որ նշված սկզբունքներից յուրաքանչյուրի առնչությամբ արձանագրվել են բազմակի և փոխկապակցված խախտումներ:

Ուստի առկա են բավարար հիմքեր եզրակացնելու, որ ընտրական գործընթացն ամբողջությամբ չի համապատասխանել Ընտրական օրենսգրքի հիմնարար պահանջներին:

10.3. Պետական չեզոքության և հավասար հնարավորությունների սկզբունքի խախտումը

Ընտրական իրավունքի միջազգային և ներպետական չափանիշների համաձայն՝ պետական իշխանությունը պարտավոր է պահպանել քաղաքական չեզոքություն և չօգտագործել պետական ռեսուրսները որևէ քաղաքական ուժի օգտին:

Դիմումով ներկայացված վարչական ռեսուրսի օգտագործման, պետական ծառայողների ներգրավման, սոցիալական և տնտեսական միջոցառումների կիրառման, ինչպես նաև պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ փաստերը վկայում են, որ ընտրություններին մասնակցող սուբյեկտների համար հավասար հնարավորությունների սկզբունքը փաստացի խաթարվել է:

Այս հանգամանքն ինքնին հակասում է ազատ և արդար ընտրությունների սկզբունքին:

10.4. Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ չափանիշների խախտումը

Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերի լավ պրակտիկայի կանոնագիրքը» պահանջում է պետական իշխանության և քաղաքական կուսակցությունների հստակ տարանջատում, վարչական ռեսուրսի չեզոք օգտագործում և ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության ապահովում:

Նույն պահանջներն արտացոլված են նաև ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթում և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրական չափանիշներում:

Միջազգային դիտորդական առաքելության կողմից արձանագրված՝

- վարչական ռեսուրսի օգտագործման,
- պետական ծառայողների նկատմամբ ճնշումների,
- պետական և կուսակցական գործունեության չտարանջատման,
- քվեարկության և հաշվարկի փուլերում արձանագրված խախտումների

վերաբերյալ փաստերը հաստատում են, որ ընտրական գործընթացը չի համապատասխանել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին:

10.5. Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու իրավական հիմքերը

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է գնահատել՝ հնարավոր է արդյոք դրանց հետևանքները վերացնել առանձին տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու միջոցով: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել խախտումների հետևանքները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում և նշանակվում է վերաքվեարկություն:**

Սույն դիմումով ներկայացված հիմնարար խախտումները.

- **չեն սահմանափակվում առանձին ընտրատեղամասերով,**
- **վերաբերել են ընտրական գործընթացի բոլոր փուլերին,**
- **կրել են բազմակի և համակարգային բնույթ,**
- **ազդել են քաղաքական մրցակցության պայմանների, ընտրողների կամքի**

ձևավորման, քվեարկության և արդյունքների ամփոփման վրա:

Նման իրավիճակում «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի դրույթները հաշվի առնելով, հիմք ընդունելով ողջ ներկայացված փաստական և իրավական հանգամանքները, որոնք ուղղակիորեն վկայում են գործող մի շարք օրենքների ակնհայտ խախտումների մասին և որոնք կրել են կազմակերպված, գանգվածային, պարբերական ու համակարգված բնույթ՝ էապես ազդելով ինչպես առանձին տարածքներում քվեարկության, այնպես էլ ողջ ընտրական գործընթացի, ըստ այդմ էլ՝ ընտրությունների արդյունքների վրա, գտնում եմ, որ առկա են անհրաժեշտ և լիարժեք հիմքերը և փաստական ու իրավական հիմնավորումները՝ 2026 թվականի փետրվարի 7-ից մեկնարկված ԱԺ հերթական խորհրդարանական ընտրությունների և հունիսի 7-ի քվեարկության օրը ավարտված՝ ընտրության արդյունքների նկատմամբ «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածի կառուցակարգի իրացման համար:

11. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի թիվ 258-Ա որոշման մեկնաբանությունների անբավարարությունը և վարչական դատարանի ակտերի նշանակությունը

11.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից դիմումի բովանդակային գնահատման անբավարարությունը

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թիվ 258-Ա որոշմամբ, որը վեճի առարկայի հետ ուղիղ կապի մեջ է ձևականորեն անդրադարձել է դիմումում ներկայացված մի շարք փաստարկների, սակայն չի իրականացրել այնպիսի

ամբողջական գնահատում, որը պահանջվում է «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածով: Հանձնաժողովը պարտավոր էր ոչ միայն ստուգել՝ առանձին դրվագը ինքնին արդյունքի վրա թվային ազդեցություն ունեցե՞լ է, թե ոչ, այլև գնահատել խախտումների բնույթը, տարածվածությունը, պարբերականությունը, կազմակերպվածությունը, փոխկապակցվածությունը և դրանց կուտակային ազդեցությունը ընտրական գործընթացի օրինականության և հանրային վստահության վրա: Թիվ 258-Ա որոշման եզրահանգումը, որը կապված է թիվ 259-Ա որոշման հետ կառուցված է խախտումների մեկուսացված և տեխնիկական գնահատման վրա: Մինչդեռ Սահմանադրական դատարանի կողմից ընտրությունների արդյունքներով վեճի քննության համատեքստում էական է ոչ միայն այն, թե յուրաքանչյուր խախտում առանձին վերցրած քանի ձայնի վրա է ազդել, այլև այն, թե դրանց համադրումը արդյոք ձևավորել է այնպիսի ընտրական միջավայր, որի պայմաններում խախտվել են Սահմանադրության 7-րդ հոդվածով երաշխավորված ընտրական իրավունքի սկզբունքները: Միաժամանակ ԿԸՀ Թիվ 259-Ա որոշմամբ պարզապես արձանագրվել է, որ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքների վերաբերյալ» N 258-Ա որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 95 -րդ հոդվածի 1 -ին մասի 3-րդ, 4 -րդ և 5 -րդ կետերով նախատեսված որոշումներ ն ընդունելու հիմքեր առկա չեն:

11.2. Ընտրական օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ ԿԸՀ մեկնաբանության խնդիրը

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտել է, որ 2026 թվականի ապրիլի 7-ի օրենսդրական փոփոխությունները չեն ազդել քաղաքական մրցակցության վրա, քանի որ դրանք ընդունվել են մինչև ընտրություններին մասնակցելու մասին դիմումները ներկայացնելու ժամկետի սկիզբը: Այս մեկնաբանությունը անիրավաչափորեն նեղ է: Ընտրական գործընթացի հավասարության գնահատման համար որոշիչ չէ միայն այն հանգամանքը, թե փոփոխությունն ընդունվել է առաջադրման ժամկետի սկզբից առաջ, թե հետո: **Որոշիչ է այն, թե փոփոխությունը կատարվել է արդյոք արդեն նշանակված ընտրությունների պայմաններում, արդյոք այն ունեցել է կոնկրետ քաղաքական ուժի նկատմամբ ուղղվածություն, և արդյոք այն ազդել է ընտրողների իրազեկվածության, քվեաթերթիկի լրացման կարգի ընկալման և անվավեր քվեաթերթիկների աննախադեպ աճի վրա:**

ՀՀ ԿԸՀ-ն չի հերքել դիմումում ներկայացված այն փաստարկը, որ անվավեր քվեաթերթիկների թիվը զգալիորեն գերազանցել է նախորդ համապետական ընտրությունների համեմատելի ցուցանիշները: **Նման պայմաններում Հանձնաժողովը պարտավոր էր պարզել, թե արդյոք օրենսդրական փոփոխությունների և**

ընտրողների ոչ բավարար իրազեկման միջև առկա է պատճառահետևանքային կապ: Այդպիսի գնահատական թիվ 259-Ա որոշմամբ չի տրվել: Արդյունքում վեճի առարկա Որոշման մեջ ուղիղ հիշատակված է անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 16,210, այնուհետև առկա է համեմատական վերլուծությունը՝ 2021 թվականի Ազգային ժողովի ընտրություններում անվավեր է ճանաչվել 4,593 քվեաթերթիկ, իսկ 2018 թվականի ընտրություններում՝ 4,706 քվեաթերթիկ, սակայն առկա չէ որևէ բովանդակային կամ նույնիսկ մակերեսային իրավական դիրքորոշում: **Ակնհայտ է նաև, որ 16,210 անվավեր քվեաթերթիկների թիվը գրեթե քառապատկվել է, ինչը հիմնավորում է այն մտահոգությունները, որ օրենսդրական փոփոխությունների և դրանց վերաբերյալ ընտրողների ոչ բավարար իրազեկման միջև առկա է անմիջական կապ, որն էական ազդեցություն է ունեցել ընտրողների կամարտահայտման արդյունավետ իրացման վրա և էական ազդեցություն է ունեցել ընտրությունների արդյունքների վրա:**

11.3. Վարչական ռեսուրսի և սոցիալ-տնտեսական միջոցառումների վերաբերյալ մեկնաբանության թերությունը

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վարչական ռեսուրսի վերաբերյալ ընդհանուր բնույթի իրավական մեկնաբանություններ է ներկայացրել՝ նշելով, որ կառավարության բնականոն աշխատանքը պետք է շարունակվի նաև ընտրությունների ժամանակահատվածում: Դիմողը չի վիճարկում պետության բնականոն գործունեության անհրաժեշտությունը: **Վիճարկվում է այն, որ կոնկրետ գործողությունները՝ իրենց ժամանակով, հասցեատերերով, քաղաքական համատեքստով և հանրային ներկայացմամբ, գործնականում ստեղծել են իշխող քաղաքական ուժի համար առավելություն, որը հասանելի չէր այլ մասնակիցներին:**

ԿԸՀ-ն չի գնահատել սոցիալական և տնտեսական միջոցառումների իրական ազդեցությունը ընտրողների խոցելի խմբերի վրա, չի համադրել այդ միջոցառումները պաշտոնական քարոզչական խոսքի, պետական և կուսակցական դերակատարումների չտարանջատման և միջազգային դիտորդական առաքելությունների դիտարկումների հետ: Արդյունքում վարչական ռեսուրսի խնդիրը փաստացի սահմանափակվել է գործողությունների ձևական օրինականության հարցով, մինչդեռ գնահատման առարկա պետք է դառնար դրանց իրական նպատակն ու ազդեցությունը ընտրական գործընթացի վրա:

Ընտրական օրենսգրքով նախատեսված ընտրական շեմը հաշվարկվում է բացառապես վավեր քվեների հիման վրա: Հետևաբար, եթե այդ 16,210 քվեաթերթիկներից թեկուզ մի մասի անվավերությունը պայմանավորված էր ոչ թե ընտրողների իրական կամքով, այլ օրենսդրական փոփոխության ձևավորմամբ և հետևանքներով՝ փոփոխություն, որը ընդունվել է առանց ընդդիմության մասնակցության, ընտրական ցիկլի ընթացքում և ուղղակիորեն վերաբերել է

քվեաթերթիկի ձևաչափին, ապա աղավաղվել է ոչ միայն անվավեր քվեաթերթիկների ցուցանիշը, այլև հենց վավեր քվեների բազան, որի հիման վրա հաշվարկվել է ընտրական շեմը:

11.4. Իրավապահ մարմինների գործողությունների և քաղաքական մրցակցության անհավասարության վերաբերյալ ԿԸՀ դիրքորոշման խնդիրը

ԿԸՀ-ն թիվ 258-Ա որոշմամբ ըստ էության արձանագրել է, որ քրեական հետապնդում հարուցելը կամ ազատության սահմանափակումը ինքնին չեն կարող գնահատվել որպես ընտրության արդյունքների վրա ազդեցություն ունեցող հանգամանք, **իսկ թիվ 259-Ա որոշմամբ ընդհանրապես անդրադարձ չի կատարել:** Նման մոտեցումը անտեսում է դիմումի առանցքային փաստարկը՝ իրավապահ մարմինների գործողությունները գնահատվում էին ոչ թե միայն քրեական վարույթի օրինականության, այլ քաղաքական մրցակցության հավասարության, նախընտրական շտաբների բնականոն աշխատանքի խափանման, ընտրողների և աջակիցների վրա առաջացած զսպող ազդեցության համատեքստում:

ԿԸՀ-ն չի պարզել և չի գնահատել՝ արդյոք տարբեր քաղաքական ուժերի նկատմամբ կիրառվել են նույն չափանիշները, արդյոք քրեական վարույթների հրապարակային լուսաբանումը և ընտրություններին մասնակցող ուժերի անվանումների շրջանառությունը նպաստել են անհավասար մրցակցային միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև արդյոք այդ գործողությունները համադրված վարչական ռեսուրսի և քարոզչական միջավայրի հետ կարող էին ազդել ընտրողների կամքի ձևավորման վրա: Կարևորելով ցանկացած ապօրինի արարքի նկատմամբ պետության կողմից պոզիտիվ պարտականությունների կատարումը, այդ թվում կանխարգելման նպատակով, սակայն մեր գնահատմամբ ինչպես տարբերակված լուսաբանման, այնպես էլ ընդհանրապես «թիրախավորված» քրեական վարույթները հատկապես դրանց ժամանակային տրամաբանությամբ, նույնիսկ քվեարկության օրը վստահված անձանց ձերբակալությունները, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում առավելապես իտնեսիվ խափանման միջոցների ընտրության վերաբերյալ միջնորդություններով, չի հետապնդել իրավաչափ նպատակ, այլ էության մեջ խաթարել է նաև ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի պահանջները:

11.5. Արելության խոսքի և տեղեկատվական միջավայրի վերաբերյալ ԿԸՀ-ի հակասական մոտեցումը

ԿԸՀ-ն մի կողմից ընդունել է, որ նախընտրական քարոզչությունը չի կարող ուղեկցվել ատելության, բռնության կոչերով և սպառնալիքներով, ինչպես նաև վկայակոչել է Սահմանադրական դատարանի դիրքորոշումները, մյուս կողմից՝ փաստացի հրաժարվել է գնահատել դիմումում ներկայացված քարոզչական նյութերի բովանդակությունը՝ այն

համարելով հնարավոր գրաքննության ռիսկ: Նման մոտեցումը չի համապատասխանում ընտրական հանձնաժողովի՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտականությանը:

Դիմողը չի պահանջել քաղաքական քննադատության բովանդակային գրաքննություն: Դիմողը պահանջել է գնահատել այնպիսի քարոզչական նյութեր և հրապարակային արտահայտություններ, որոնք իրենց բնույթով անցնում են քաղաքական քննադատության թույլատրելի սահմանները և ուղղված են ընդդիմադիր քաղաքական ուժերի նկատմամբ թշնամանքի, վախի և անհավասար տեղեկատվական միջավայրի ձևավորմանը: ԿԸՀ-ն այդ հարցը չի գնահատել կուտակային ազդեցության տեսանկյունից և էական բացասական ազդեցություն է թողել ընտրությունների վրա ընդհանուր առմամբ:

11.6. Քվեարկության և հաշվարկի փուլում արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատման ոչ ամբողջականությունը

ԿԸՀ-ն տեխնիկական սարքավորմամբ չընթերցված փաստաթղթերի և ստեղնաշարով սվայլների ներմուծման վերաբերյալ սահմանափակվել է այն փաստարկով, որ օրենքը նման հնարավորություն նախատեսում է: Սակայն օրենքով որևէ ընթացակարգի նախատեսված լինելը **չի վերացնում ԿԸՀ-ի պարտականությունը՝ գնահատելու այդ երևույթի ծավալը, հաճախականությունը, տարածվածությունը, ստուգելիությունը և ընտրական գործընթացի նկատմամբ վստահության վրա ազդեցությունը:**

Զինձառայողների քվեարկության կազմակերպման վերաբերյալ ԿԸՀ-ն հղում է կատարել զորամասային ցուցակների չիրապարակման կանոնին, սակայն չի պատասխանել դիմողի այն փաստարկներին, որոնք վերաբերում էին քվեարկության կազմակերպման փաստացի ընթացքին, ընտրողների զանգվածային փաստացի բերմանը նման ժամանակային հատվածում, տեղամասերում կուտակումներին, քվեարկության գաղտնիության և կամքի ազատ արտահայտման ռիսկերին:

11.7. Վարչական դատարանի ՎԴ/9915/05/26 գործով վճռի նշանակությունը

Թիվ ՎԴ/9915/05/26 վարչական գործով Վարչական դատարանի վճիռը վերաբերում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 11-ի թիվ 255-Ա որոշման իրավաչափությանը՝ թիվ 10/51 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու մասով: Դատարանը այդ գործով չի լուծել և չէր կարող լուծել Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված **թիվ 259-Ա որոշման հետ կապված սահմանադրական վեճը:**

Հետևաբար, ԿԸՀ-ն չէր կարող ՎԴ/9915/05/26 գործով վճռի առկայությունը ներկայացնել որպես ընտրությունների ընդհանուր արդյունքների օրինականության բավարար հիմնավորում:

Առանձին ընտրական տեղամասում վերաքվեարկություն նշանակելու իրավական մեխանիզմը կարգավորվում է Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 101-րդ հոդվածի 1-ին մասի համատեղ դրույթներով: Վերոնշյալ հոդվածների համատեղ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ԿԸՀ-ի մոտ վերաքվեարկություն նշանակելու պարտականություն, այլ ոչ հայեցողություն առաջանում է երեք պայմանների միաժամանակյա բավարարման դեպքում: Նախ՝ անհրաժեշտ է ընտրությունների ընթացքում Ընտրական օրենսգրքի պահանջների խախտման փաստի առկայություն: Երկրորդ՝ այդ խախտումները կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա: Եվ երրորդ՝ վերաքվեարկության միջոցով պետք է հնարավոր լինի շտկել խախտումների հետևանքները: «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վերաբերյալ ԿԸՀ-ի կողմից իրացված գործողությունները և լիազորությունները, դրանք համադրելով նախնական և ամփոփման փուլում ներկայացված ելակետային տվյալներին, պետք է նշել, որ հենց սեփական նախաձեռնությամբ ԿԸՀ-ի կողմից անվավեր են ճանաչվել Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի թիվ 10/51 և Սյունիքի մարզի Ագարակ համայնքի թիվ 35/65 ընտրատեղամասերի քվեարկության արդյունքները: Թիվ 10/51 ընտրատեղամասում «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ստացել էր 131 ձայն, իսկ թիվ 35/65 ընտրատեղամասում՝ 82 ձայն, որոնք անվավեր ճանաչվելու հետևանքով կուսակցությունը կորցրել է ընդհանուր առմամբ 213 ձայն:

Առկա տվյալների համաձայն՝ վերոնշյալ 213 ձայնի կորուստը վճռորոշ նշանակություն ունի «Բարգավաճ Հայաստան» կուսակցության համար օրենքով սահմանված 4% անցողիկ շեմը հաղթահարելու հարցում, հետևաբար խախտումները հատում են արդյունքների վրա ազդեցության շեմը: Ընդ որում, խախտումները վերաբերում են միայն երկու ընտրատեղամասերի, և չկան փաստական կամ իրավական հիմքեր պնդելու, որ այդ խախտումների հետևանքները հնարավոր չէ շտկել մասնակի վերաքվեարկությամբ: Ավելին, խախտումների հետևանքները շտկելու համար անհրաժեշտ է կազմակերպել վերաքվեարկություն հենց այն ընտրատեղամասերում, որտեղ արձանագրվել են խախտումները:

Կրկին պետք է նշել նաև, որ Վարչական դատարանի կողմից ուղիղ արձանագրվել էր. «Դատարանն արձանագրում է, որ այն սահմանված է Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն ամփոփելու վարույթում կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակներում, որով Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու է առանձին ընտրական տեղամասերում նշանակելու վերաքվեարկություն, ուստի տվյալ նորմով սահմանված լիազորությունը սույն դեպքում թեև կիրառելի չէ, սակայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովն Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների ամփոփման փուլում ստիպված է լինելու իր որոշմամբ (սույն գործով վիճարկվող) արձանագրված խախտումների լույսի ներքո ընդունել որոշում

առանձին ընտրական տեղամասում վերաքվեարկություն անցկացնելու մասին»: Նման իրավական և փաստական հիմքերի առկայության պայմաններում, որոշակիորեն նաև դատական ակտի կատարման պարտադիրության երաշխիքների պայմաններում ՀՀ ԿԸՀ-ի կողմից վեճի առարկա որոշմամբ արձանագրվել է պարզապես հետևյալը. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 12/13, 10/51 և 35/65 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչումը չի ազդում ընտրությունների արդյունքների վրա:»

11.7.1. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կողմից 10/51 և 35/65 ընտրական տեղամասերի արդյունքների անվավեր ճանաչումը և 213 ձայների կորուստը բացահայտում են ԿԸՀ-ի թիվ 258-Ա և թիվ 259-Ա որոշումների անօրինականությունը՝ 10/51, 35/65 և 12/13 տեղամասերի մասով

ԿԸՀ-ն, թեև իրավասություն չունի սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչելու 10/51 և 35/65 ընտրական տեղամասերի արդյունքները, այնուամենայնիվ կիրառել է Ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածը՝ անվավեր ճանաչելով այդ տեղամասերի քվեարկության արդյունքները:

2026 թվականի հունիսի 11-ի ԿԸՀ-ի թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումները, որոնցով անվավեր են ճանաչվել համապատասխանաբար թիվ 35/65 և թիվ 10/51 ընտրական տեղամասերի արդյունքները,

Նշված դրույթը ԿԸՀ-ին իրավունք է տալիս սեփական նախաձեռնությամբ և վեցամսյա ժամկետում վերանայել տարածքային ընտրական հանձնաժողովի ցանկացած որոշում: Սակայն նույն դրույթը պարունակում է հստակ և միանշանակ բացառություն. վերահսկողական վերանայումը չի կարող իրականացվել ընտրությունների արդյունքների հիման վրա ընդունված որոշումների նկատմամբ: Մինևույն ժամանակ, ԿԸՀ-ն եզրակացրել է, որ չեն եղել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների ընդհանուր արդյունքի վրա: Այդ եզրակացությունը տրամաբանորեն անհամատեղելի է ԿԸՀ-ի նախորդ գործողությունների հետ, քանի որ առանձին տեղամասերի արդյունքներն անվավեր ճանաչելով՝ ԿԸՀ-ն արդեն իսկ ընդունել է այդ տեղամասերում արձանագրված խախտումների էական բնույթը:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին որոշումն իր բնույթով հենց ընտրությունների արդյունքների հիման վրա ընդունված որոշում է: Այն ենթադրում է, որ քվեարկությունն արդեն տեղի է ունեցել, արդյունքները արձանագրվել են, և որ այդ արդյունքները գնահատվում են օրինականության տեսանկյունից: Հետևաբար, այն ամբողջությամբ ընդգրկվում է վերոհիշյալ բացառության շրջանակում: ԿԸՀ-ն, ըստ հոդված 48.1 հոդվածի 1-ին մասի, չունի վերահսկողական իրավասություն՝ սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչելու ընտրական տեղամասերի արդյունքները: Հետևաբար, Սահմանադրական

դատարանը պետք է բովանդակային գնահատական տա ԿԸՀ-ի նման որոշման իրավաչափությանը և հանգի այն հետևության, որ նման լիազորության լայն մեկնաբանմամբ և ընտրական գործընթացի վերահսկողության կանխատեսելիությունը խաթարող եղանակով իրականացումը չէր կարող չհանդիսանալ Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքների ակնհայտ խախտում: Ակնհայտ է նաև, որ եթե իրապես ԿԸՀ-ն օժտված է նման լիազորությամբ, ապա Սահմանադրական դատարանը պետք է գնահատի՝ որքանով է ողջամիտ այն իրավիճակը, երբ ընտրությունների արդյունքների ամփոփումից և նույն արդյունքների վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումից հետո ԿԸՀ-ն դեռևս վեցամսյա ժամկետում կարող է վերանայել տարածքային ընտրական հանձնաժողովի ցանկացած որոշում: Նման մոտեցումը ընտրական գործընթացը վերածում է անվերջանալի գործընթացի և առաջացնում հակասահմանադրական անորոշություն: Ավելին, պարզ չէ նաև, թե ինչու ԿԸՀ-ն այդ լիազորությունն իրականացրել է բացառապես երկու ընտրական տեղամասի նկատմամբ, մինչդեռ մյուս ընտրական տեղամասերի մասով, ինչպես մանրամասն ներկայացվել է սույն դիմումում և կից հավելվածներում, նույնաբնույթ կամ համադրելի հանգամանքների առկայության պայմաններում այն չի իրականացվել:

Տեղամասի արդյունքներն անվավեր ճանաչելու միակ պատշաճ իրավական մեխանիզմը, որը կարող էր կիրառվել միայն իրավասու անձի դիմումի հիման վրա և միայն իրավասու տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից՝ 48-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված խիստ ժամկետներում, չի կիրառվել ո՛չ 10/51, ո՛չ էլ 35/65 տեղամասերի նկատմամբ:

Ուշագրավ է, որ 213 ձայնի բացառումը թվաբանականորեն հանգեցրել է նրան, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը չի հաղթահարել 4%-ի շեմը:

Թիվ 254-Ա և թիվ 255-Ա որոշումների թվաբանական հետևանքները հստակ են, որոշիչ են և ամբողջությամբ բխում են հենց թիվ 258-Ա որոշման մեջ արձանագրված պաշտոնական տվյալներից:

Թիվ 258-Ա որոշման համաձայն՝

- Ընտրություններին մասնակցած անձանց ընդհանուր թիվը՝ 1,476,769
- Անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 16,210
- Վավեր քվեների ընդհանուր թիվը՝ 1,460,559
- Վավեր քվեների նկատմամբ կիրառված 4%-անոց խորհրդարանական շեմը՝ 58,422 ձայն
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վերջնական արձանագրված արդյունքը՝ 58,287 ձայն (վավեր քվեների 3.9907%-ը)
- 4% շեմից պակասությունը՝ 135 ձայն

Նույն որոշման համաձայն՝ թիվ 10/51 տեղամասում «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ստացել էր 131 ձայն, իսկ թիվ 35/65 տեղամասում՝ 82 ձայն: Երկու տեղամասերի արդյունքներն էլ անվավեր են ճանաչվել համապատասխանաբար թիվ 255-Ա և թիվ 254-Ա որոշումներով: Այսպիսով, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հաշվից հանվել է ընդհանուր առմամբ 213 ձայն: Եթե այդ 213 ձայները հաշվարկվեին, ինչպես պետք է լիներ անվավեր ճանաչման համար օրինական հիմքերի բացակայության պայմաններում, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը կստանար 58,500 ձայն, ինչը կկազմեր վավեր քվեների 4.0053%-ը՝ 78 ձայնով գերազանցելով 4% շեմը և Թիվ 259-Ա որոշմամբ տեղ կգտներ մանդատների բաշխման մեջ ԲՀԿ-ն «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընտրվել է և մանդատները բաշխվում են՝ 1) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - 61 մանդատ. 2) «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինք - 28 մանդատ . 3) Հայաստան դաշինք - 12 մանդատ:»:

Այդպիսով ԿԸՀ-ն՝

ա) չի կատարել 101-րդ հոդվածի 1-ին մաս իրեն վերապահված պարտադիր իրավական պարտականությունը,

բ) գործել է Վարչական դատարանի հստակ իրավական դիրքորոշմանը հակառակ,

գ) հանգել է այնպիսի արդյունքի, որը անհամատեղելի է իր իսկ որոշման մեջ արձանագրված փաստերի հետ:

դ) խախտել է որի Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները:

Եթե տեղամասային մակարդակում կազմակերպական խախտումները բավարար չափով լուրջ էին՝ այդ տեղամասերի արդյունքներն ամբողջությամբ անվավեր ճանաչելու համար, ապա ԿԸՀ-ն պարտավոր էր նույն վերլուծական չափանիշը կիրառել նաև Դաշինքի դիմումի նկատմամբ, որը փաստագրել էր նույն կամ ավելի մեծ ծավալի խախտումներ հարյուրավոր տեղամասերում, այլ ոչ թե այն մերժել՝ որևէ ազդեցության բացակայության մասին ընդհանրական եզրակացությամբ: Օրենսգրքի 101-րդ հոդվածի ընտրովի կիրառումը խաթարում է թիվ 259-Ա որոշման ներքին տրամաբանական ամբողջականությունը և ինքնին հաստատում է, որ ԿԸՀ-ն Դաշինքի դիմումի մասով չի կատարել այդ հոդվածով իրեն վերապահված պարտականությունը:

11.8. ԿԸՀ-ի եզրահանգման սահմանադրաիրավական անհամաչափությունը

Թիվ 259-Ա որոշման եզրահանգումը, ըստ որի ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա, չի բխում որոշմամբ իսկ արձանագրված փաստական նյութից: Թիվ 258-Ա որոշման մեջ որը

փոխկապակցված է Թիվ 259-Ա որոշման հետ նշվում են բազմաթիվ դիմումներ, վերահաշվարկներ, առանձին տեղամասերում արդյունքների անվավեր ճանաչում, վարչական դատարանի գործեր, տեսալսողական մեդիայի ոլորտում արձանագրված գնահատականներ և միջազգային դիտարկումներ, սակայն այդ հանգամանքները չեն ենթարկվել համակցված սահմանադրաիրավական գնահատման: Այսպիսով, ԿԸՀ-ն չի կատարել իր պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, քաղաքական ուժերի հավասարության և ընտրողների կամքի ազատ արտահայտման երաշխիքների արդյունավետ պաշտպանությունը: **Այդ բացթողումը ինքնուրույն հիմք է թիվ 259-Ա որոշումը վիճարկելու և Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու համար:** Ավելին՝ ԿԸՀ-ի կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվել այլ անձի փոխարեն քվեարկության դեպքերի բացահայտմանն ուղղված: Ընտրողների ստորագրված ցուցակների մատչելիությունը և դրա հրապարակումը ուղղված է նման դեպքերի բացահայտմանը: Այսպես՝ ընտրողների սկանավորված ցուցակները ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքներն սկսվելուց 24 ժամ հետո պաշտոնապես հրապարակվում և ներբեռնվում և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում (Ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-ին մաս): Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումն իրավասու անձը ներկայացնում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն:

Վերոգրյալից հետևում է, որ ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակումը Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասով նախատեսված շրջանակում ներառված անձանց (հատկապես՝ ընտրողներին) հնարավորություն է տալիս ծանոթանալ այդ ցուցակներին և այլ անձի փոխարեն քվեարկության դեպքերի հայտնաբերման դեպքում օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացնել համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով: Ակնհայտ է, որ նման դեպքերն առավելապես վերաբերում են այնպիսի իրավիճակների, երբ անձը գտնվելով ՀՀ տարածքից դուրս, սակայն իր տվյալների ներքո հայտնվում է ստորագրություն: 2026 թվականի հունիսի 7-ի ընտրողների ստորագրված ցուցակների մատչելիությունը սահմանափակված է եղել ՀՀ տարածքից դուրս գտնվող անձանց կողմից հասանելիության մասով, ինչը որևէ բացատրության կամ պարզաբանման չի արժանացել:

12. Արդյունավետ իրավական պաշտպանության բացակայությունը

Սույն գործով արձանագրված ընտրական խախտումների վերաբերյալ դիմողի կողմից օգտագործվել են օրենքով նախատեսված վարչական և դատական պաշտպանության միջոցները: Դիմողը ներկայացրել է դիմում-բողոքներ ընտրական հանձնաժողովներին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ինչպես նաև վարչական դատարան է ներկայացրել մի շարք հայցադիմումներ: Սակայն ներկայացված բողոքներն ու հայցադիմումները փաստացի չեն ենթարկվել ըստ էության արդյունավետ քննության:

Մի շարք դեպքերում ընտրական մարմինները սահմանափակվել են դիմումներն այլ մարմինների, այդ թվում՝ դատախազություն փոխանցելով կամ վարույթ չհարուցելով՝ առանց ներկայացված փաստական հանգամանքներին համակողմանի իրավական գնահատական տալու: Մասնավորապես՝ վարչական ռեսուրսի կիրառման վերաբերյալ դիմումների առնչությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիմումները վերահասցեագրել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ առանց իր վերահսկողական լիազորությունների լիարժեք իրականացման:

Միաժամանակ, դատական պաշտպանության միջոցները նույնպես չեն հանգեցրել ներկայացված խախտումների ըստ էության քննության:

Նախընտրական քարոզչության ընթացքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից արձանագրված բազմաթիվ խախտումների առնչությամբ դիմումներ են ներկայացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ վարչական վարույթների հարուցման և խախտումների արձանագրման պահանջով: Ներկայացված դիմումներին պատշաճ իրավական գործընթացներ չհաջորդելու հիմքով հայցադիմումներ են ներկայացվել ՀՀ վարչական դատարան:

12.1. Արելության խոսքի փարաժում և բռնության կոչեր.

Նիկոլ Փաշինյանի կողմից 09.05.2026 թվականին Կապան քաղաքում տեղի ունեցած հանրահավաքի ընթացքում, ինչպես նաև 18.05.2026թ.-ին ՋԼՄ-ներում տարածված տեսանյութում հնչեցվել են հրապարակային հայտարարություններ: Մասնավորապես, վերջինս օգտագործել էր հետևյալ արտահայտությունները՝ «հանցավոր մաֆիա», «քրեաօլիգարխիկ ռեժիմ», «պատերազմի եռագլուխ կուսակցություն», «չոքցնելու եմ սաղիդ», «հատ հատ մասկեքը կոխելու եմ համապատասխան տեղերդ», «չոքցնելու եմ, սատկացնելու եմ», «կալուզացուն էլ եմ կզցնելու, սատկացնելու եմ, չոքացնելու եմ»: Բացի այդ, «Ուժեղ Հայաստան» դաշինքին վերագրվել է մասնակցություն նախկին (2007, 2010, 2013թթ.) կռալիցիաներին և հանցագործություններին: 18.05.2026թ.-ին և ի լրումն՝ 21.05.2026թ.-ին, «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ

Վարդևանյանի կողմից դիմում-հաղորդումներ են ներկայացվել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից նախընտրական քարոզչության օրենքով սահմանված կարգի կոպիտ ու համակարգային խախտումների և վարչական ռեսուրսի անթույլատրելի օգտագործման փաստերով: Նշված դիմումների առնչությամբ ԿԸՀ-ում հարուցվել է վարչական վարույթ, որը եզրափակվել է 25.05.2026 թվականի թիվ 210-Ա որոշմամբ: Նշված որոշմամբ ԿԸՀ-ն եկել էր այն եզրահանգման, որ թեև կիրառված բառապաշարը նախընտրական քարոզչության շրջանակներում զսպվածության և քաղաքական կոռեկտության համատեքստում չէ, այնուամենայնիվ չի առաջացնում հոգեբանական, ֆիզիկական կամ այլ հարկադրանքի, բռնության կոչերի կամ բռնության սպառնալիքների ընկալում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 25.05.2026 թվականի թիվ 210-Ա որոշումը դատական կարգով վիճարկվել էր ՀՀ վարչական դատարանում՝ պահանջելով պարտավորեցնել ԿԸՀ-ին կիրառելու նախազգուշացում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և դրա նախընտրական ցուցակը գլխավորող թեկնածու Նիկոլ Փաշինյանի նկատմամբ:

Թիվ ՎԴ/8592/05/26 վարչական գործի շրջանակներում 31.05.2026 թվականին կայացված եզրափակիչ դատական ակտով դատարանը, մասնավորապես, արձանագրել էր. «...նախընտրական քարոզչության ընթացքում օգտագործված արտահայտությունները /սույն վարչական գործի շրջանակներում ներկայացված տեսանյութերում օգտագործված/ դուրս են քաղաքական քննադատության և ընդունելի քաղաքական բանավեճի սահմաններից,

- դրանք օբյեկտիվորեն կարող են ընկալվել այլ համատեքստում, քան ամրագրված է Պատասխանողի որոշմամբ,

- ՍԴՈ-1606 որոշմամբ ամրագրված չափանիշների համաձայն՝ նման խոսույթը համատեղելի չէ ազատ, խաղաղ և առողջ ընտրական միջավայրի հետ,

- Պատասխանողը չի իրականացրել ներկայացված արտահայտությունների բավարար և ամբողջական գնահատում»:

Այսինքն Դատարանի կողմից փաստացի արձանագրվել էր Նիկոլ Փաշինյանի, որպես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող պատգամավորի թեկնածուի, կողմից ընտրական միջավայրի հետ անհամատեղելի խոսույթի առկայությունը:

12.2. Վարչական ռեսուրսի չարաշահման մասով.

2026 թվականի մայիսի 28-ին մամուլում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հանդիսանալով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական

ցուցակը գլխավորող պատգամավորի թեկնածու և օրենքի ուժով ազատված լինելով ծառայողական պարտականությունների կատարումից, ՀՀ Կառավարության շենքում հրավիրել և անցկացրել է մամլո ասուլիս:

2026 թվականի հունիսի 2-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդևանյանի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել դիմում՝ վերոնշյալ փաստի վկայակոչմամբ և դրա համատեքստում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ վարչական վարույթ հարուցելու և «ՀՀ Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համապատասխան հոդվածների խախտման հիմքով նախազգուշացում կիրառելու պահանջով: Նշված դիմումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վերահասցեագրվել էր ՀՀ գլխավոր դատախազությանը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղղված դիմումը վերահասցեագրվել է ՀՀ գլխավոր դատախազությանը՝ դրանում հնարավոր քրեական բնույթի հատկանիշների բացահայտման նպատակով, «Ուժեղ Հայաստան» դաշինքի կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում: Նշված հայցադիմումով Դաշինքը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ նախազգուշացում չկիրառելու ձևով դրսևորված անգործությունը:

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Ռոբերտ Մաքեյան) թիվ ՎԴ/9260/05/26 վարչական գործով 06.06.2026 թվականի եզրափակիչ դատական ակտով մերժել էր ներկայացված հայցադիմումը և նշել. « (...) Սույն պարագայում Հայցվորի պահանջն, ըստ էության, ուղղված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից օրենքով նախատեսված այլընտրանքային միջոցներից հենց մեկը՝ նախազգուշացումը, չընտրելը ոչ իրավաչափ ճանաչելուն, որպիսի պահանջի բավարարումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե գործով հաստատվի, որ առկա է նախընտրական քարոզչության կարգի այնպիսի խախտում, որը թույլ է տրվել հենց համապատասխան թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից, որ այդ խախտումը կամ դրա հետևանքները ենթակա են վերացման, որ իրավասու մարմիններին դիմելը տվյալ իրավիճակում չի կարող ապահովել օրենքով հետապնդվող նպատակի իրականացումը, և որ նախազգուշացումը տվյալ փաստական պայմաններում միակ հնարավոր իրավաչափ ու արդյունավետ միջոցն է: Միայն այդպիսի բացառիկ պայմաններում վարչական մարմնի հայեցողությունը կարող է համարվել սահմանափակված այն աստիճանի, որ դատարանը կարողանա ոչ իրավաչափ ճանաչել դրսևորած անգործությունը:

Մինչդեռ գործի նյութերով չի հիմնավորվում, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայեցողությունը տվյալ դեպքում զրոյացված է, և որ օրենքով նախատեսված այլընտրանքային

միջոցներից միայն նախազգուշացումն է հանդիսացել իրավաչափ լուծում: Հայցվորի ներկայացրած փաստարկներն, ըստ էության, վերաբերում են այն դիրքորոշմանը, որ վարչական ռեսուրսի օգտագործման փաստի առկայության պայմաններում Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է նախընտրեր նախազգուշացման կիրառումը, սակայն այդպիսի փաստարկը բավարար չէ հաստատելու, որ վարչական մարմինը սխալ տարբերակ է ընտրել»:

Նշված դատական ակտով, Դատարանը գնահատման առարկա չդարձնելով վարչական ռեսուրսի չարաշահման փաստի առկայությունը կամ բացակայությունը, հաստատված է համարել այն հանգամանքը, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավաչափորեն է իրականացրել իրեն վերապահված հայեցողական լիազորությունը: Այսպես, ՎԴ/9916/05/26, ՎԴ/9918/05/26 և ՎԴ/9920/05/26 վարչական գործերով դատարանը հայցադիմումների ընդունումը մերժել է՝ վկայակոչելով ընտրական վեճերի քննության հատուկ ժամկետների պահպանման անհնարինությունը:

Իսկ ՎԴ/9917/05/26 և ՎԴ/9919/05/26 վարչական գործերով հայցադիմումները վերադարձվել են հիմնականում ձևական բնույթի պատճառաբանություններով՝ կապված հայցային պահանջների ձևակերպման հետ:

Այսինքն մի շարք ընտրախախտումների վերաբերյալ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից իր իրավունքների պաշտպանության համար հայցադիմումներ են ներկայացվել ՀՀ Վարչական դատարան, որոնց հիման վրա հարուցվել են թիվ ՎԴ/9921/05/26, ՎԴ/9920/05/26, ՎԴ/9919/05/26, ՎԴ/9918/05/26, ՎԴ/9917/05/26, ՎԴ/9916/05/26 վարչական գործերը, որոնք, սակայն, քննության չեն առնվել ՀՀ Վարչական դատարանի կողմից. դրանց մի մասը վերադարձվել է, այնուհետև կրկին ներկայացվել՝ թերությունները շտկված վիճակում, սակայն կրկին ներկայացված հայցադիմումները վարույթ ընդունելը մերժվել է: Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին թվով երեք որոշումներ (թիվ ՎԴ/9920/05/26, թիվ ՎԴ/9918/05/26 և թիվ ՎԴ/9916/05/26) բողոքարկվել են ՀՀ վերաքննիչ վարչական դատարան, դրանք ընդունվել են վարույթ, սակայն առկա չէ դատական ակտ:

Հատկանշական է, որ նշված գործերից որևէ մեկով Վարչական դատարանը չի իրականացրել ներկայացված ընտրական խախտումների ըստ էության քննություն և չի գնահատել դրանց ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա, ինչը հետևաբար կարող է և պետք է հաղթահարվի այլևս սահմանադրական իրավական վեճի շրջանակներում:

Արդյունքում ստեղծվել է իրավիճակ, երբ ընտրական խախտումների վերաբերյալ ներկայացված պնդումները չեն ենթարկվել արդյունավետ քննության ո՛չ վարչական, ո՛չ դատական կարգով, ինչի հետևանքով դիմումատու փաստացի գրկվել է իր իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից, ինչը ևս

առաջացրել է ընտրությունների վերաբերյալ սառսասաղրական դատարանի կողմից գնահատման անհրաժեշտություն:

13. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով երաշխավորված ազատ ընտրությունների իրավունքի խախտումը.

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի և դրան կից Թիվ 1 արձանագրության մասնակից պետություն: Արձանագրության 3-րդ հոդվածը երաշխավորում է ազատ ընտրությունների իրավունքը՝ այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են ժողովրդի կամքի ազատ արտահայտումը օրենսդիր մարմնի ձևավորման հարցում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հետևողականորեն արձանագրել է, որ այս դրույթը ոչ միայն պետությունների միջև պարտավորություն է սահմանում, այլ ամրագրում է անհատական իրավունքներ, ներառյալ՝ ընտրելու և ընտրվելու իրավունքը: Որպես պետական մարմին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անմիջականորեն կապված է այդ երաշխիքով, ուստի դրա գործողություններն ու անգործությունը կարող են առաջացնել Հայաստանի Հանրապետության պատասխանատվությունը Կոնվենցիայի շրջանակներում: Հանձնաժողովը պարտավոր է Ընտրական օրենսգիրքը մեկնաբանել և կիրառել Կոնվենցիային և Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան:

Ազատ ընտրությունների իրավունքը չի սահմանափակվում միայն քվեարկության և ձայների հաշվարկման գործընթացով: Այն պետության վրա դնում է դրական պարտականություն՝ ստեղծելու ընտրական հարցերով անհատական բողոքների և դիմումների քննության արդյունավետ համակարգ: Նման համակարգի առկայությունը ազատ և արդար ընտրությունների հիմնարար երաշխիքներից է, քանի որ հակառակ դեպքում Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները կդառնային պատրանքային: Հետևաբար, ընտրական լուրջ խախտումների վերաբերյալ հիմնավոր բողոքները պետք է ենթարկվեն իրական և ըստ էության քննության, այլ ոչ թե ձևական կամ մակերեսային արձագանքի:

«*Namat Aliyev v. Azerbaijan*» գործով Եվրոպական դատարանը արձանագրել է Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում այն պատճառով, որ ընտրական հանձնաժողովներն ու դատարանները լուրջ և հիմնավոր բողոքները քննության էին առել կամայական և չպատճառաբանված ձևով, իսկ վերադաս ընտրական հանձնաժողովը պարզապես փոխանցել էր դրանք կամ ընդհանրապես չէր քննել:

Նշված պահանջները անմիջականորեն կիրառելի են սույն գործում: Վարչական ռեսուրսների չարաշահման և իրավապահ մարմինների ապօրինի միջամտության վերաբերյալ բազմակի և հիմնավորված բողոքների պայմաններում Հանձնաժողովը դրանք ըստ էության չի քննել՝ սահմանափակվելով դիմումները Գլխավոր

դատախազություն ուղարկելով կամ ընդհանրապես որևէ գործողություն չկատարելով: Սա հենց այն արդյունավետ քննությունից հրաժարվելն է, որը Եվրոպական դատարանը դատապարտել է:

Ընտրությունների նկատմամբ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինը ընտրությունների արդյունքների ամբողջականությանն առնչվող պնդումները դիտարկել է որպես այլ մարմիններին փոխանցման ենթակա հարցեր, այլ ոչ թե որպես լուծման ենթակա վեճեր: Բողոքի պարզապես փոխանցումը մեկ այլ մարմնի չի կատարում Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածից բխող դրական պարտականությունը, այլ հակառակը՝ խաթարում է դրա իրականացումը:

Եվրոպական դատարանը հենց այսպիսի վարքագիծն է դատապարտել «*Namat Aliyev v. Azerbaijan*» և «*Gahramanli and Others v. Azerbaijan*» գործերով:

«Ուժեղ Հայաստան» դաշինքի հիմնավորված բողոքների փոխանցումը Գլխավոր դատախազություն՝ առանց ըստ էության քննության, էապես չի տարբերվում այն վարքագծից, որը նշված գործերով ճանաչվել է Կոնվենցիայի խախտում:

Նույն չափանիշները կիրառելի են նաև ձայների հաշվարկման, ամփոփման և վերահաշվարկների ընթացքում արձանագրված խախտումների նկատմամբ: Եվրոպական դատարանը նշել է, որ ձայների հաշվարկը, արձանագրումը և ամփոփումը ընտրական գործընթացի անբաժանելի մասն են և պետք է ուղեկցվեն հստակ ընթացակարգային երաշխիքներով, թափանցիկությամբ և արդյունավետ վերահսկողությամբ:

Մոտավորապես 637 վերահաշվարկված ընտրատեղամասերում բացահայտված անհամապատասխանությունները, ինչպես նաև չվերահաշվարկված տեղամասերում նմանատիպ խախտումների առկայությունը պարզելուց հրաժարվելը, վկայում են հենց այն թերի վերահսկողության մասին, որն արգելվում է Կոնվենցիայով:

ՎԴ/9260/05/26 վարչական գործով դատարանի մոտեցումը, որով արձանագրվել է խախտման օբյեկտիվ գոյությունը, սակայն հրաժարվել է դրա ըստ էության քննությունից՝ հղում անելով Հանձնաժողովի հայեցողական լիազորություններին, վերարտադրում է այն նույն թերությունը, որը Եվրոպական դատարանը քննադատել է «*Davydov and Others v. Russia*» գործում:

Ընտրությունների անցկացման և արդյունքների վերաբերյալ բողոքները քննող մարմինը պետք է ապահովի բավարար երաշխիքներ կամայականությունից պաշտպանվելու համար: Եվրոպական դատարանի Մեծ պալատը սահմանել է երեք կուտակային պահանջ՝ բողոքները պետք է քննվեն անաչառության բավարար երաշխիքներ ապահովող մարմնի կողմից, այդ մարմնի հայեցողական լիազորությունները պետք է հստակ սահմանափակված լինեն օրենքով, իսկ ընթացակարգը պետք է երաշխավորի արդար, օբյեկտիվ և բավարար չափով պատճառաբանված որոշում:

Եվրոպական դատարանը նման եզրակացության է հանգել նաև այն դեպքերում, երբ ընտրական վեճերի լուծման համար բացակայել է անաչառ մարմին կամ հստակ ընթացակարգ, ինչպես նաև երբ ընտրական հանձնաժողովները պատշաճ կերպով չեն արձագանքել կեղծիքների վերաբերյալ լուրջ և հիմնավոր պնդումներին:

Այս չափանիշների լույսի ներքո Հանձնաժողովի կողմից իր հայեցողական լիազորություններին հղում կատարելով անգործությունը հիմնավորելը, ինչպես նաև դատական վերահսկողության սահմանափակ բնույթը, դիմողին զրկել են այնպիսի մարմնից, որը կարող էր նրա պնդումները ենթարկել արդյունավետ և անաչառ քննության:

Շեռլաբար, բողոքների արդյունավետ քննություն չիրականացնելը ոչ միայն ներպետական ընթացակարգի թերություն է, այլ ինքնին հանդիսանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների խախտում:

Այս խախտումն ինքնուրույն և անկախ հիմքով ամրապնդում է այն եզրակացությունը, որ ժողովրդի կամքի ազատ արտահայտման համար անհրաժեշտ պայմանները չեն ապահովվել, և ընտրությունների արդյունքները ենթակա են անվավեր ճանաչման:

Կոնվենցիային համապատասխան ներպետական իրավունքը մեկնաբանելու պարտականությունից բխում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր էր ՀՀ Ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածով նախատեսված իր լիազորություններն իրականացնել այնպես, որ լիարժեք ապահովվեին վերոնշյալ չափանիշները:

Այսինքն ներկայացված փաստերը, հիմքերը և հիմնավորումները ընտրախախտումների վերաբերյալ բավարար են պնդելու համար, որ դրանց մի մասը եղել է կազմակերպված, մի մասը եղել է զանգվածային, մի մասը եղել է կրկնվող, իսկ որոշները կրել են պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, իսկ դրա հաղթահարման նպատակով Սահմանադրական դատարանը պետք է գնահատելով դրանք որոշի իր լիազորությունների հնարավոր իրացման առավել արդյունավետ մոտեցումը և կառուցակարգը:

14. Պահանջ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ, 7-րդ, 48-րդ, 168-րդ հոդվածի 5-րդ կետի, 169-րդ հոդվածի 1-

ին մասի 11-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի, ինչպես նաև «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածի դրույթները՝ խնդրում ենք.

անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի «**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին**» թիվ 259-Ա որոշումը և

- 1) **անվավեր ճանաչել** ընտրությունների արդյունքները,
կամ,
- 2) անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները և **սահմանել մանդատների բաշխման կարգը,**
կամ
- 3) **նշանակել** ընտրությունների երկրորդ փուլ:

Կից ներկայացվում է՝

- 1) Լիազորագիրը,
- 2) փաստաբանական գործունեության արտոնագրի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները;
- 3) Հավելված 1՝ որոշ արձանագրված ընտրախախտումների վերաբերյալ, ինչպես նաև էլեկտրոնային կրիչը:
- 4) Հավելված 2՝ որոշ արձանագրված ընտրախախտումների վերաբերյալ դատական ակտերի առնչությամբ:
- 5) Հավելված 3՝ քվեարկության օրը ներկայացված որոշ արձանագրված ընտրախախտումների վերաբերյալ, ինչպես նաև էլեկտրոնային կրիչը:
- 6) Հավելված 4՝ որոշ արձանագրված ընտրախախտումների վերաբերյալ էլեկտրոնային կրիչը:
- 7) Հավելված 5՝ որոշ տվյալների մասին՝ ընտրության արդյունքների ազդեցության տեսանկյունից:

Հարգանքով՝

«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ

ներկայացուցիչ՝



Արամ Վարդևանյան, ի.գ.թ.